

891.29

9-89

ՍՍՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՐԱՎՈՐ ՊԱՅՔԱՐԸ

★

891.99
7-95

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1937

01 JAN 2009

19 NOV 2011

ՍՄԲԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

891.99
9-89 *ար*

ԴԱՐԱՎՈՐ ՊԱՅՔԱՐԸ



2011

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԶՄԻՏԻՆ
ԵՐԵՎԱՆ 1937

26 MAR 2013

26450

Մարտի 26-ի Ս. Փարսադանյան

1220
38

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

1

Մի ընդարձակ հարթության վրա, վարդաբլուր և
կուրթան գյուղերի միջև, ձորափին փռված են կտեվանի
խնձորի, դեղձի և այլ պտղատու ծառերի ընդարձակ այ-
գիները:

Այգիների մեջ բարձրանում են հոյակապ վարդա-
գուլն ու ձերմակ բազմահարկ տներ, իսկ այգիների
պարիսպներից դուրս ձգվում է մի լայն շոստ, վորտե-
ղից ամեն ուր առավոտ-լերեկո ավտոներն ու կառքերը
փոշու ամպ բարձրացնելով, Քոլազերան կայարանից սլա-
նում են Զալալ-Ողլի ավանը կամ վերադառնում:

Կտեվանից դեպի արևելք է ընկած կուրթան գյուղը,
վորն ակնդետ հայացքով նայում է իր վորտերի տակ ըն-
կած Հնեվանքի այգեպատ անդնդախոր ձորեղին և հեռու-
ներում ձգված կապուտակ լեռների շարքերին, իսկ կտե-
վանի արևմտյան կողմը տարածվում են վարդաբլուր
գյուղի ընդարձակ դաշտերը, ապա ընկած է վարդա-
բլուր գյուղը՝ փռված համանուն գեղանիստ բլրի տակին,
վորի մոտով հոսում է Գյարգյառ չայը, ապա գենը նորից
դաշտեր, մարգագետիններ, Գյուլազարակի մշտադալար
սոճիների հովիտն ծործորներով ու դարավանդներով,
աղեղնաձև ձգված անտառապատ լեռներ՝ Դվալ և Թոդառ
հսկա գագաթներով:

Կուրթանի, կտեվանի և վարդաբլուրի հյուսիսային
կողմն ընկած են դաշտեր, վորոնց կտրում է Զգրաշենի
ձորը, ուր մի ժամանակ վխտում էին լերեները, ապրում
էին արջերը, այծյամները և պարարտանում վայրի խո-

գերը: Դրանից ել այն կողմ նորից ձգվում են հարթութուններ, իսկ այնուհետև լեւնում են Մղարթի, Կողեսի, Հովանդարայի, Ագարակի, Ուռուտի ու Լեջանի լեռների շարքերը:

Հարավային կողմում ընկած է Գյարգլառ գետի ձորակը, նրանից այն կողմը՝ Ծառերգը, ավելի հեռու՝ ծործորներ, դարավանդներ, մարգագետիններ, ընտիր վաբեւհողեր, վորոնց թիկունքում ձգվում է Բերդի անտառապատ լեռնաշղթան՝ գլուխն ամպերով փաթաթած բարձրաբերձ Ղանձլասարով, վորն իշխում է իր վտաքերի տակ ընկած անտառապատ ձորերին, կանաչագեղ բլուրներին և զմրուխտապատ ընդարձակ ու լայն անծիր դաշտերին:

Այդ շուրջպարի բռնած լեռների մեջ, ի հարկե, ամենից գեղեցիկը Կտեվանի հարավ-արևմտյան կողմի հարթութունների մեջ բարձրացող Վարդաբլուր լեռն է, վորին տեղացիները Սուրբ Սարգսի բլուր անուն են տալիս՝ Սուրբ Սարգսի ուխտատեղին այնտեղ լինելու պատճառով:

Այգիների մեջ բարձրանում է մի լեկեղեցի: Նա փոքր է, պտերի դրսի քարերը գողացված են կամ թափթփված: Նրա մոտ կան հին գերեզմանաքարեր, անտաշ և անգիր: Ծորտերի գերեզմաններն են դրանք, վորոնց անունը վոչ վոք չի հիշում:

— Յեկեղեցին ել ճորտերին է լեղել, — ասում են Վարդաբլուր և Կուրթան գլուղերի ատամ գցած զառամյալ ծերունիները, — այնտեղ են աղոթել ճորտերը: Նրանք ապրել են կարիքի և զրկանքի մեջ, տերերի համար սերունդներով աշխատել, աղոթել և դարձյալ սերունդներով գերեզման իջել:

Այդպես են ապրել ճորտերը: Սակայն այդպես չեն ապրել ճորտատեր թավադները: Նրանք նստել են իրենց

հինավուրց դղյակում, սքանչացել բնության հրաշալիքներով, հյուր գնացել իրենցից հարուստ կալվածատիրոջը, վոր սի գնացել նրա մթին ձորերն ու անտառները, գիշերել այնտեղ, տեսել ագլաբացը, հրդեհով վառվող արշալույսը, արևի ծագումը, ճերմակ մշուշների բարձրանալը քնից լեւնող լեռնաշխարհի զարթոնքը. նրանք տեսել են այդ բոլորը, սքանչացել հոգով, իրենց բազմաթիվ ճորտ ծառաներով թնդացրել են սար ու ձոր:

Նրանք նստելուց հետո, վորսասարից սլացել են դեպի հովիտներն իջնող լեղջերուներն ու լեղնիկները և կամ շամբերում պարարտացող վայրի խոգերը: Սակայն այդ մեծ ժանիքավոր վարագները դիմադրել են նրանց, կովի դուրս լեկել վորսի շների վոհմակների դեմ, շատերին դիաթավալ գետին գլորել և իրենք ել վորսորդների մահացու գնդակներից ընկել:

Հպարտացել են թավադ վորսորդները, մեծամեծ խնջուկներ սարքել, գինովցել, պարել, ըմբշամարտի դուրս լեկել և կամ խոյեր դուրս բերել իրար դեմ, կռվացրել:

Հյուրերը այսպես հյուրսիրվել են մեծ թավադի մոտ և վերադարձել իրենց կալվածքը:

2

Գեղեցիկ եր այդ կալվածքը, թեև փոքր: Նրա տերը մի մարդ եր մուսլաղեմ և բազում ճորտերի տեր: Վոչ վոք չունեւր — վոչ կին, վոչ աղջիկ, վոչ արու զավակ և վոչ ազգական: Նա տոչորվում եր վշտից: Ժառանգ չունենալը մաշում եր նրան և մտածմունքների ծովը գըցում: Նա խոստացավ գեղեցիկ ալրիներից մեկին՝ զավակների վորդեգրել, միայն թե նա իր հետ ամուսնանա:

Բայց գեղեցիկ ալրին մերժեց նրա առաջարկը:

Ադան մուսլավեց և շատ հուզվեց:

Նրա վիշտը թեթևացավ միայն այն ժամանակ, յերբ հրաման յեկավ վերևից — Ալեքսանդր յերկրորդ ցարից, վոր ճորտերն ազատագրվում են: Աղան ժպտաց և կատարեց նրա հրամանը: Նա ցանկացավ վորդեգրել իր ճորտերի զավակներից մեկն ու մեկին, բայց նրանց ծնողներն ել հրաժարվեցին այդ բարիքից և հեռացան աշխարհի տարբեր կողմերի վրա:

Մնաց աղան իր գլխակում մենակ: Նա մտածեց, շատ մտածեց և վորոշեց վաճառել իր կալվածքը, գնալ սարերի այն կողմը — իր հեռավոր ազգականների մոտ և այնտեղ անցկացնել ծերության օրերը:

Նա կանչեց իր մոտ Կուրթան և Վարդաբլուր գյուղերի յերևելիներին — հասակավոր և պատկառելի ծերերին և հայտնեց իր միտքը:

Ծերերը խոսեցին, սակարկեցին և վերադարձան իրենց գյուղերը:

Հավաքվեցին գյուղացիները, մտածեցին և գտան, վոր կալվածատիրոջ հողերը գնելն ավելորդ ե: Աղան կըմեռնի և հողերն իրենց կմնան: Աղան կրկին նրանց կանչեց իր մոտ, բայց ծերունիները համառեցին և մերժեցին նրա առաջարկը:

Աղան մտածեց, շատ մտածեց և գտավ մի հարուստ մարդ, վորն ուներ մեծ յեղբայրներ՝ նահանգապետին մոտիկ մարդիկ: Նա կանչեց այդ մարդուն, կալվածքը վաճառեց նրան և գնաց բարձր ու կապույտ սարերի այն կողմը:

Գյուղացիներն իմացան այս և շատ ու շատ վշտացան:

Վշտացան սաստիկ Կուրթան և Վարդաբլուր գյուղերի ծերունիները, մոռացվեցին, լցրին իրենց մեծ չիբուխները, ամպի նման ծուխ արձակեցին իրենց ուռնիներից և խորհրդավոր կերպով գլուխները շարժեցին:

Յեկավ նոր աղան, տեր դարձավ արգավանդ հողերին և փոքրիկ կալվածքին: Նա նստեց գլխակում, աչքը գցեց դեմի անտառապատ լեռներին, ծործորներին, դարավանդներին, կալվածքի և լեռների մեջ ընկած հարթության վրա բարձրացող բլրին և ցանկացավ այդ բոլորի տերը լինել: Նա մտածեց, շատ մտածեց և գտավ հնարը: Իր մոտ կանչեց հարևան գյուղերից հարուստ և չարակամ մարդկանց, աղայական պատվերներ ավեց նրանց, մտերմացավ նրանց հետ և բարեկամական կապեր հաստատեց:

Խմեցին այդ մարդիկ աղայի լի ու ճոխ սեղանից, բաժակները բարձրացրին, խմեցին աղայի կենացը, յերդվեցին, վոր չեն դավաճանի Մուքել աղայի աղ ու հացին և հազար անգամ համբուրվեցին նենդ ու չար աղայի հետ:

Հրձվեց աղան, ավելի խմեց, գինովցավ, պարեց իր բարեկամների հետ, կրկին բաժակները շրխացրեց ու յերգեց:

Յերգեցին նաև աղայի նոր բարեկամները, խռպոտ ձայնով ձայնակեցեցին նրան, գովեցին աղայի արժանիքները, գեղեցկութունը և խմեցին նրա կենացը: Մեծ յեղավ աղայի հրձվանքը: Նա նստեցրեց յուր մոտ Կուրթանցի կավատ Վոսկանին և շնչաց նրա ականջին.

— Ասա ձեր գյուղի ծերերին, վոր Ծառբերդը փոխում եմ կալվածքիս կից ձեր հողերի հետ:

— Հրաման քեզ, աղա, — պատասխանեց Վոսկանը և նայեց աղայի խորամանկ աչքերին:

Ժպտաց աղան, քահ-քահ ծիծաղեց և նորից շնչաց.

— Բեր, բեր անդին Մարանին, թաուլան Սոփուին, գյոզալ Գյարանին և գեղեցիկներից գեղեցիկ իմ Վարդիշաղին:

— Հրաման քեզ, աղա, — շնչաց կավատը և արագ գնաց կանանց բերելու:

Խուժըը հրհռաց, և աղան քահ-քահ նորից ծիծաղեց։
Յերգեցին նրանք վերստին, բաժակներ փշրեցին և
ապա սաստիկ հարբեցին։

— Վերցրեք բաժակները, — փորձեց աղան։

— Խմենք մենք նորից միմյանց կենացները։

Հրաման քեզ աղա, քո ջանին ղուրբան, ապրած թող
կենա քեզ նման աղան։

Ասացին նրանք, խմեցին նորից ու ճամբա ընկան՝
միշտ գոհ աղալից։ Մնացին Թաթոն, Մովսեսը և Ավե-
տիք աղան։

Դուռը բացվեց և կանաչք ներս մտան խմբով։ Հյուրերն
ապշեցին, մի պահ զարմացան, բայց հանգիստ կարգով
բազմեցին։ Ու նորից հնչեց նվագը անուշ, հոսեց ալ գի-
նին, նորից կենացներ խմեցին և տաք համբույրներ հա-
ջորդեցին։ Աղան գինովցած, սաստիկ հղիացած իր ձայնը
գլեց։ Հյուրերի խումբը մեծ հյուրընկալի ձայնից հմայված
ձևացավ և պատկառանքով լռեց։

Յերգեց աղան ու չեւով տեղից, պարեց, պարեց,
պտույտներ գործեց՝ ինչպես կովի չեւած ըմբիշ։

Պարեցին նաև մյուսներն աղալի հետ և յերգեցին
խլածայն մի չերգ։

3

Լույսը բացվեց և չերկինքը վառեց իր վոսկե խա-
րուկները։ Մանիշակագույն լեռների կատարները
հրդեհվեցին բոցերով։ Թռչուններն արթնացան բներում
և սկսեցին ձախրել վոսկե լույսերի մեջ՝ ներբողելով
փթթինազարդ գարունը։

Վոչխարի ճերմակ հոտերը և նախիրները սար բարձրա-
ցան։ Արևի հրեղեն գունդը չեւով հրդեհով վառված լեռների
թիկունքից և իր վոսկե վարսերը փռեց զմրուխտյա
դաշտերի, անտառապատ լեռների, դալարագեղ հովիտների
և կապուտակ գետերի վրա՝ արոտներից վեր բարձրաց-

նելով ճերմակ մշուշները և իր զվարթուն դեմքը ցույց
տալով արար աշխարհին։

Յեկան հասակավոր գլուղացիները, խոսեցին չար ու
նենգ աղալի և նրա հետ նրա ուզած պայմանը կապեցին։

Աղան խարդախեց և պայմանագիրը կեղծեց։

Զիմացան այս՝ հասակավոր և անգրագետ Կուրթանի
ծերերը։ Նրանք իմացան հետո, չերբ արդեն ամեն ինչ
վերջացել էր։ Նրանք շատ հուզվեցին և դառնությամբ
լցվեց նրանց ծեր հոգին։

Աղան ագահ էր, շատ ագահ։ Նա բռնված էր սարերը,
անտառները գրավելու մարմաջով։ Նա գիշերները չեր
քնում։ Մտածում և յերազում էր դրանց մասին։ Նա
Վարդաբլուրից կանչեց գրագիր Մովսեսին և Կուրթանից
կավատ Վոսկանին։ Նա նրանց խոստացավ վոսկի ու
արծաթ, միայն թե բերեն հողամատյաններն այդ չերկու
գլուղի։ Կատարեցին կամքն աղալի այդ չերկու գլուղի
դավաճանները։ Աղան կատարեց իր խոստումը, տվեց
նրանց առատ վոսկի ու արծաթ և նրանց հետ միասին
մինևուշն բաժակից թունդ ողի խմեց։

Աղան գինովցավ, խարուկ վառեց և հողամատյան-
ները նրա մեջ նետեց։

Հափեց հրդեհը հողամատյանները և աղան քահ-քահ
ծիծաղեց։ Նա գիր գրեց բարձր Պետերբուրգ՝ գոռոզ մեծ
ցարին, գանգատվեց անճար չերկու գլուղերից, թե նրանք
տիրել են նախկին աղալից գնած իր հողերը, վարե-
լահողերը ձեռքիցը խլել, մեծ անտառներին, խուլ ծը-
մակներին, բարձր սարերին գոռով տիրացել։

Նա կանչեց իր մոտ Ավետիք աղալին, տվեց նրան
առատ վոսկի ու արծաթ և ասաց. — շրջիր դավառում,
գլուղից-գլուղ, խոստացիր նրանց մեծերին վոսկի,
գետնագործ չուխա և անգրավարտիկ, արծաթե գոտի,
ծիլ-ծիլ յափուռնջի, բուխարու փափախ, ով ինչ ել ուղի,
տուր, ասա՝ թող գան։ Գան և վկայեն վերևի մարդկանց,

վոր իմ պահանջը իզուր չեմ արել, վոր իմ հողերը ի՞նչու չեն խլել:

—Իմ աչքիս վրա, — ասաց Ավետիք աղան, — նժույգը թամբեց, ճանապարհ ընկավ:

Շրջեցջ երկար, գլուղից-գլուղ, գտավ մեծ մարդկանց՝ հարուստ, մեծատուն: Խոսեց նրանց հետ, նվերներ տվեց, խոստումներ արավ, պարտքը կատարեց ու վերադարձավ արածի մասին աղային հայտնեց:

Հրճվեց աղան, խնճուղքներ սարքեց, նոր բարեկամներով թիկունքն ամրացրեց: Այս բանը լսեցին գլուղացիները, զայրացան սաստիկ, իրար հայտնեցին՝ հավաքվեն մի տեղ, վոր խորհուրդ անեն: Յեվ հավաքվեցին Վարդաբլուրի և Կուրթանի հսկա պապերը — գավազանակիր այդ ծերունիները:

— Վոչինչ չի անի, — ասացին նրանք: — Աղան խաբուժ է, արդարությունը մեր կողմն է և մենք իշխանության հետ հարցը կպարզենք:

Այսպես խոսեցին, վիճեցին, չիբուխներից կապույտ ծուխ արծակեցին և գնացին ցրվեցին իրենց տները:

4

Մուքել աղան շատ եր վոգեվորված: Նա նման եր տենդով բռնված հիվանդի: Նա նամակներ եր գրում եջմիածին՝ գավառապետ լեղբորը — Յեգոր աղային — դրամ պահանջում և խորհուրդներ հարցնում:

Յեգոր աղան կատարում եր լեղբոր պահանջը և ինքն ել իր հերթին նամակներ գրում շրջանի պրիստավին, գավառապետին, նահանգապետին: Մուքել աղան դադար չունեք: Յեղբոր ուղարկած նվերներն ու վոսկին հոսում ելին շրջանի մեծատուների տները, նրանց սրտերը լցնում անսահման բերկրանքով և սեր զարթեցնում դեպի Մուքել աղան: Սակայն կային մեծ նահապետական ընտանիքներ, վորոնց նահապետները չէին գալթակղվում դեղին վոսկի-

ներով: Բայց այդպիսիների թիվը շատ չեր: Նրանց գլուխ եր կանգնած ծերունի Պողոսը:

Ծերունի Պողոսը, — մտածում եր Մուքել աղան և զայրույթով եր լցվում նրա հոգին դեպի նա. — չե՞ վոր բոլորը ճանաչում են նրան և հավատում նրա անկեղծությանը: Քահանաներին հեշտ է գրավելը, բավական է, վոր լեղբայրը գրի կաթողիկոսին և վեհափառը մի աննշան գրություն ուղարկի գործակալին և նա ել իր հերթին՝ շրջանի բոլոր քահանաներին, բայց ծերունի Պողոսին գրավելը հեշտ չէ: Ձե՞ վոր նա իշխում է լեռնու գլուղի մեծ գերդաստանների և փոքր տնտեսատեր տղամարդկանց մտքերի վրա: Նրան պետք է կաշառել, ինչ ել ուզի՝ տալ, վորպեսզի այդ կույր ամբոխն անգլուխ մնա: Բավական է այդ՝ և ամեն ինչ վերջացած կլինի: Այսպես լեռնար մտածեց Մուքել աղան և վորոշեց գնալ Հարությունի վորդի, Գրիգորի թու ծերունի Պողոսի մոտ: Նա նստեց իր սև լեռնավարը, վերցրեց իր նոքյարներից լեռնու հոգի և նրանց հետ դուրս լեկավ իր գեղեցիկ կալվածքից: Նա անցավ դաշտերի ընդարձակ հարթութունները, մտավ փոքրիկ ձորակը, անցավ գետը, բարձրացավ զարիվայրը, գնաց գլուղի միջով և ձին քշեց դեպի ծերունի Պողոսի բակը:

Ծերունի Պողոսը նստած եր բակի գերաններից մեկի վրա, հանգիստ ծխում եր, իսկ նրանից մի քիչ հեռու մեծ վորդին փռի համար փայտ եր ջարդում: Մուքել աղան իր լեռնու նոքյարներով մտավ բակ: Ծերունի Պողոսը նկատելով նրան, վոտքի լեւավ: Մեծ վորդին ևս դադարեց փայտ ջարդելուց և ուշադիր նայեց լեռնուներին:

Մուքել աղան և նոքյարները ձիերից իջան: Մուքել աղան իր ձիու սանձը տվեց նոքյարներից մեկին և ինքը չափազանց սիրալիր ու ժպտալով մոտեցավ ծերունի Պողոսին, աջ ձեռքը մեկնեց նրան և նույնքան սիրալիր գլխի շարժումով բարևեց Գրիգորին:

Ծերունի Պողոսը շատ դարմացավ Մուքել աղայի սիրալիր վերաբերմունքից, վորովհետև նա բոլորովին հույս չուներ, թե Մուքել աղան իրեն այցի կգա, ինքն ևս քաղաքավարութունից դրդված, հարկադրված չեղավ սիրալիր վերաբերմունք ցույց տալ անկող հյուրին: Մուքել աղան կարգադրեց նոքյարներին՝ ձիերը պլտտեցնել բակում մինչև իր վերադարձը:

— Հը, ի՞նչ կա, բարի լինի, — վերջապես խոսեց ծերունի Պողոսը:

— Բարին բարի չե, չեթե ծերունի Պողոսը այդ բարին ցանկանա, — ասաց աղան և ավելացրեց, — այստեղ անհարմար ե, գնանք ձեզ մոտ:

— Յես միշտ բարին եմ ցանկացել և աշխատել, վոր գյուղացիները բարի ճանապարհով գնան:

— Յե՞վ գնում ես:

— Դե ի հարկե վոչ բոլորը:

Նրանք մտան Պողոսի նոր շինած բնակարանը, Պողոսը տեղ տվեց Մուքել աղային թախտին դրված մութաքաշի վրա, իսկ ինքը, վոտքերը հանելով, բարձրացավ դիմացի թախտին և ծալապատիկ նստեց խալու վրա փռած մինդարին:

— Յեղբայր, ի՞նչ խեր ունես այս գյուղացիներից, վոր աշխատում ես միշտ նրանց լավություն անել:

— Ինչո՞ւ:

— Դե ի հարկե: Գյուղացուն լավություն արածը կորած ե: Կարծում ես նրանք քո արած լավությունը կվերադարձնեն: Չսպասես լավություն արեխավոր գյուղացուց: Յերբ ունենաս՝ կգան կուտեն, կխմեն և ամենամոտիկ բարեկամդ կգառնան, իսկ չերբ հատավ, ել չերեսիդ չեն նայի: Առհասարակ, — խորհրդավոր և խրատական չեղանակով շարունակեց Մուքել աղան, — աշխարհումս բարեկամ չկա: «Բարեկամ՝ հացի, բարեկամ, պաշտոնի, բարեկամ՝ ազգա-

կանության, իսկ անկեղծ բարեկամ չկա»: Հիմա սիրելի, Պողոս, ուզում եմ ասել, վոր քարը փեշիցդ թափիր, մտածիր քո վորդիների և թոռների մասին: Տեսնում ես, վոր լես զավակ չունեմ, բայց մտածում եմ իմ չեղբոր զավակների համար: Դու ևս առավել պիտի մտածես քո զավակների և թոռների ապագայի համար:

V — Այդ բոլորը լավ ես ասում, աղա, շնորհակալ եմ խորհուրդներիդ համար: Բայց մի՞թե ունեցածդ քեզ ու չեղբորդ վորդիներին բավական չե: Ինչո՞ւ լես ընկնում մեղքի մեջ: Ձե՞ վոր ամենալավ բլուրները, դաշտերը և արոտները քոնն են:

— Ե՛, Պողոս, — խրատական չեղանակով շարունակեց Մուքել աղան, — ելի ժողովրդից ես խոսում: Յես քեզ ասի, վոր գյուղացու մասին մի մտածիր, իսկ դու ելի նրա մասին ես խոսում: Յես Կուրթանցիներին ելի մեղադրում, վոր նրանք բանը դժվար են հասկանում, բայց բանից դուս ե գալիս, վոր դու նրանցից անցար: Պողոս, հիմարություն մի՛ արա, հասկացիր, վոր գյուղացուց ապերախտ մարդ չկա աշխարհում, նրա նման լավություն ուրացող մեկ ել ինքն ե, վոր կա:

— Բայց եղբան հողն ինչի՞դ ե պետք, աղա:

— Ա՛յ Պողոս, խելոք, իմաստուն, սրտնեղած ասաց Մուքել աղան — ինձ հող շատ ե հարկավոր, շատ: Ուզում եմ հասնել մյուս թավաղներին: Հասկանում ես: Գիտե՞ս նրանք ինչքան հող ունեն:

— Ձե:

VI — Բարաթովներն ունեն տասնութ հազար դեսյատին, Լոռիս Մելիքովները՝ տասներ չորս հազար, Արղությանները՝ չերեք հազար: Ել չեմ ասում իշխան Բեգովի, Սանդրովի, Գիգովի, Քոչարյանների, Սամադ աղայի, Յեզիզարովների, Քալանթարովների, Բաշբեյուկների, Մոսանաց վասիլի, Թադավորի մոր, Ուզեյնու, Եջմիածնի, Հադպատի և Սա-նահնի վանքերի հողերի չափը: Եսքանը մեր քթի տակն

են: Բա վոր ասեմ մեր գալառից դուրս մյուս կալվածա-
տերերի ու նրանց հողերի չափը: Յերեվանի կողմը՝ Մելիք
Աղամալյաններն ունեն տասնհինգ գյուղ, Շիրմյազաններն՝
տասնյերկու գյուղ, Սամվելյանները՝ տասը գյուղ, Նավա-
սարգյանները՝ վեց գյուղ: Բա վոր ասեմ Զանգեզուրի, Ղա-
րաբաղի մելիքների և հատկապես թուրք բեգերի, աղա-
լարների և Վրաստանի կնյազների մասին, մազերդ բիգ-բիգ
կկանգնեն: Իսկ նրանք ինչպիսի քեֆեր են սարքում՝ դրա
համար մարդ լեզու պիտի ունենա, վոր պատմի: Մենակ
այս ասեմ, վոր լեղբայրս ՆՋմիածնից ետեղ չեղած ժամա-
նակ պատմեց:

— Մի որ, — պատմում եր նա, — Գրիշա աղա Սամ-
վելյանը չեկավ ինձ մոտ և ասաց, — Յեգոր աղա, աշխար-
հումս քեֆ չկա, վոր արած չլինեմ: Ես անգամ ել այն-
պիսի մի բան եմ մտածել, վոր անելուցս հետո տասնյակ
տարիներ ել անցնեն՝ ասելիք դառնա: Յեվ իրոք, մարդն
իր ասածն արավ:

Մի տարի, չերբ գեղեցիկ աշուն եր և բոլոր մրգերը
հասել էին, առավոտը, դեռ լույսը չբացված, լուր բերե-
ցին, թե՛ Յեգոր աղա, վեր կաց, վոր Գրիշա աղան գուռ-
նաչինիների հետ քեֆ անելով քաղաք ե մտնում: Շտապ
վեր կացա և զնացի գավառապետի գրասենյակի պատըշ-
գամբում մի խումբ պատվավոր և մեծ մարդկանց հետ նստե-
ցի:

Արևը նոր եր դուրս չեկել, քաղաքացիք խումբ-խումբ,
եղերով և փոքրիկ սալալիներով գնում էին դեպի ազդե-
ները.

Հեռվից լսվում եր գուռնայի ձայնը, վորը հետզհետե
մոտենում եր: Այգիներ գնացողները մեկը մյուսի լեռից
ճանապարհի չերկու կողմերում կանգ ելին առնում և զար-
մացած նայում Հռիփսիմելի վանքի կողմը, վորի մոտից
քաղաք եր մտնում ուղտերի մի փոքրիկ քարավան: Բոլոր

ուղտերը զարդարված էին զանազան խաս և գույնզգույն
կտորներով: Առաջից գնում եր նառը, ինքնագոհ առաջ
շարժվում: Նրա լեռից, նույն համր ընթացքով, քալում
էին մյուս ուղտերը: Զուռնան հնչում եր զիլ ու խլացնող:
Նառի վրա նստած եր Գրիշա աղան՝ մաճարի տիկն ա-
ռաջին և գինու բաժակը ձեռքին: Պատվավոր մարդկանց
պատահելիս, լցնում եր բաժակը և խմում նրանց կենացը:

Նրա լեռից չեկող ուղտին նստած եր գուռնաչին,
չերրորդ ուղտին՝ դամբաշը, և վերջին ուղտին՝ թմբկահարը:

Գրիշա աղան խմում եր մարդկանց կենացը, գուռնան
հնչում եր զիլ ու խլացնող, դամբաշը դամ եր պահում
և թմբկահարը խփում եր թմբուկին, չերբեմն բարձր ա-
ղաղակում և կամ մի չեղանակ զլում:

Այսպես քեֆ եր անում Գրիշա աղան, մինչև հա-
սավ տուն և վերսկսեց մի նոր քեֆ: Նա իջավ ուղտից և
հրավիրեց քեֆի քաղաքի անվանի մարդկանց: Նորից եր
հոսում գինին գիշեր ու ցերեկ: Մարդիկ խմում էին,
հարբում, ընկնում հատակին, քնում, արթնանում, նորից
խմում, պարում, մինչև լրացավ չերբ ուր:

Զորրորդ որը աղան հանգստացավ, հինգերորդ ուրը
զնաց վանք իր ծնողների հիշատակին պատարագ անել
տալու:

— Հիմա, սիրելի Պողոս, այս բոլորով ուզում եմ ասել,
վոր չես պետք ե հասնեմ Գրիշա աղային և նրանից ել
անցնեմ: Ի՞նչ ե, նրանք ավելի լավ հոր գավակ են, վոր
հազարավոր դեսյատին հողեր ունենան, իսկ Մուքել աղան
մի քանի հարյուր դեսյատին: Նրանք շաբաթներով ուտեն,
խմեն, քեֆ անեն, իսկ չես վոչ: Դու գիտես, չե՞, Պողոս,
վոր չերբ գոմեշը նստում ե գլուխում գլուխ մեծանում ե:

— Մեծանում ե, աղա, բայց ինչո՞ւ չես խեղճ ժողո-
վրդի արյունն ընկնում, չերկու գյուղի տները քանդում,
ավերում:

— Եղ ի՞նչպես ե, Պողոս, հազարավոր կալվածատեր
ու բազմաթիվ վանքեր միլիոնավոր դեսյատիններով հողեր

են սեփականացրել և քանի տասնյակ միլիոն գլուղացիներ ձրի աշխատեցնում են, դա մեղք չի, իսկ Մուքել աղան, վոր լեռնի գլուղից մի ինչը հարյուր գեսյատին հող ե խլում և գլուղացիներին ել ահագին հող թողնում, մեղք ե:

— Ե՛, Մուքել աղա, դա արդարութունն է, — ասաց Պողոսը և գլուխն ուրրեց:

— Պողոս, խելքդ գլուխդ հավաքիր, արդարութունը մենք չենք վորոշում: Արդարութունը վերևից, նախախնամութունից ե գալիս: Դեռ մենք ծնված չեյինք, վոր մեր ճակատներին գրված եր, թե աշխարհ գալուց հետո ով ինչ պիտի լինի: Հիմա դուք ինչքան ուզում եք իմ դեմ դուրս լեկեք, մեկ ե, հողերը պիտի խլեմ:

— Լավ ես խոսում, Մուքել աղա, — հեգնեց Պողոսը: Քեզ ուսումնարանում եղպէս են կրթել, վոր խեղճ ուսհաթի տներն ավերես, հողերը խլես:

Մուքելը փառ-փառ ծիծաղեց և ապա ժպտալով դարձավ Պողոսին.

— Լսիր ինձ, Պողոս: Մեկ ե, լես հողերը վաղ թե ուշ պիտի խլեմ, միայն թե դու լավ կանես, վոր մի կողմի վրա քաղվես և ինձ անտեղի ծախսերի տակ չգցես:

Այս ասելով, Մուքել աղան իր գրպանից հանեց մի քսակ վռնեղրամ, դրեց ծերունի Պողոսի առաջ և ասաց.

— սա վերցրու քեզ և վորդիներիդ ու թոռներիդ ապագայի մասին մտածիր: Բացի այս, խլված հողերից ել ամենալավ հողերը կտամ քեզ՝ վարելու-ցանելու: Թոռներիդ լեղբորս միջոցով ընդունել կտամ Նշմիածնի ճեմարանը, ինչքան տավար-վոչխար ել ուզենաս, իմ հանդում կարող ես պահել և շատացնել, իսկ քո վորդիների պատիվն ել մինչև վերջ կպահենք և բոլորի մոտ կմեծարենք: Սրանից ել ավելի ինչ ես ուզում ախպեր, — ժպտալով վերջացրեց Մուքել աղան:

— Յես չեմ կարող հախպատեցի Մուքիասը դառնալ, վորն իրենց գլուղի հողերը քո ասածի նման ճոճկանե-

ցոնց վրա ծախեց ու մինչև հիմա ել հախպատեցիք նրա գերեզմանն են քաշում և նրա արածների համար խեղճ ժառանգների լեռնավը տալիս են ու նրանց հալածում: Այս փողերը վերցրու և գնա: Մենք փողի կարոտ չենք:

Այս ասելով, ծերունի Պողոսը վերցրեց վռնեղր քսակը և մեկնեց Մուքել աղային:

Մուքել աղան զարմացավ սաստիկ, վշտացավ, վերցրեց դրամի քսակը և ասաց.

— Յես չեյի կարծում, վոր դու այդքան հիմար կլինես:

— Այդ խոսքերը քեզ պատիվ չեն բերում, Մուքել աղա:

— Մի նեղանար, Պողոս, լես այս բոլորը քեզ բարեկամբար եմ ասում: Այն, կրկնում եմ — մի մարդ, վոր իրեն շահը չի հասկանում՝ նա հիմար ե: Դու կարծում ես, վոր Մուքել աղան իր գործի կես ճանապարհից լես կկանգնի: Չե, Պողոս, Մուքել աղան քո ասածներից չի:

— Վոր Մուքել աղան մեր ասածներից չի, — գայրացավ ծերունի Պողոսը, — դու լել լավ իմացիր, Մուքել աղա, վոր ծերունի Պողոսն ել քո ասածներից չի:

Մուքել աղան լելավ վտառի և դառնացած ասաց.

— Պարի մեջ մտնողը, լետևը շարժել պիտի իմանա:

— Դե դու պարի մեջ ես մտել ելի, — հեգնեց նրան ծերունի Պողոսը:

— Այն, Պողոս, լես ել եմ մտել, դու լել, կտեսնենք պարի հրապարակից ով պատվով դուրս կգա:

— Կտեսնենք, — հեգնեց ծերունի Պողոսը:

— Այն, կտեսնենք, — սպառնաց Մուքել աղան, դուրս լեկավ բախ, նստեց իր նժուլղը և իր նոքյարների հետ գնաց իր կալվածքը:

Առավոտ եր, դարնանազեղ մի առավոտ:

Դավառի գլուղերից հատուկ կենտ ձիավորներ դիմում



եջին Գյարգյառ գյուղը: Վոմանք հագել եյին Մուքել աղայից նվեր ստացած գետնագործ չուխան, իսկ տակից սև սառինե արխալուղը և գետնագործ անդրավարտիկը, գլխներին դրել եյին, բուխարու սև թանկագին փափախ:

Նրանք ճանապարհների հանգուցներում պատահում եյին իրար, բարևում, միանում և շարունակում քայլել դեպի Գյարգյառ գյուղը: Իհարկե, ովքեր մոտիկ հարևան գյուղերից եյին, նրանք վաղուց եյին հասել գյուղը, իջել տանուտների բակում և սպասում եյին մարդային դատարանի անդամ Նլիազովին և ազենտ Քիշմիշովին, վորոնք պիտի գային, քննություն անեյին և պարզեյին Մուքել աղայի կալվածքի և նրա հարևան գյուղերի՝ Վարդաբլուրի և Կուրթանի սահմանները:

Յեկել եյին նաև Մուքել աղայի կողմից կաշառված Վարդաբլուրի և Կուրթանի դավաճանները: Նրանց գլուխ եր կանգնած Վարդաբլուրի Տեր-Հովհաննես քահանա Զոհրաբյանը, վորին Տեր-Վանկո մականունն եյին տալիս:

Նրա մոտ եր իր աղջկա ամուսինը՝ Վարդաբլուրի գրագիր Մովսես Նիկողոսյանը: Նրանցից մի քիչ հեռու, գերանների վրա, նստել եյին նույն գյուղից հարուստ Կոռքերանց Թաթոն, Բուռնցք Սաքոն և Կուրթանից՝ կավատ Վոսկանը:

Նրանք խոսում եյին, ծխում և միաժամանակ նայում ստվարացող և հետաքրքրվող բազմությանը, վորը խռնովել եր ծերունի Պողոսի, Գրիգորի, Ավագի, Զուրաբի շուրջը, և աղմկում եր:

Հեովից, Գյուլագարակից դեպի Գյարգյառ գյուղն եր գալիս ձիավորների մի խումբ:

Խմբում աչքի չեր ընկնում շրջանի գործակալ, մեծ հարստության տեր Մուքել Խան-Աղյանի սանահայր գյուլագարակցի Տեր-Հակոբ քահանա Շահինյանը: Նա բարձրահասակ չեր, սակայն չաղ եր, փառահեղ մորուքով և

խոշոր գիմադծերով: Նա հագել եր քահանայական տոնական զգեստները և կրծքից կախել Աննայի խաչը: Թե այդ նվերն ինչպես եր ստացել նորին կայսերական մեծությունից, այդ միայն ինքը կիմանար, վորովհետև այդպիսի խաչ առհասարակ «վեհից» ստանում եյին սակավաթիվ անձնավորություններ՝ պետությանը բացառիկ ծառայություններ մատուցած լինելու համար: Իսկ Տեր-Հակոբ քահանան, իրոք վոր, ավելի քան խորամանկ հոգեվորականներից եր: Նա գիտեր բարձրաստիճան պաշտոնյաներին կապել իր հետ և միաժամանակ մարդկանց մեջ իր հեղինակութունը բարձրացնել, չնայած այն հանդամանքին, վոր այդ մարդկանց մեջ ուներ տասնյակներով, լեթե վոչ հարյուրներով, պարտապաններ, վորոնք տարին-տասյերկու ամիս աշխատում եյին նրա դռանը և պարտքերից առաջացած տոկոսներով լցնում նրա սրնդուկները: Իսկ Տեր-Հակոբի սնդուկների մասին առասպելներ եյին պատմում: Պատմում եյին, վոր նրա արծաթի, վոսկու և թղթադրամի սնդուկներն առանձին եյին և լիքը: Զարմացնում եր մարդկանց մանավանդ այն, վոր յերբ Տեր-Հակոբը բացում եր թղթադրամի սնդուկը, կափարիչը խցանի նման վեր եր թռչում, վորի հետևանքով իրար վրա դարսված թղթադրամի կույտերը բարձրանում եյին, յերբեմն թափվում հատակին և Տեր-Հակոբի սիրտը լցնում անսահման բերկրանքով:

— Սրանք մի ուր իմ գլուխը պիտի ուտեն, — հաճախ ասում եր կնոջն ու իր գավակներին, սակայն նրանք միայն հանգիստ ժպտում եյին, ծիծաղում Տեր-Հակոբի միամիտ խոսքերի վրա և աշխատում նրանից մի բան պոկել:

— Ճիշտ ես ասում, հայրիկ ջան, — ասում եյին գավակները, մոտենում նրան և ձեռքները պարզում քահանայի կողմը: — Եդ փողերը տուր տանենք ծախսենք, թե չե՞ք դիտին փորձանք կբերեն:

— Այ դուք ավագակներ, — կատակում եր Տեր-Հա-

կորը և յերեխաների ձեռքը դնում պղնձե և կամ, լավագույն դեպքում, արծաթե դրամներ:

— Ես լինչ ես տալիս, — խռովկան ձայնով ասում էլին զավակները և յետ-յետ քաշվում:

— Փողը յերեխաներին կփչացնի, — ասում էր Տեր-Հակոբը և ապա խրատական յեղանակով շարունակում. — Ես բոլորը, բալիկներս ձեզ համար եմ հավաքել:

— Դե վոր մեզ համար ես հավաքել, հիմա տուր տանենք ծախսենք, վոր քեզ ել փորձանք չպատահի:

— Չե, — խորհրդավոր կերպով ասում էր քահանան, — վոր մեծանաք, ես ժամանակ կտամ:

Այս ասելով նա փակում էր սնդուկները, ապա մեկ-մեկ իրար յետևից դնում գուլնեգուլն թիթեղազարդ մեծ սնդուկի մեջ և մեծ բանալիով փակում, վորից լսվում էր քահանայի աղանջներին մշտապես հաճելի փականքի զրընգուն ձայնը:

Տեր-Հակոբ քահանան վորքան ժլատ էր դեպի յուրայինները և անդուծ դեպի իր պարտապանները, նույնքան առատաձեռն էր և բարեսիրտ դեպի բարձրաստիճան պաշտոնյաները, յերբ նրանցից մեկը հյուր էր լինում իր մոտ:

— Մի անգամ, — պատմում է աղանատեսներից մեկը, — Տեր-Հակոբը ձիով գնում էր Ջ. ավանը: Ծանապարհին, յերբ նա հասավ մալականների գյուղը և մոտեցավ մալականի խանութին, զիմացից յերևաց գավառապետ Ոմարովը մի խումբ զինված կազակներով: Քահանան կանգ առավ և հրամայեց խանութպանին մի մեծ սեղան բաց անել:

Ոմարովը մոտեցավ: Քահանան շտապեց նրան ընդառաջ, ձիուց իջեցրեց, համբուրվեց նրա հետ և խընդրեց, վոր իր մարդկանցով իր հետ ընթրի:

Ոմարովը համաձայնվեց: Սկսվեց քեֆը: Քահանան

խոսում էր մաքուր թուրքերեն և հաճախ խմում էր գավառապետի կենացը: Սեղանակիցները ձայնակցում էին նրան և մինչև հատակը դատարկում իրենց բաժակները:

Քահանան խրախճանքի մեջ էր:

Նա հրամայեց ճանապարհով անցնողներին ևս հրավիրել խնջույքին և քեֆ անել:

Այդպես ել արեցին:

Ծանապարհորդները գալիս էին, նստում նոր բացված սեղանների շուրջը, խմում գավառապետ Ոմարովի և ապա Հակոբ քահանայի կենացը:

Հրճվում էր քահանան, հրճվում էր Ոմարովը: Նրանք յերբեմն վեր էլին կենում աթոռներից, համբուրվում իրար հետ:

Հակոբ քահանան գոչում էր. — Կերեք, Հակոբ քահանայի հարստությունը ծով է. չուտողը խոզ է:

Յեվ ուտում էլին ճանապարհորդները և աշխատում շատ խմել. քանի վոր այդ բնությունի համար պիտի վճարեր Հակոբ քահանան:

Այդ քահանան էր ահա, վոր հեծվորդների մեջ գրավել էր իր պատվավոր տեղը:

Նա իր ձախ ձեռքում բռնած ուներ նժույգի սանձը, իսկ աջ ձեռքում՝ բեհեզյա կտորով փաթաթած ավետաբանը: Նրա մի կողմից, կապույտ ձիեր հեծած, գնում էլին մարգային դատարանի անդամ Նիհադովը և ագենտ Քիշմիշովը, իսկ մյուս կողմից՝ պրիստով Սարիբեկյանը, Մուքել աղան և նրա նվիրաբաշխ այգեհատցի Ավետիք աղա Շահվերդյանը: Նրանց յետևի շարքում գնում էլին վկայելու համար Մուքել աղայի սանահայր հոբարձեցի հարուստ Ղարաջան Վարդանը, նույն գյուղացի չարչի Ադոյան Դրիգորը, հարուստ Սոփոնց Վարդանը, գյուլագարակցի Խաչատուր Այվազյանը և Աբրահամ Շահինյանը, Բուլաղերանից՝ հարուստ Քոչարյան Հարությունը, Վոսկանյան Շամիրը և Ղարաբաղցոնց Մովսեսը, Շահալի

գլուղից՝ Բռունցք Գրիգոր Վարդուհանը, Ջալալ-ողլուց՝
ռուս հայտնի Բռունցք Նիկալայ Յակուլիչը և ուրիշ
նշանավոր ու աննշան անձինք:

Զիավորների խումբը նախորդ գիշեր կերել և խմել
էր Տեր-Հակոբ քահանա Շահինյանի տանը, և այժմ բոլորն
էլ խմած ու փքված գնում էին դեպի Գյարգյառ գլուղը՝
յերբեմն խոսքեր փոխանակելով իրար հետ և խթանելով
իրենց նփուլգները:

Այրուծին մտավ գլուղ: Տներին և տների բակերին
դուրս էին գալիս մարդիկ, նայում լեկոդների կողմը և
գլխարկները վերցնում: Նրանք նայում էին զարմացած և
հուշիկ քայլերով հետևում հեծվորների հաղթական յեր-
թին, վորը հասնելով գլուղի կենտրոնը թեքվեց աջ և
դիմեց դեպի տանուտների բակը, ուր խոնված նստած
հասարակութունը, մի մարդու նման, վոտքի լեւան և
գլխարկները վերցրեցին:

Զիավորները մտան ընդարձակ ու լայն բակը, ձիե-
րից իջան, սանձերը տվին կանգնած մարդկանց ու
հրամայեցին, վոր տանեն իրարից հեռու գերաններից
կապեն: Դատավոր Նիկազովը և ագենտ Քիշմիշովը մտան
տանուտների տունը, ապա դուրս լեկան տանտիրոջ ուղեկ-
ցությամբ և դիմեցին դեպի ընդարձակ ու լայն մարազ-
սրահը: Մարդկանց բազմութունը հետևեց նրանց: Նիկա-
զովը ու Քիշմիշովը մտան ներս, անցան մարազ-սրահի
վերին ծալքում պատրաստած սեղանի մոտ և Սարիբեկ-
յանի հետ գրավեցին իրենց պատվավոր տեղը, իսկ Տեր-
Հակոբը նստեց մարազ-սրահի ձախ կողմը պատրաստած
սեղանի առաջ, բաց արեց բեհեզա կտորը, միջից հա-
նեց ավետարանը և դրեց սեղանի վրա: Մուքել աղան և
վկաները նստեցին դիմացի սեղանից մի տասը քալ հե-
ռավորության վրա շարված փայտյա անձոռնի և աձև
նստարաններին: Հետաքրքրվող բազմութուննա նցավ նը-
րանց լետեղ և բռնեց արձակ տարածութունը: Նրանց

համար աթոռներ ու նստարաններ չկային, ուստի հարկա-
դրված էին մինչև քննության վերջը վոտքի վրա մնալ:

Յերբ բոլորը գրավեցին իրենց տեղերը, դատարանի
անդամ Նիկազովը լեւավ վոտքի և զանգահարեց:

Տիրեց խորին լուռություն:

— Հանուն ռուսական միապետական սրբազան կայսե-
րական իշխանության, դատարանի նիստը հայտարարում
եմ բացված, — այսպես սկսեց նա:

— Այստեղ գրված է Մուքել աղա Տեր-Թադեվոսի
Խան-Աղյանի և նրա հարեվան Վարդաբլուրի ու Կուր-
թանի միջև լեղած վիճելի հողերի հարցը: Խնչպես հայտնի
է, պարոն Մուքել աղա Տեր-Թադեվոսի Խան-Աղյանը
կալվածատեր Ղորղանյանից գնել է լեկու հարյուր հիսուն
դեսյատին հող այգիներով հանդերձ և ինն հարյուր քսան
դեսյատին վիճելի հողերի և անտառների իրավունքը:
Պարզվում է նաև, վոր Մուքել աղայի նախորդը թույլ է
գտնվել իր կալվածատիրական իրավունքները պաշտպա-
նելու հարցում, վորի հետևանքով վարդաբլուրցիներն ու
կուրթանցիները գրավել են նրա անտառներն ու հողերը,
տասնյակ տարիներով ոգտագործել և մոռացության են
տվել այն հանգամանքը, վոր դրանով իսկ խախտել և
վոտնահարել են ռուսական միահեծան կայսրության
սրբազան որենքները: Այս բոլորը, թերևս, թյուրիմացու-
թյուններ չեն և սխալ տեղեկությունների արդյունք: Հենց
այս պարզելու համար է, վոր հավաքել ենք շրջանի
լերեկիներին, վոր ցույց տաք նախկին կալվածատեր
Ղորղանյանի հողերի և Վարդաբլուրի ու Կուրթանի սահ-
մանները, միաժամանակ նշեք Ղորղանյանի նախկին
հանդամասերը, ապա լերդվեք սուրբ և ամենագոր ավե-
տարանի վրա, վորպեսզի որենքով սրբագործվի այդ ամենը:
Սա կլինի այն մեծ վկայությունն ու ամենամեծ առհա-
վատչյան միահեծան կայսերական պետության համար,

ըստ վորի կշարժվի դատարանը և վերջ կտա ձեր հողային տարածանութուններին: Այս իսկ տեսակետից չեղնելով ե, վոր, պարոնայք չերեկիններ, առաջին խոսքը տրվում ե վարդաբլուր գյուղի հայր Հովհաննես քահանա Ձոհրաբյանին, վորն իր հոտի հովիվն ե, ժողովրդի միջնորդն ամենակարող աստծու առաջ և իր խղճի արդար դատավորը:

Վոտքի չելավ Տեր-Վանկոն, դարձավ դատարանին այսպիսի սրտառուչ խոսքերով.

— Քսան տարուց ավելի չե, ինչ չես աշխատում եմ իմ հոտի մեջ և միշտ ջանք եմ թափել գնալ աստծու գծած ճանապարհով և իմ միակ վորդու ու վարդաբլուրցիների անեծքին չարժանանալ.

Ապա ձեռքը դրեց ավետարանի վրա և խալթվածի պես չետ քաշեց:

Ի՞նչ ես անում, որհնված, — զսպված շշուկով հանդիմանեց գործակալ քահանան իր ստորադրյալ Տեր-Վանկոյին. — ուզում ես մեզ խայտառակ անել: Իմացած չեղիր, չեթե դու չչերդպես, մշուսներից վոչ վոք չի չերդվի:

Մի շշուկ տարածվեց յետեվի շարքերի մեջ:

Տեր-Վանկոն անիմաստ հայացքով նայում եր շուրջը:

— Մի ուշացնի, խոսք ես տվել, չերդվիր, մեղքն իմ վզիս, մի վախենալ, — հուզմունքից խեղդվելով և կարմրելով կրկին շշնջաց Տեր-Վանկոյի գործակալ Հակոբ քահանան:

Տեր-Վանկոն կարծես սթափվեց և ձեռքը գնելով ավետարանի վրա, մի պահ լուռթյունից հետո ասաց.

— Յերգվում եմ ամենակարող աստծու, չերկնային սերովրների ու քերովրների անունով և մեր սուրբ հայրապետների գերեզմանով այս սուրբ ավետարանի վրա, վոր Սուրբ Սարգիսը, Ջրաղացը, Կարմիր Քարի Տակը, Բաղատեղերը, Քարփիչխանեն, Յերկու Ճամփի Արանքը, Կոնդը, Նախրի Յաթաղը, Հորթի Յաթաղը, Դղի Խամբը,

Գյուլերը, Յխոտի Աղբյուրը, Մեծ Թալան, Հացուտ Թալան, Տափակ Մերին, Տանձուտ Թալան, Խմհատները, Պուճուր Նվակը, Մեծ Նվակը, Կաղնուտը, Շիմալի Կուչը և Չալակաղնուտը, վորոնք միասին կազմում են իննը հարյուր քսան դեսպտին, պատկանում ելին Թավադ Դորդանյանին:

— Ա՛յ աստված գլխիդ խռով կենա ու եդ ավետարանն աչքերդ կուրացնի, Տեր-Վանկո, — բացականչեց ծերունի Պողոսը:

Արած արարմունքդ վորդիներիդ առաջը գա, Տեր-Վանկո: Ահեղ դատաստանի ուրը պարտական մնաս տիրոջ առաջ, — ավելացրեց կուրթանեցի Ջուրաբը:

Ելիազովը չելավ վոտքի, զանգահարեց և հայտարարեց:

— Խոսքը պատկանում ե վարդաբլուր գյուղի չերեվելիներ Մովսես Նիկողոսյանին, Թաթո Կուրքերյանին և Սաքո Սարգսյանին:

Հիշյալ անձնավորութունները չելան վոտքի, ձեռքների ընած իրենց փափախները, մոտեցան Տեր-Հակոբի սեղանին: Առաջինը մոտեցավ Մովսես Նիկողոսյանը, ձեռքը գնելով ավետարանի վրա՝ ասաց.

— Այն, ինչ վոր ասաց հայր-Վանկոն, կրկնում եմ չես և այս սուրբ ավետարանի վրա չերդվում եմ վորդիներիս գլխով, վոր Տեր-Հովհաննեսի ասած վալրերը պատկանում ելին նախկին Թավադ Դորդանյանին:

— Ստախոս, — լավեց ամբոխի միջից:

— Լուռթյուն, — գոչեց Ելիազովը և զանգահարեց:

— Պարոն Ելիազով, — ասաց ուսու վկա Ֆեոդոր Նիկալայեվը, — ասում են, վոր Մովսես Նիկողոսյանը զավակ չունի, բայց զավակների գլխով ե չերգում ուսում:

— Լո՛ր, — խստագին սաստեց Ելիազովը, ապա դարձավ կանգնած սուտ վկաներին. — դուք ի՞նչ կասեք այս մասին:

Յե-ե-ե, — կմկմաց վկա Թաթոն, — պիտի ասեմ, վոր Տեր հոր ասածները ճիշտ ելին.

— Դե չերգվիր:

Թաթոն մոտեցավ սեղանին, ձեռքը դնելով ավետարանին՝ ասաց.

— Յերգվում եմ այս սուրբ ավետարանի վրա, վոր Տեր-Վանկոյի ասածները ճիշտ են: Թե սուտ ասեմ՝ այս ավետարանն իմ տան ծուխը կարացնի:

— Ասէ՛ն, — լավեցին ամբոխի միջից բազմաթիվ ձայներ:

Դա խիղճ չունի, պարոն Նլիազով: Դա Մշից գաղթելիս սպանել ե յուր հարուստ հորեղբորը, նրա վոսկիները թալանել և յեկել եստեղ բնակութեան հաստատել, — ասաց Դիքոր ամին:

— Ի՞նչ ե ասում, — հետաքրքրվեց Նլիազովը:

Դիքոր ամուսնացած թարգմանեցին:

— Մուշն այստեղ ինչ գործ ունի, — գայրացավ Նլիազովը և ձեռքը թափ տվեց:

Նույն ձևով չերգվեց վարդաբլուրցի Սաքո Սարգսյանը, վորից հետո Նլիազովը յերգման խոսք տվեց Վարդաբլուրի հարեվան հորարցի գլուղի բնակիչներ Մուքել աղայի սանահայր հարուստ և հոտերի տեր Ղարաջյան Վարդանին, ապա չարչի Ազոյան Գրիգորին, վորից հետո բազում տավարատեր Սոփոնց Վարդանին: Սրանք ևս, հերթով չերգվեցին ավետարանի վրա և հաստատեցին Տեր-Վանկոյի ասածները:

Նլիազովը խոսքը տվեց ուսուցիչ Գյարգյառ գլուղի բնակիչ ութսունամյա վկա աստվածավախ Ֆեոդոր Նիկալայեվին:

Նիկալայեվը փայտին հենված, դողդողալով մոտեցավ սեղանին և դարձավ սեղանի շուրջը նստած Նլիազովին, Բիշմիշովին և մյուս նստածներին:

— Յես հին Նիկողոսյան գնդի զինվոր եմ: Մասնակցել եմ Աշտարակի, Սարգարաբադի և նրանից հետո տաճիկների դեմ յեղած Ղարսի, Սարիղամիշի, Բաբերդի և Երզրումի կռիվներին: Գնե՛րալ Բուրցովն անգամ հիացած եր իմ ճշմարտախոսութեանից և վերջապես այդ սուրբ

ճշմարտութեան համար եր, վոր ինձ մայր Ռուսայից աքսորեցին այստեղ:

— Բու՛ն նյութի մասին խոսիր, ծերու՛կ, — գայրացավ Նլիազովը և զանգահարեց:

— Յես ճշմարիտն եմ ասում, — ասաց ծերունին. — յես Ալյոշայի և Վանկայի հետ յեղել եմ Քարփիշխանում, ուր յերեսուն տարի աղյուս եմ պատրաստել և յերբեք չեմ լսել, վոր այդ տեղերը պատկանելիս լինեն Կորզանովին: Հավատացնում եմ, վոր այստեղ բոլոր խոսողները սուտ ելին ասում, մոռացել ելին ճշմարիտ աստվածը և սատանայի խոսքերն ելին կրկնում: Դրանք կաշառվածներ են պարոն Նլիազով: Ճշմարիտն եմ ասում, վոր դրանց սատանան խաբել ե և ճանապարհից հանել:

— Լու՛ր, ծերու՛կ, — գայրացավ Նլիազովը: — Քո ասած սատանան դու յես, վոր կաս: Չե՞ վոր դրանք բնիկներ են, իսկ դու՛ գաղթական: Դրանք ավելի լավ են իմանում:

— Վո՛չ, պարոն Նլիազով, — սկսեց արդարանալ ծերունին, — յես ճշմարիտն եմ ասում: Յես ճշմարտութեան համար ե, վոր յեկել եմ այստեղ: Հավատացնում եմ, վոր չեյ՛ գա, յեթե խիղճս չբերեր:

Այս ասելով, ծերունին մոտեցավ ավետարանին, վոր ձեռքը դնի վրան, սակայն Տեր-Հակոբը յետ քաշեց ավետարանը, վոտքի յելավ և ալլալված ասաց.

— Յես թույլ չեմ տա, ստախոս մարդիկ ավետարանի վրա յերգվեն:

— Յես ճշմարիտն եմ ասում, հայր Յակոֆ, յեթե սուտ ասեմ, ինչ գալու յե, թող իմ վորդիների և թոռների վրա գա:

Նլիազովը յելավ վոտքի, ապա դարձավ դիմացը նստած մյուս վկաներին.

— Ովքեր գտնում են, վոր յերգում կերած վկաների ասածները սուտ են, թող վոտքի կանգնեն:

Ռուսական գլուղերից յեկած ուսուցիչ վկաները

վոտքի լեւան, բացի շալալողեցի ոռւս վկա Նիկալայ Յակուլիչից.

Ելիագովն ընկավ վարանման մեջ, ապա մի քանի րոպե տեղ լռությունից հետո շարունակեց:

— Այժմ թողբոլոր հայերը յեր դվեն, ապա ոռւսները: Ռուսը վո՞րն է, հայը վորը, — բողոքեցին կանգնած ոռւս գյուղից վկաները:

— Շատ մի խոսեք, — զայրացավ Ելիագովը և հրամայեց նրանց, վոր նստեն:

Գյուղացիները կատարեցին նրա հրամանը:

— Խոսքը տրվում է Ծահալի գյուղացի Վարդուժյան Գրիգորին և Քոլագիրանի գյուղացիներ Քոչարյան Հարությունին, Վոսկանյան Շամիրին և Լարաբաղցոնց Մովսեսին:

Նրանք վեր կացան և միմյանց լեռեից դիմեցին ավետարանը վրան դրված սեղանի մոտ: Տեր-Հակոբը, վորը մինչ այդ այլալված կանգնած էր, նստեց և ընդունեց իր նախկին դիրքը: Առաջինն ավետարանի վրա ձեռքը դրեց շահալեցի Գրիգոր Վարդուժյանը:

— Յես, — ասաց նա, — այս քոլագիրտոնցի իմ ընկերների հետ սրանից քսան տարի առաջ Դորդանյանից թուղթ եմ վերցրել, Մեծ ու Պուճուր Նվակներում և Շիմալի Կչում փայտ կտրել, սաժեն դրել և ծախել Նիկալայի Յակուլիչին: Նա լել վաճառել է պետությանը և շալալողեցիներին:

— Սուտ է, անամոթ, — ամբոխի միջից լավեցին մի քանի ձայներ:

— Զիշտ է ասում, — տեղից հանգիստ պատասխանեց Նիկալայի Յակուլիչը:

— Իեզ ել ենք ճանաչում, նրան եր. Նա. Ծահալին է բուռը հավաքել, քանդում է, դու ել ամբողջ Զալալ-Ողլին, — գոչեց Ավագը:

— Լռություն, — զայրացավ Ելիագովը և զանգահարեց:

— Սուտ ասողի տունն այս ավետարանը քանդի, — լերդվեց Վարդուժյան Գրիգորն ու հեռացավ:

Նրա ընկերները ևս հետեվեցին նրա որինակին:

— Ձեր կաշին դաբախանում ենք ճանաչում, այ ա-նաստված անորեններ, — ամբոխի միջից լավեցին ծերունի Պողոսի, Ավագի, Փարեմուզի, Ապրույի, Արշակի և մի քանի այլ գյուղացիների ձայները:

Ելիագովը նորից զանգահարեց և կատաղի հայացքով նայեց աղմկողներին:

Խոսքը տրվում է վկա Ռոստոմ Գյալաչյանին:

Ռոստոմը վեր կացավ տեղից և դողդողալով դիմեց դեպի սեղանի կողմը: Նա մի քիչ հազաց և խորը շունչ քաշեց:

— Այ սա արդարությունը կասի: Մաքուր մարդ է և խղճով, — ասաց Գիքոր ամին:

— Սրա նման համարյա թե բարեպաշտ մարդ չկա եստեղ, — ավելացրեց Զուրաբը:

— Ո՞վ իմանա, — կասկածանքով ավելացրեց ծերունի Պողոսը:

— Յես ել եմ ասում, — ձեռքն ավետարանին դնելով ասաց Ռոստոմը, — վոր Տեր-Վանկույի ասած տեղերը պատկա-նում եյին թավադ Դորդանյանին: Սուտ ասողի տունն ես ավետարանը քանդի:

— Այ քո տունը կրակ ընկնի, հող ու մոխիր դառնա, Ռոստոմ: Դու լե՞լ սուտ լերդվեցիր: Յերդումդ աչքերդ բռնի, — լավեցին ամբոխի միջից բազմաթիվ ձայներ:

Ռոստոմը շփոթված էր: Նա կարծես տենդելիս լինեց: Մի պահ չեր իմանում, թե վորտեղ եր գտնվում: Յերբ նա գլուխը բարձրացրեց և նայեց խռնված գյուղացիներին, տեսավ, վոր ամբոխի միջից մի քանի տասնյակ զույգ կատաղի աչքեր նայում են իրեն և քիչ է մնում, վոր հայացքով լավեն, նա չդիմացավ և դուրս լեկավ:

— Ե՛լ գիտի հա, աշխարհումս մաքուր մարդ չկա: Ափսոս մարդ, դու ել փչացար, — նրա լեռեից խորհրդա-վոր կերպով գլուխն որորելով ասաց Փարեմուզը:

— Այժմ խոսքը պատկանում է ձեզ, — դարձավ Ելիա-
զովը ուսա գլուղացիներին:

Ծերունի Ֆեոդոր Նիկալայեվը, Ալյոշան, Վանկան և
մյուսները վեր կացան տեղներից և դիմեցին դեպի
ավետարանը:

— Յես ճշմարիտ եմ ասում, — ձեռքը դնելով ավետա-
րանի վրա, ասաց ծերունին, — վոր...

— Բավական է, — գայրացավ Ելիազովը: — Դու քո ճշ-
մարտությամբ մեզ սպանեցիր:

Տեր-Հակոբը լեռ քաշեց ավետարանը՝ թույլ չտալու
նպատակով, սակայն Ելիազովն աչքի նշանով հասկացրեց,
վոր թույլ տա: Գահանան համաձայնվեց:

— Համբուրիր ավետարանը, — ասաց Ելիազովը ծե-
րունուն, — և դա բավական է:

Ծերունին համբուրեց: Մյուսները ցանկացան խոսել,
լերդվել այն ձևով, ինչպես լերդվեցին նախորդ լերդվող-
ները, սակայն Ելիազովը չհամաձայնվեց:

— Այսքանն ել բավական է, — ասաց նա, — Մենք
ավելի շուտ պետք է հավատանք բնիկներին, քան գաղ-
թականներին:

— Բայց չե՞ վոր մենք այստեղ ենք ծնվել: Այն հա-
յերը, վորոնք լերդվեցին, մեզ նման ուրիշ տեղերից են
գաղթել-լեկել:

— Այլևս վոչ մի խոսք, — գայրացավ Ելիազովը:
— Խնդիրը պարզ է: Փաստը մնում է փաստ, վոր վարդա-
բուրցիներն ու կուրթանցիները բռնի կերպով գրավել
են կալվածատեր Ղորղանյանի վարելահողերն ու անտառ-
ները և խախտել կայսրության սրբազան որենքները:

— Մենք բողոքում ենք ձեր արած անիրավ քննու-
թյան դեմ, — ասացին բազմաթիվ գլուղացիներ:

— Մեղավորը դուք եք և դեռ բողոքում եք, — գայ-
րացավ Ելիազովը:

— Մեղավորը մենք չենք, այլ դուք եք և ձեր արած
քննությունը:

— Յես արդարացի լեմ վարվել:

— Մենք կբողոքենք ավելի բարձր տեղ և ցույց կը-
տանք, վոր դուք անարդարացի լեք:

— Վողորմելիներ, — գլուղացիներին հեզնեց Ելիա-
զովը և մյուսների հետ դուրս լեկավ մարազ-սրահից:

Ամբոխն աղմուկով հետևեց նրան:

6

Յեկավ քաղաքից հողաչափ Գեվորգ Սարգսյանը, լե-
կավ և նրա գործիքները շալակած ձոճկանեցի Հարությունը:

Նրանք դնացին Վարդաբուրի դաշտերն ընդարձակ
ու լայն, կանգ առան այնտեղ, սրբեցին իրենց ճակատ-
ների քրտինքը, պատրաստեցին գործիքները ապա ըս-
կսեցին սահմանը կտրել:

Յեկան գլուղացիները և խումբ-խումբ դիմեցին այն-
տեղ:

— Այդ ի՞նչ ես անում, — ասացին նրանք հողաչափին,
վորը գլուխը կախ չափում եր սահմանը և կտրում անընդ-
հատ:

Խնդաց հողաչափը, քահ-քահ ծիծաղեց և ապա ասաց.

— Չեք տեսնում, թե ինչ եմ անում:

— Տեսնում ենք, — ասացին նրան գլուղացիները:
— Մենք զարմանում ենք վարմունքիդ վրա: Կամ խելքդ
ես կորցրել իսպառ, և կամ գլխիցդ ես ձեռք վերցրել:

— Վոչ խելքս եմ կորցրել, վոչ ել գլխիցս եմ ձեռք
վերցրել:

— Դե վոր այդպես է, — ասաց Ավագը, — վերցրու
իրերդ և կորիր եստեղից:

— Հասկացիր, հիմար, թե ինչ ես ասում: Դուք թա-
գավորի դեմ եք դուրս գալիս: Հասկանում ես դու:

— Հասկանում եմ շատ, քեզանից ել ավել: Միայն

Թե հավաքիր ինչ ունես-չունես և գնա: Յեթե գլխումդ մի քիչ խելք կա, շուտով պիտի հեռանաս, թե չե՝ վաղ կտաս քո հիմար գլխին, — ասաց Ավագը և ուզեց ծեծել նրան, սակայն ծերերը չթողեցին և խնդրեցին, վոր չափողները անշառ հեռանան:

— Դե լավ, կզղջաս արածիդ համար, շուտով հաշիվ կտաս, — ասաց հողաչափն Ավագին և ձի նստելով, դարձավ խռնված ամբոխին. — կգնամ, կբերեմ գինված կազակներ, կտեսնենք, թե ով ե գլխից ձեռք վերցրածը:

— Գնա, կտեսնենք կազակներին ել, քեզ ել, աղաչի լաքեյ, — ասաց Ավագը, կուացավ գետին, մի մեծ քար վերցրեց, ուզեց նետել դեպի հողաչափը, վորը սաստիկ կարմրած, ուզում եր կրկին խոսել, բայց մարդիկ բռնեցին Ավագի ձեռքը, ապա դիմեցին հողաչափին.

— Դե գնա կորիր, ինչ ես մեր գլխին ֆահրադի փուշը դարձել: Ձեռ տեսնում՝ եստեղ արյուն ե բանում: Թող աղան ինքը գար ու տեսներ, թե գլուխը վրան լետ կտանե՞ր: Իսկ դու, քանի դեռ վողջ ես, շտապ հեռացիր:

Այլևս չխոսեց Գեվորգ Սարգսյանը և շտապ հեռացավ:

7

Հունիս ամիսն եր: Լեռնաշխարհի արևը ժպտում եր լեռկնքից, յերբեմն դեմքը թաղցնում եր սպիտակ ու սև ամպիկների լետե, յերբեմն դուրս եր գալիս, ժպտում աշխարհին, նազանքով սահում յերկնքում և գնում դեպի մայրամուտը: Հեռու, կանաչին տվող արտերում յերիտասարդ տղաների, դեռափթիթ պատանիների, դարունքվա նման գեղեցիկ սևաչյա աղջիկների խմբերը շրջում եյին դաշտի մեջ, սիրելի, ծնեբեկ, սինձ ու ծաղիկներ քաղում և յերգում բարձր ու քաղցրավազ ձայնով: Հանդի աչն մասերում, ուր յերևում եյին կարտոֆիլի ծաղկած հողամասերը, գլուխները կախ, թորխները ձեռքն երին, աշխատում եյին յետ մնացած գլուղացիները և կարտոֆիլի բուկը լցնում: Հեռու լեռների կողմը, ուր հնարավոր չեր խոտ հնձել, գութանավորները վարում

եյին և հորովել տալիս: Յերբեմն վայրի աղաղիկների խմբերը յերամներով թռչում եյին դաշտերից դեպի մերձակա բլուրները: Փոքրիկ տավարածներն ու հորթարածները լողանում եյին գետի ծանծաղուտ տեղերում, շորերն արագ հագնում և տավարը դանդաղ քշում դեպի արոտ:

Ահա այդ ժամին եր, վոր կազակների մի հեծելազոր գալիս եր դեպի Վարդաբլուր: Նրանց առաջից, հաղթական ու վես, իր սպիտակ ձին հեծած, գալիս եր պրիստավ Սարիբեկյանը: Նրա կողքից, նոսր հեծած, գնում եր հողաչափ Գեվորգ Սարգսյանը, իսկ մի քանի քալ հեռավորության վրա՝ ճոճկանեցի Հարությունը: Նա ևս նստել եր մի ձի և առաջին դրել հողաչափական գործիքները: Թե պրիստավը, թե հողաչափը և թե կազակները լուռ եյին: Միայն լավում եր ձիերի ոմբակների դոփուներ: Նրանք Վարդաբլուր գլուղի դիմացը մի քիչ կանգ առան, պրիստավն ու հողաչափն ինչ վոր խոսքեր փոխանակեցին իրար հետ, ապա ձիերը խթանեցին և նորից առաջ անցան: Նրանց հետևեց կազակների հեծելազորը:

Յերբ նրանք հասան Մուքել աղալի կալվածքը — Կտեվան — կանգ առան և հրամայեցին կալվածքի պահապանին, վոր Մուքել աղալին իրենց գալու մասին հայտնի: Պահապանն իսկույն բացեց մեծ դարպասի դուռը և անհայտացավ:

Մի քանի րոպեից հետո հայտնվեց Մուքել աղան, խնդրեց, վոր իր մոտ իջնեն, մի քիչ հաց ուտեն, ապա նոր գնան սահմանը կտրելու, սակայն պրիստավը հայտնեց, վոր աղալի և Վարդաբլուրի ու Կուրթանի կուրգանները կտրելուց հետո իր շքախմբով կգա և հավուր պատշաճի մի լավ քեֆ կանեն:

Աղան համաձայնվեց:

Սակայն նա պարտք համարեց առաջիմ մեկակաղ բաժակ ողի խմեցնել պրիստավին, հողաչափին և կազակ-

ներին: Վերջիններին միայն կարևոր և լուրջ գործերի ժամանակ ելին հաշվի առնում և հյուրասիրում: Դրա համար ել, աղան իր սպասավորներից մեկին հրամայեց, վոր անմիջապես իր մոտ բերեն գարուց քաշած տկով ողին:

Սպասավորները կատարեցին նրա հրամանը: Մուքել աղան ձեռքն առավ ողու տիկը և իր ձեռքով ողիով հյուրասիրեց պրիստավին, հողաչափին և ողու սիրահար փափախավոր կազակներին: Բոլորն աղային շնորհակալություն հայտնելով և բեխերը սրբելով ճանապարհ ընկան:

Նրանք հասան Կուրթան գյուղի սահմաններին, ապա թեքվեցին աջ, իջան գետը տանող զառիվայրը, անցան գետը և ձիերը քշեցին Կուրթանի լեռնային հանդամասերով: Յերբ նրանք բավականին ճանապարհ կտրեցին, հողաչափի կարգադրությամբ կանգ առան: Հողաչափը և Ճոճկանեցի Հարությունը իջան ձիերից և սկսեցին հողերը չափել և կուրգան կտրել:

Տավարած կուրթանցիները զարմացած նայում ելին և սկզբում չեղին իմանում, թե ինչ է կատարվում, սակայն չերբ իմացան, վոր աղայի հանդամասերի սահմանն են կտրում, այլևս մոռացան իրենց տավարը, իրար լեռնից սկսեցին վազել դեպի գյուղ և բոթը գուժել:

Յերբ կուրթանցիներն իմացան այս, սկսեցին աղմկել, խմբվել և կռվի պատրաստութուններ տեսնել: Նրանք զենք չունեին: Նրանց գենքն անտառներից կտրած լատանաչափ դազանակներն ելին, վորոնց մի հարվածով կարելի չեր տապալել թե ձիավորին և թե ձիուն: Նրանք այնքան ել կարևորութուն չտվին հրացաններին և փայտերով գինված, խումբ-խումբ սկսեցին դիմել դեպի հողաչափն ու կազակները: Սակայն վերջիններս արդեն կտրել ելին կուրգանները, Մուքել աղայի հանգի մե՞ առել Կուրթանի արագավանդ հողերը, մեծ անտառները, թալանները, բլուրները և դիմում ելին դեպի Վարդաբլուրի ընդարձակ դաշտերը: Նրանք իրենց լեկած ճանապարհով գնա-

ցին աղայի կալվածքը, Մուքել աղային հայտնեցին, վոր կուրթանցիների հետ գործն առանց միջադեպի անցավ: Մուքել աղան չափազանց ուրախացավ, գոհութուն տվեց իր ամենակարող աստծուն, առանձնապես շնորհակալութուն հայտնեց պրիստավին և քրտնավաստակ հողաչափ Սարգսյանին, ապա հայտնեց, վոր չերեկոյան մսի, ողու և գինու մեծ պատրաստութուններ ե տեսնում: Նրանք շատ ուրախացան, իրենց ուրախությանը մասնակից արին կազակներին և խթանեցին նժուգները: Անցան աղայի հողամասերով, կտրեցին Վարդաբլուրի դաշտի ընդարձակ տարածութունները և կանգ առան Վարդաբլուրի դիմաց: Հողաչափ Սարգսյանը և Ճոճկանեցի Հարությունը վոգեվորված իջան ձիերից և նորից գործի անցան:

Իսկ կուրթանցիները խումբ խումբ դիմում ելին Վարդաբլուրի դաշտ՝ դեպի հողաչափն ու կազակները: Նրանց առջևից գնում ելին Մագթաղյան Ավագը, Զուրաբը, Թամարանց տղերքը և կարապետ Հարությունյանը: Ծերերն անգամ մոռացել ելին իրենց ծերութունը և մասնակցում ելին արշավանքին:

Յերբ նրանք մոտեցան Վարդաբլուրի ձորակին, վորոշեցին կուրթանցիներից մի խումբ մարդ ուղարկել Վարդաբլուր և իմաց տալ վարդաբլուրցիներին իրենց դիտավորութունների մասին, իսկ Ավագը, Զուրաբը և մի քանի տասնյակ կուրթանցիներ դիմեցին դեպի հողաչափն ու կազակները:

Յերբ վարդաբլուրցիներն իմացան հողերը խլելու գուժը, իսկույն խմբվեցին ծերունի Պողոսի տան շուրջը և սկսեցին աղմկել: Դուրս չեկավ ծերունի Պողոսը և չեր իմանում ինչ անել: Բոթն անսպասելի չեր և սարսափելի: Փաշտերով դուրս գալ կազակների դեմ: Չե՞ վոր բոլորին կկոտորեցին: Բայց և այնպես, չեր կարելի թողնել, վոր աղան հողերը սեփականացնե:

«Ո՛ր, դժվար է, ծանր է», — մտածում էր ծերունի Պողոսը և լեւք չեր կարողանում գտնել:

Մինչ այդ ամբոխն աղմկում էր և գոռում:

— Մեկ է, աղան մեր հողերը խլում է, սովից պիտի կոտորվենք: Ավելի լավ է միանգամից գնանք կոտորվենք:

— Հայրիկ, լավ են ասում, — ասաց ծերունի Պողոսի մեծ վորդին՝ Դրիգորը:

— Գնանք, ձեր կամքը լինի, վորդիս, — ասաց ծերունին և արցունքները հոսեցին նրա տանջված աչքերից:

Վարդաբլուրցիները ևս, արագանցան իրենց տները և սկսեցին կուրթանցիների նման հաստ ու լերկար փայտերով զինվել:

Ծերունի Պողոսը գնաց գլուղամեջ, վորպեսզի չետ մնացող չլինի: Նա տեսավ, վոր գլուղում դժվար թե մարդ լինի մնացած, ուստի ցանկացավ գլուղից դուրս աշխատանքի գնացած մարդկանց ևս մասնակից անել: Նա այդ պատճառով գնաց գլուղի լեկեղեցին, մոտեցավ զանգակատանը, ձեռքն առավ զանգակների պարանները և սկսեց հավարի զանգ տալ:

Մարդիկ իրար անցան և սկսեցին լեկած կուրթանցիների հետ դիմել դեպի հողաչափն ու կազակները:

Շարքերի առջևից գնում էր Մաճկալանց Ստեփանը, նրա լեռնից՝ Սհոն, Գիքոր ամին, Փարեմուզը, Ապրոն, Գրիգորը, Մստոն, Ալեքսան Յեգեյանը, Արշակը և Վարթմը: Նրանց լեռնվից խառնիխուռն գնում ելին մի քանի հարյուր գլուղացիներ, վորոնց մեջ աչքի չեր ընկնում Փահլևան Համբարը: Նրա լերակների մեջ խաղում էր հորդացած արյունը և նա մի լատան ձեռքին, ողի մեջ ձոճելով, գնում էր: Նրա աչդ հաղթական լերթը գլուղացիների մեջ ուժեղացնում էր քաջության, խիզախության, կոռովության վոգին, և դեն վանում կասկածամտությունը և վախկոտությունը:

Նրանք իջան ձորակը, անցան դետը, բարձրացան ձորագլուխը, ընկան դաշտը և դիմեցին դեպի կազակները:

Յերբ Ավագը նկատեց, վոր վարդաբլուրցիները մեծ բանակով են գալիս, վորի առավ: Նա մոտեցավ հողաչափին:

— Լսիր Սարգսյան, վերջ տուր հողը չափելուդ:

Հողաչափը զարմացած գլուխը բարձրացրեց, նայեց Ավագին և մի դառն ժպիտ խաղացրեց դեմքին:

— Ի՞նչ ես նայում, — գոռաց Ավագը: — Քեզ ասում են՝ հողը չափելուդ վերջ տուր, նշանակում ե՛ք վերջ տուր:

— Դու ո՞վ ես, ո՞ւմ շունն ես, վոր ինձ հրամայում ես, թե՛ վերջ տուր, — զայրացած գոչեց հողաչափը և նայեց պրիստավի կողմը:

— Յես քու... — կատաղած գոչեց Ավագը, կռացավ մի մեծ քար առավ և ուժգին խփեց հողաչափի կրծքին: Հողաչափը ընկավ գետին:

— Հրացանները պատրաստ, — բղավեց պրիստավը կազակներին, ապա դարձավ խմբված գլուղացիների կողմը և հրամայաբար գոչեց. — Հեռանալ այստեղից:

— Դու ո՞վ ես, վոր մեր հողերը խլում ես և մեզ ել հրամայում ես հեռանալ, — ամբոխի միջից հնչեցին մի քանի տասնյակ ձայներ:

— Յես ձեր... կրճտացրեց ատամները Սարիբեկյանը և գոչեց կազակներին. — Կրակ ողի մեջ: Հրացանները ճարճատեցին: Սակայն այդ միջոցին պրիստավի և կազակների համար անսպասելի և անակնկալ կերպով, փայտավորված գլուղացիներից մի քանի տասնյակ հոգի կազակների թիկունքից հարձակվեցին և փայտերի ուժգին հարվածներով ցրիվ տվին զորամասը: Ձիերը խրատեցին և սկսեցին ուշագնաց կազակներին քարշ տալ լայն դաշտի միջով:

Պրիստավը սուրը հանեց և ցանկացավ կազակներին հրամայել ձիերի սմբակների տակ տրորել խռնված գլու-

դացիներին, բայց այդ միջոցին փայտի մի քանի հարվածներ իջան նրա թիկունքին և թևերին, աջ թևը կոտրվեց, նա սուրը ձեռքից վար գցեց և ցանկացավ ձախ ձեռքով բռնել աջ թևը՝ ցավը մեղմելու համար, սակայն արագ մի վոստյունով վրա հասավ Ստեփան Մաճկալյանը, բռնեց պրիստավի ձիու սանձից, մյուս ձեռքով սկսեց փայտի հարվածներ տեղալ նրա ուսերին և գլխին: Այդ միջոցին Փահլևան Համբարը, վորն արդեն իր ուժերն ազատ չափելու տեղ եր գտել, մի հարված իջեցրեց պրիստավի ձիու գավակին, վորից նժույզը կորցրեց իր հավասարակշռութունը, գավակը և փորը գետնովը տվեց, ապա ուշքի չեկավ, Ստեփանին տվեց իր վոստքերի տակ և պրիստավին փախցրեց դեպի Ջալալ-Ողլի: Ավագն ել արդեն մի փայտ եր գցել ձեռքը և իր ընկերներին՝ Սողոյի, Առաքելի և Հակոբի հետ հարվածում եր գլուխները կորցրած կազակներին, և մահամերձ գետին գլորում: Յերբեմն փախչող կազակները կրակում ելին ամբոխի կողմը, վորից Մհոն և մի քանի հոգի ծանր վիրավորվեցին: Գյուղացիներն արբել ելին իրենց հաղթանակով: Նրանք կարողացել ելին կազակների զորամասը լերկու մեծ մասի բաժանել: Մի մասը փախչում եր Ջալալ-Ողլի, մյուս մասը՝ դեպի Մուքեղ աղայի կալվածքը: Իսկ մի քանի տասնյակ ձիեր փայտերի հարվածների ցավից գլուխները կորցրած, զանազան ուղղությամբ իրենց վրա տանում ելին ուշաթափ կազակներին:

Գյուղացիներն առհասարակ աշխատում ելին մարդ չսպանել, այլ միայն ծեծել և իրենց հողամասերից քշել՝ կարծելով, վոր դրանով հարիքը կարող են կանխել:

Յերբ գլուխները կորցրած կազակները փախան դեպի Ջալալ-Ողլի, արդեն մութն եր:

Վարդաբլուրցիներն ու կուրթանցիները պատրաստեցին նաչափայտեր, վիրավորներին զրեցին նրանց վրա, տարան Վարդաբլուր՝ միշտ բարձր կանչելով՝ «Ախ, մի

Մուքեղ աղան չեկած լիներ, մենք նրա դատաստանը տեսնելինք: Նա լավ պրծավ ձեռքներիցս»:

8

Կռիվն անցնելուց վեց որ հետո, Մուքե Գեվորգի կոնդի լեռնից լերևաց կազակների մի զորամաս: Գյուղացիները վաղուց ելին լսել, վոր եկեղեկուցիա պիտի գա, գյուղերը պատժի լենթարկի և կռվի մասնակիցներին ձեռքակալի: Դրա համար ել կռվի մասնակիցներն աշխատում ելին հագուստները փոխել, իսկ ուրբեր միրուքներ ունեցին թողած, այդ հինգ-վեց որվա ընթացքում խուզել ելին տալիս և սափրվում: Այնպես վոր, ծեծվող և վիրավորվող կազակները նրանց ճանաչել չեցին կարող: Գյուղացիներից վոմանք Ջալալ-Ողլում լսել ելին, վոր եկեղեկուցիան սարսափելի բան ե, սակայն կռվի մասնակիցներից վոմանք արհամարհական պատասխան ելին տվել և հեզնել թե կազակներին և թե սպասվող դժբախտություններին: Բայց կալին աչնախի գյուղացիներ ել, վորոնք խելոք և դիտուն մարդկանցից իմացել ելին, թե եկեղեկուցիան ինչ սարսափելի դժբախտություններ ե բերում: Նրանք իրենց լսածները տարածել ելին գյուղերում և սարսափը կրկնապատկել: Այնպես վոր, գյուղացիներն արդեն մահադող սպասում ելին այդ լերկնային պատուհասին: Նրանց սարսափը բազմապատկվեց, չերբ արդեն իրենց սեփական աչքերով տեսան դեպի Վարդաբլուր շարժվող կազակների եկեղեկուցալին հեծելագորը: Գյուղացիներն իրարով անցան: Նրանք խմբվեցին ծերերի շուրջը, սկսեցին աղմկել: Նույն ժամին սկսեցին հնչել լեկեղեցու զանգերը, ահագանգ տալ: Խուճապն ավելի ու ավելի կրկնապատկվեց, զգիրը թաղից-թաղ, տնից-տուն ընկած, կանչում եր. «Զուլում ե գալիս, ալ ժողովուրդ, աղ ու հաց տարեք կազակների առաջը»: Ծերուկներն ու պառավները գնում ելին լեկեղեցու բակը, համբուրում լեկեղեցու դուռը,

ձեռքները պարզում յերկինք և աստծուց ոգնություն խնդրում: Պառավ կանայք լալով շրջում ելին տնից-տուն սարսափահար հայտնում, վոր Նեռն աշխարհ ե յեկել և 'սարհի վերջն ե: Մի քանի յերազաններ ել պատմում լն, վոր շուտով ջրհեղեղ պիտի լինի և աշխարհը կործանվի:

Ամեն տեղ տիրում եր սուգ, լաց, վայնասուն: Մի խումբ մարդիկ, ծերունի Պողոսի խորհրդով, սկսեցին շրջել գյուղամեջ, հանգստացնել հասարակությանը, վոր եկզեկուցիան սարսափելի չե, ինչպես նկարագրում են, այլ վոր յեկող կազակները յերկու ու պիտի մնան և վերադառնան իրենց տեղը:

Մինչ գյուղացիների մի մասը հանգստացնում եր գյուղացիներին, մյուս մասը շարունակում եր ահաբեկել՝ բարձր կանչելով՝ «Հէյ, ժողովուրդ, գուլում ա... Աստծու յերկնային պատուհաս ա յեկել... Մեր գյուղերը Սողոմ-Գոմոր պիտի դարձնեն... Աղ ու հաց տարեք առաջները... Գուցե թե մեզ խղճան»:

Կանայք լալիս ելին, ծնկները ծեծում: Ամուսինները սաստում ելին նրանց, վոր լռեն:

Կազակները հետզհետե մոտենում ելին և սարսափն ու խուճապը դարձնում աննկարագրելի:

Գուժկանները բոթը հասցրին Կուրթան և աչտեղ ել սկսվեց նույն իրարանցումը, սուգը, լացը, վայնասունը և խուճապը:

Վարդաբլուրի ծերերից ընտրվեց մի պատգամավորություն, վորն աղ ու հացով գնաց դեպի կազակների գործասը: Նրանց մեջ ելին ծերունի Պողոսը, Փարեմուղը, Գիքոր ամին և մի քանի այլ մարդիկ:

Կազակների գործասը հասավ ձորակը և կանգ առավ: Ծերունիներն անցան գետը՝ սպիտակ դրոշակ պարզած և աղ ու հացով մոտեցան կազակներին: Կազակների կապիտանը և գավառապետն առաջ անցան: Նրանք վերցրին հաց, աղ ցանեցին վրան և կերան:

— Այժմ, — դարձավ գավառապետը խնդրող ծերերին, — ձեր գյուղը և կուրթանցիները մի ամբողջ ամիս պիտի կերակրեն կազակների գործասը:

— Աղա, պատրաստ ենք ձեր հրամանը կատարելու, — ասաց ծերունի Պողոսը:

— Հա, վոր ալգպես ե, — ասաց գավառապետը, — այժմ անհրաժեշտ ե ձիերի համար բերել հինգ հարյուր փութ զարի, իսկ կազակների համար հարյուր փութ թխած հաց և քառասուն փութ վոշխարի միս:

— Մեր աչքի վրա, աղա: Այդ բոլորը կկատարենք, — ասաց ծերունի Պողոսը: — Բայց մի բան ենք խնդրում: — Ի՞նչ:

— Վոր գյուղը չմտնեք, վորովհետև կանայք սարսափելի վախենում են:

— Այդ ձեր գործը չե, — գայրացավ գավառապետը: — Դեռ գյուղն ել պիտի մտնենք և ձեր դատաստանն ել տեսնենք: Իսկ այժմ ձեզ տրվում ե քսան ըուպե ժամանակ:

— Հրաման քեզ, աղա, — ասաց ծերունի Պողոսը և ցանկացավ իր ընկերների հետ յետ դառնալ:

Սակայն այդ միջոցին կազակներից մեկը մոտեցավ, պատվի առավ գավառապետին և ասաց.

— Ձերդ գերապատվություն, այս ծերերը ևս կռվի մասնակիցներից են:

— Ովքե՞ր,

— Այ՛ սա, սա և այս մյուսը, — կազակը մատով ցույց տվեց Փարեմուղին, Գիքոր ամուն և ծերունի Պետրոսին:

— Այդ դեպքում, — դարձավ գավառապետը ծերունի Պողոսին, — դուք գնացեք կատարելու մեր պահանջները, իսկ սրանք կմնան մեզ մոտ: Ապա դարձավ կապիտանին.

— Հրամայեցեք կազակներին, վոր սրանց իսկույն կապկպեն:

Կապիտանի հրամանով, իսկույն բաժանվեցին մի

քանի կազակներ, առանձնացրին ծերերին և կապկպելով՝ խիստ հսկողութիւն տակ առան:

Ծերունի Պողոսը մեծ վշտով ու ցավով չեա դարձավ, անցավ գետը և դիմեց գլուղ:

Նա գուլթը հողորդեց գլուղացիներին և չերիտասարդները գործի անցան: Մի քանի հոգի գնացին հանդը վոչ-խարներ բերելու, մի խումբ ել սկսեց հաց հավաքել, իսկ մեծամասնութիւնը՝ հորերից զարի հանել:

Առաջին հերթին գլուղացիները, ծերունի Պողոսի և նրա վորդի Գրիգորի գլխավորութեամբ, կազակների կապիտանին հանձնեցին հարցուր փութ թխած հացը, ապա հինգ հարցուր փութ զարին և մսացու խոցերը:

— Այժմ, ծերուկ, — դարձավ գավառապետը ծերունի Պողոսին, — պիտի գամ գլուղը և դուք ցուց պիտի տաք կովի մասնակիցներին:

— Պարոն գավառապետ, յես վոչ վոքի չեմ տեսել կովի գնալիս:

— Ստում ես, քյոփակ, — զայրացավ գավառապետը:

— Են Սուրբ Սարգիսը գիտենա, պարոն գավառապետ, — սկսեց արդարանալ ծերունի Պողոսը:

— Այ դու խորամանկ ծեր աղվես, — գլուխը չերերցրեց գավառապետը և ապա հրամայեց արդէն. — Հիմա կտեսնենք քո Սուրբ Սարգսի գիտենալը: Դե, տղերք, — դարձավ կազակներին, — գնանք:

Մի չերեսուն ձիավոր կապիտանի և սպայի հետ անջատվեցին զորամասից և դիմեցին գլուղ:

Կազակների չերեալը գլուղի մեջ սարսափ առաջացրեց: Բակերից և տներից դալիս ելին պառավ կանանց լացի ձայներ: Պառափներն աշխատում ելին իրենց աղիոյորմ լացով ազդել կազակների վրա, նրանց գութը շարժել, վոր ներողամիտ լինեն դեպի կովի մասնակիցները:

Գավառապետը վորքան ցանկանում եր կովի մեղսա-

կիցներին անուններն իմանալ, չեր հաջողվում, վորովհետեւ գլուղացիները հրաժարվելով հրաժարվում ելին բանասելուց: Ուստի և, նա հարկադրված չեղավ տներից դուրս բերել բոլոր տղամարդկանց և ցուց տալ կովի վայրում չեղած կազակներին: Կազակներն իհարկե դժվարանում ելին ձանաչել մարդկանց և հաստատել, նրանց մեղսակից լինելը, բայց հարկադրված, իրենց խայտառակութիւնը ծածկելու համար, առաջին իսկ պատահած մարդուն մատնացուց ելին անում և ձերբակալել տալիս:

Գավառապետն իսկական մեղավորներին գտնելու համար հարկադրված չեղավ գնալ Տեր-Վանկոյի մոտ և նրա ոգնութիւնը խնդրել:

Տեր-Վանկոն զգաց, վոր չեթե գավառապետն իր տրնից դուրս գալով սկսի իսկական մեղավորներին ձերբակալել, ինքը մատնիչի անուն պիտի հանի և խայտառակվի: Ուստի և, հետքը կորցնելու համար, կանչել տվեց Մուքել աղային:

Մի ժամ հետո, կազակներով շրջապատված, հայտնվեց նաև Մուքել աղան և իջավ քահանայի մոտ:

Մի քանի ժամ հետո Տեր-Վանկոյի տնից դուրս չեղավ գավառապետը, նստեց իր ձին և սկսեց կազակներով շրջել գլուղի մեջ: Նա ցուց եր տալիս իրեն աջնպես, վոր, իբր թե, վոչ վոքի անուն իրեն հայտնի չե, սակայն մի քանի ժամից հետո պարզվեց, վոր նրա մոտ կա առանձին ցուցակ: Ըստ այդ գաղտնի ցուցակի, գավառապետն անցնում եր տնից տուն և դուրս բերում մեղսակիցներին:

Լսվում ելին լաց, սուգ, վայնասուն և հեծեծանքներ: Կազակները զոռով դուրս ելին քաշում գլուղացիներին և մտրակներով անընդհատ հարվածում: Յերբեմն պառավ մայրերն առաջ ելին ընկնում, գութ աղերսում, սակայն կազակները և գավառապետը վոչ վոքի աղերսին ուշադրութիւն չելին դարձնում:

Այսպէս տեւեց յերեք ուր, վորից հետո մի քանի տասնակ մարդ արդեն գլուղամիջի տան սենյակներից մեկում բանտարկված ելին և մի քսան կազակ այդ շենքն ողակած պահպանում ելին:

Այս բոլորից հետո, գավառապետը հրամայեց կազակների զորամասի կիսին՝ մնալ գլուղում: Սկսեց կազակներին բաժանել տների վրա: Յուրաքանչյուր ընտանիքի տրվում եր յերեք կազակ, իսկ ձերբակալվածների ընտանիքներին՝ չորս, հինգ:

Այդ բոլորին գլուղացիները պիտի ամբողջ ամիս կերակրեին և պահեին:

Տեր-Վանկոն դիմեց գավառապետին, վոր Նիկողոսյանների, Սարգսյան Սաքոյի և Կոռքերանց Թաթոյի ընտանիքները, վորպէս անմեղսակից տարրեր, ազատվեն եկզեկուցիւից: Գավառապետը կատարեց քահանայի ցանկութունը և մնացած կես զորամասով անցավ Կուրթան, ուր արդեն տիրում եր լաց, սուգ, վայնասուն և հեծեծանք:

Նա այնտեղ այն դժվարություններին չհանդիպեց, ինչ դժվարությունների հանդիպել եր Վարդաբլուրում, վորոպհետև նախորոք կազմած ուներ ղեկավար մեղսակիցների անուն ազգանունները: Նա ուղղակի ցուցակով կանչել եր տալիս ուղած անձնավորություններին, կալանքի լենթարկում և կապկպել տալիս:

Այս բոլորը կատարելուց հետո, Կուրթանի մի քանի տասնյակ ձերբակալվածներին գավառապետը հանել տվեց գլուղական բանտից, զցեց կազակների առաջը և քշեց դեպի Վարդաբլուր:

Բանտարկյալների առջևից, թեքը կապած, գնում եր Ավագ Մազթաղյանը, նրա յետևից Կարապետ Հարությունյանը և Զուրարը, նրանց յետևից՝ Թամարանց, Ներկարարանց, Ղարաբաղսնց տղերքն ու Կուրթանի մյուս բանտարկյալները: Նրանցից մի քանի տասնյակ քալ հեռավորության վրա, քալում ելին բանտարկյալների հարազատները: Խեղճ պառավ մայրերը քալում ելին վոտա-

բոբիկ, տատասկների, դերբուկների միջով, վոտքներն արցունոտում, լալիս և փորձում մոտենալ կազակներին, սակայն կազակները չեա ելին դառնում, մտրակներով կամ հրացանի կոթերով հարվածում մոտեցողներին, հայնոյում և ապա արագացնում բանտարկյալների ընթացքը: Ճանապարհը շատ եր յերկար և բանտարկյալներն արագ քալելուց հոգնում ելին, ուստի ցանկանում ելին դանդաղ քալել և բողոքում ելին, բայց կազակներն այդպիսիներին հրացանի կոթերով հարվածում ելին և քշում:

Յերբ նրանք հասան Կտեվան և պիտի նրա միջով անցնեին, Ավագը մի պահ կանգ առավ, ձեռքը մեկնեց աղալի հնամենի դղյակի կողմը և ասաց.

— Ո՛վ Մուքել աղա, սա քեզ եժան չի նստիլ: Մի ուր քո դատաստանը կտեսնենք:

Մոտեցավ մի կազակ, մտրակով ուժգին հարված իջեցրեց նրա թիկունքին և զայրացած գոչեց.

— Ի՞նչ ես կանգնել և խոսում: Գնա:

Ավագի արցունք զլուխը տվեց, բայց ի՞նչ կարող եր անել: Նա միայն մի խոր հառաչանք արձակեց և մյուս ընկերների հետ շարունակեց ճանապարհը:

Նրանք հասան Վարդաբլուր և կանգ առան գլուղի փոքրիկ հրապարակում: Այստեղ բանտից հանեցին Վարդաբլուրի բանտարկյալներին, միացրին կուրգանցիներին, մի քանի տասնյակ հեծյալ կազակներով շրջապատեցին և քշեցին դեպի Զալալ-Ողլի: Նորից սկսվեց լացը, սուգը և վայնասունը: Մայրերը դարձյալ առաջ ելին նետվում, լալիս, ջահել ամոթխած հարսները հագիվ պահում ելին իրենց լացի ձայնը, խուլ հեկեկում, և արցունքի կաթիլները հոսում ելին նրանց խոշոր, սև, տանջված աչքերից: Նրանց մանկիկները գրկներից պարզում ելին իրենց փոքրիկ թաթիկները հեռացող հայրերի կողմը և թոթովում:

Լալիս ելին մայրերը, լալիս ելին ծերերն ու պառավները և գնում բանտարկյալների յետևից:

Նրանք գնում ելին, բայց միաժամանակ չեղին իմանում, թե ուր են գնում և ինչու:

9

Տուն դարձավ ուրացող Ռոստոմը: Նա նստեց որեր, գիշերներ և մտածումունքների ծովն ընկավ:

Տանջում եր խիղճը՝ լերդումը սուտ, գլուղացիների վողբը դառնաղի, ծերունիների վիշտը անամոք և բռնավածների ընտանիքներն անոգնական:

Նա տանջվում եր:

Յեվ նրա տանջանքը խորն եր ու անհատնում:

Նա քուն չունեի:

Հենց վոր ուզում եր քնել, լերեվում եր դժողքն իր սարսափներով:

Յելնում եր Ռոստոմը հանկարծ իր տեղից և սարսափած բացականչում:

Ձարթնում եր նաև Ռոստոմի կինը և մարդուն նախատում:

— Ի՞նչ ես դեվոտել, ա՛յ մարդ: Ինչո՞ւ չես քնում:

Լսում եր Ռոստոմը, վոչինչ չեր խոսում:

Նա մտածում եր դժոխքի, լերդումի և տանջվող գլուղացիների մասին:

Նա քնում եր:

Ու ահա լերեվում եր կրկին դժոխքը՝ նոր սարսափներով և զարհուրելի արհավիրքներով:

Նա հավաքում ե իր վերջին ուժերը և մի սարսափելի հիշ արձակում...

Ռոստոմը զարթնեց իր ձայնից:

Նա հազիվ եր շնչում և ամբողջ մարմնով դողում եր:

Ձարթնեց նաև Ռոստոմի կինը և նախատեց դիվահար ամուսնուն:

Արթնացավ նաև նրա մեծ վորդին՝ Արզումանը և մտածեց հոր մասին:

Մի ժամ հետո, Ռոստոմը հանգստացավ:

Նա կանչեց Արզումանին և ասաց.

— Յես մեռնում եմ, բայց դժբախտ մահով: Դու տեսար, թե մեր լերդումն ինչ արավ: Մենք քանի տներ ավերեցինք մեր լերդումով: Չար աղան կուրացրեց մեզ, և լերդումը մեր աչքերը բռնեց: Լսիր, վորդիս, հորդ վերջին խոսքը: Անցիր աղալի հակառակորդների կողմը և պաշարիր նրա դեմ: Ծախիր իմ ամբողջ ունեցվածքը և այդ գործի համար դիր: Յեթե չկատարես վերջին կամքս, իմ նզովքը քեզ:

— Լսում եմ, — բացականչեց Արզումանը:

Նա հեկեկաց և արցունքները հոսեցին նրա աչքերից: Հեծկտաց նաև Ռոստոմի կինը:

Յանկացան քահանա կանչել, բայց Ռոստոմն արդելեց:

Մի ժամ հետո նա մեռավ:

Սուգն ընկավ նրա տան մեջ:

Իմացան նաև հարեվաները, հավաքվեցին այնտեղ և սկսեցին վողբալ նրա լեղերական մահը:

Նրանք լալիս ելին, հիշում իրենց հարազատներին, լալիս և լացացնում իրար:

Ռոստոմի դիակը տարան լուսաբացին, դրին լեկեղեցի և հաջորդ որը թաղեցին:

Հուղարկավորները վերադարձան Ռոստոմի տունը, կերան նրա հոգեհացը, խմեցին ջերմացնող ողին, գովեցին հանգուցյալի բարեմասնությունները, առաքինի գծերը, ցանկացան նրա հոգուն լեղեմի դրախտը և կրկին խմեցին ննջեցյալի հոգու լուսավորության կենացը, ցրվեցին իրենց տները և մոռացան թե Ռոստոմին, թե նրա գործերը, թե նրա ընտանիքը:

Չմոռացավ նրան միայն նրա հարազատ վորդին՝ ճշմարտախոս և անշահախնդիր Արզումանը:

Նա լուռ եր որերով և մտածում եր իր մեռած ու դժբախտ հոր մասին: Հոր խոսքերը դեռ հնչում ելին նրա ականջներում:

Նա դարձավ Մուքել աղայի ամենադաժան և կատաղի հակառակորդը:

Նա ծախեց հոր ունեցվածքը և աղայի դեմ պայքարի լեւալ:

Նա շրջում էր քաղաքից քաղաք և փաստաբանների դռները ծեծում:

Մի որ ել, լերբ նժույգ հեծած, մեծ հույսերով քաղաք էր գնում, ճանապարհին յերևաց Մուքել աղան և կանգ առավ:

Նա մի կատաղի հայացք ձգեց Արզումանի վրա և զայրութիւն հագիւլ զսպելով՝ ասաց.

— Հորթը ցուլ գոմեշի հետ լուծ չի քաշիլ, Արզուման: Յեկ քեզ ել մի թուլափայ տամ, ձենդ կտրիր, վեր ընկիր: Ի՞նչ ես յետևիցս ընկել, վոտքիցս բռնել և բաց չես թողնում:

— Սազական չե աղա մարդուդ ալդպիսի բան, — ասաց Արզումանը: Տեսնում եմ, վոր ծերացել ես, աչքերիդ լույսը հատել ե և լուծ քաշող լեզն աչքիդ հորթ ե յերևում, իսկ քոս ընկած ձագը՝ ցուլ գոմեշ: Դո՛ւ, աղա, յեթե աչնքան զալումս ես, վոր կարողանում ես մենակ յերկու դուռի մեծից սկսած մինչև փոքրերի վոտքերը կծել և արյունոտել, ապա մեզ համար ել աչնքան դժվար չե մի կատաղած գալլի վոտքիցը բռնել:

Աղայի արյունը գլուխը տվեց: Նա չէր սպասում, վոր Արզումանն իրեն կարող էր ալդպիսի պատասխան տալ: Յանկացավ նորից մի բան ասել, սակայն զգաց, վոր դիմացինն ավելի վատ պատասխան կտա, ուստի միայն ատամների արանքից սպառնալիս ասաց:

— Յես քո դատաստանը հետո կտեսնեմ:

— Այդ կտեսնենք, — հեզնեց Արզումանը ու մտրակեց իր ձիուն:

— Այո, կտեսնենք, — կրկնեց Մուքել աղան և իր նժույգը քշեց դեպի իր կալվածքը:

Մի գիշեր, լերբ Արզումանը հանգիստ քուն էր մտել, պրիստով Սարիբեկյանը, հիսուն կազակի գլուխ անցած, լեկավ Գյարգառ գյուղը և շրջապատեց Արզումանի տունը: Շները տեղերից լեւան և սկսեցին կատաղած հաջել: Պրիստովը, տանուտերը և ուրյաղնիկն ուղեցին առաջ անցնել, սակայն շներն ավելի կատաղեցին և քիչ էր մնում, վոր ձիավորներին ձիերից վայր բերեն: Նրանք կանգ առան և վորոշեցին Արզումանին տնից դուրս կանչել:

— Այ տանտեր, վեր կաց, — կանչեց տանուտեր Ներսեսը:

Արզումանը յերազի մեջ էր: Նրան թվում էր, թե ինքը սարումն ե և ավագակները բինին վրա լեն տվել:

Այ տանտեր, — կրկին կանչեց տանուտերը:

Շներն ավելի կատաղած սկսեցին հաջել: Գյուղի գանազան կողմերից թարժած լեղած շները ևս սկսեցին անհանգիստ հաջել և խանգարել գյուղի անդորրը:

— Այ տանտեր, — ավելի զայրացած հնչեց տանուտերի ձայնը:

— Այ մարդ, — ձեռքով հրեց Աննամանն իր ամուսնուն:

— Հը, ի՞նչ կա, — շփոթված քնից վեր թռավ Արզումանը:

— Յես ի՞նչ իմանամ, շներն իրար կերան: «Տանտեր» են ձեն տալիս, ինչ վոր անձանոթ ձեներ են լսվում:

Արզումանն իսկույն հագավ անդրավարտիկն ու արխալուղը և դուրս լեկավ պատշգամբ:

— Ո՞վ ե, — ձայն տվեց նա:

— Մենք ենք, — լսվեց տանուտերի պատասխանը:

— Դե տուն լեկեք, ել ինչո՞ւ լեք դռանը կանգնել:

— Ենպես շներ չունես, վոր մարդու մոտ թողնեն:

— Արի հո, — շներին կանչեց Արզումանը և առաջ անցավ:

— Դե արի, — ձայն տվեց նա:

— Մենակ լես չեմ. պրիստամի ել ե:

— Վոչինչ, ալելի լավ: Յեկեք տուն, հանգստացեք, հաց կերեք, հետո կիմանանք, թե ինչու լեք լեկել:

— Հաց ուտելու ժամանակ չունենք:

Շորերդ հագիր և շտապ դուրս լեկ, — հաստ ձայնով, սառը և հրամալար ասաց պրիստավը:

Արզումանը լուեց: Նա հասկացավ, վոր մի բան կա, թե չե ինչո՞ւ պետք ե մութ գիշերով գալին իր մոտ: Նա լետ դարձավ, մտավ տուն և սկսեց հագնվել:

— Ի՞նչ խաբար ե, — հարցրեց կինը:

— Ով ե իմանում, սատանան գիտե, — տարակուսանքով պատասխանեց Արզումանը. — տանուտերն ու պրիստավն են և մի խումբ ձիավոր կազակներ:

— Անպատճառ քեզ բռնելու լեն լեկել, — ասաց Աննըմանը և սկսեց աղիողորմ լաց լինել:

— Ինչո՞ւ լես լաց լինում: Ի՞նչ եմ արել, վոր բռնեն:

— Հենց եդ ե, վոր բան չանողներին են բռնում, իսկ անողներն ազատ ման են գալիս: Քեզ հազար անգամ ասի, վոր Մուքել աղալի հետ գլուխ մի դիր, — նախատեց Աննմանն ամուսնուն: Նա քեզ հոգեց-հոգի կկորցնի:

— Լավ, Աննման, — մեղմ ասաց Արզումանը, — տղամարդ մարդուն ամեն բան ել կպատահի: Վոչինչ:

— Արզուման, շուտ արա, — զրսից ձայնեց տանուտերը:

— Ա՛յ եդ բլբլան լեզուդ բերանումդ կտոր-կտոր լինի, բրբրվի, — անիծեց տանուտերին Աննմանը:

— Լավ, գալիս եմ, — պատասխանեց Արզումանը և ձեռքը մեկնելով կնոջը, ասաց. — Աննման ջան, չվախենաս: Ասում ե՛ իշին նստելը մի պակասութուն ե, վեր գալը լերկու: Տղամարդ չենք լինիլ, լեթե կիսատ ճանապարհից լետ դառնանք:

Ապա մոտեցավ մանկան որորոցին, նրա վրայից լետ քաշեց շորը և բացեց մանուկի դեմքը: Մանուկը քնած եր անուշ քնով և հանգիստ շնչում եր: Արզումանը նայեց,

նայեց նրա դեմքին, ապա շուրթերը կամացուկ մոտեցրեց ալտերին և մեղմ համբուրեց: Մանուկը մի անգամ շարժեց լուր փոքրիկ դանդրահեր գլուխը, փորձեց արթնանալ, բայց նորից քնեց: Արզումանը ծածկեց նրա լերեսը, մի վերջին անգամ նայեց կնոջն ու դուրս լեկավ բախ: Կինն սկսեց լալ ավելի աղիողորմ, վաղբալ իր վիճակը: Մանուկն արթնացավ քնից և նուշնալես սկսեց լաց լինել:

— Ա՛յ մարդ, շուտ արի, հոգիներս հանեցիր, բարկացած ասաց տանուտերը:

— Դուք ել վրաս ենպես եք զայրանում, վոր կարծես հազար տուն եմ թալանել ու մի եդքան ել մարդ սպանել: Գո՞ղ եմ, ավագակ եմ, վոր եդքան հարահրոց եք գցել ու շտապեցնում եք:

— Շատ մի խոսիր, — զայրացավ պրիստավը: — Ա՛յժմ դու մեր կալանավորն ես:

— Ինչո՞ւ:

— Հետո կասենք, թե ինչու: Իսկ այժմ պարտավոր ես լռել և հետևել մեդ:

— Բայց վո՞ր մեղքերիս համար:

— Այդ չգիտեմ: Լռիր: Եյ, Վալսոդիա, — դարձավ պրիստամի ուրջադնիկին, — հավաքիր տղաներին և սրա թևերը կապկպիր:

Ուրջադնիկը նշանացի սուլեց, և բոլոր կազակները հավաքվեցին: Ուրջադնիկն Արզումանի թևերը լետ տալով, կապեց լետևից և զցեց ձիերի առաջը:

Նրանք նույն գիշեր Արզումանին տարան Զալալ-Ողլի: Մյուս որն առավոտյան կանուխ, կազակները ձիերի առաջն արած, քչեցին նրան կալոնկա, ուր մի քանի որ պահելուց հետո տարան Թիֆլիս և նետեցին Մետեխի բանտը:

Այդտեղ Արզումանը մնաց վեց ամիս, սակայն մինչև վերջն ել չիմացավ, թե իրեն ինչու լեն բռնել և թե լերբ պիտի իր դատը լինի:

Յոթերորդ ամսին նրան տարան ինչ վոր տեղ, ուր հսկայական բազմութուն կար և վորտեղ գտնվում եր

Մուքել աղան: Այնտեղ ելին նաև շրջանի գյուղերից մի քանի սեահողի մարդիկ, իրենց տանուտերը, պրիստավ Սարիբեկյանն ու նրա հետ չեղած ուրյադնիկը:

Սկսվեց Արզումանի քննությունը: Նրան մեղադրում ելին ա՛յն բանի համար, վոր, իբր թե, յերբ Մուքել աղան քաղաքից վերադառնալիս ե լինում իր կալվածքը, Արզումանը դուրս ե յեկել դարանից ե դուշույնով հարձակվել Մուքել աղայի վրա: Մուքել աղան կարողացել ե պաշտպանվել ա՛յնքան ժամանակ, մինչև վոր դուրս են յեկել նրա մարդիկը ե փախցրել մարդասպանին: Իհարկե, Արզումանն սկսեց արդարանալ ե ապացուցել, վոր ալդ բոլորը սարքած անհիմն հերյուրանք ե, սակայն դատավորը լռեցրեց նրան ե հարցաքննեց վկաներին: Բոլոր վկաներն ել միաձայն հաստատեցին, վոր իրոք այդ որը, ճանապարհով իրենց անցնելու ժամանակ, ականատես են յեղել ալդ բոլորին ե մարդասպանին հալածել: Խոսք առավ նաև պրիստավ Սարիբեկյանը ե հայտնեց, վոր Արզումանին ձերբակալելու ժամանակ նա դիմադրություն ե ցուց տվել: Այս բոլորն ապացուցված համարելով, դատավորը, հինգ ըրպե տևող ընդմիջումից հետո, հայտարարեց դատարանի վճիռը, ըստ վորի Արզուման Ռոստոմի Քյալաշյանը լենթարկվում ե տաս տարվա ազատազրկման, վորպես հակապետական տարր ե անաբեկիչ, աքսորվում ե Արևելյան Սիբիր՝ չուր յեղբայրակիցների — աքսորված վարդաբլուրցիների ե կուրթանցիների մոտ, ե վոր վորոշումը լենթակա չե բեկման:

Այդպես ել արին:

Մի քանի ամիս հետո, Արզումանն արդեն աքսորված վարդաբլուրցիների ե կուրթանցիների մոտ եր:

11

Նստած ե ծերունի Պողոսը:

Նրա չիբուխից ծուխը պալան-պալան բարձրանում ե

վեր, ե նա մտածմունքների ծովն ե սուզվում:

Նրա դեմ նստած ե նրա մեծ վորդին՝ Գրիգորը:

Նա ես ծխում ե ե հոր նման միտք անում:

Նրանց հետ նստած են նաև Վարդաբլուրի ե Կուրթանի պատկառելիները՝ իմաստուն ու մեծ ծերունիները: Նրանք չեն խոսում:

Նրանք ես տխուր են ե տրտում:

Նրանք ես ծխում են, ե ծուխն ամպի նման բռնում ե ողան:

Բոլորն ել ունեն մի ցավ, մի անհատնում վիշտ:

Նրանց հոգին կրծում ե Տեր-Հակոբի, Տեր-Հովհաննեսի, յերկու գյուղի դավաճանների ե մեծատունների քստմեղի արարքը:

Նրանք մտածում են Մուքել աղայի ազահուլթյան ե մարդկալին ստորության մասին:

Նրանք ծխում են:

Յեվ ծուխը պատում ե նրանց ալեհեր գլուխները, ինչպես մթին ամպերը սարերի ճերմակ կատարները:

Նրանք ծխում են ե յերբեմն տխուր հառաչում:

Նրանց հառաչանքները դուրս են թռչում նրանց խոր հոգուց, ինչպես հառաչքը պղտոր կոհակների:

Նրանք ծխում են:

Վերջապես ուզեց խոսել մի ծերունի ե արցունքները հոսեցին նրա աչքերից:

Հասկացան նրան բոլոր ծերերը ե հուսադրեցին:

— Ավագս գնաց, — հեծկտաց ծերը, ե ծերունիները խոր հառաչեցին:

— Ավագս գնաց, ոջախս հանգավ, — հեկեկաց նա ե ուշագնաց յեղավ:

Տեսան ծերերը, խուլ հառաչեցին, բարձրացան վոտքի ե ուշքի բերին:

Հառաչեց ծերը կրկին ու նորից նստեց:

կրկին նստեցին ծերերը և սկսեցին վերստին ծխել:

— Ի՛նչ ենք անելու մենք, — վերջապես ասաց Փարեմուզ պապը, վորը բանտից նոր եր գուրս լեկել:

— Կկոտորվենք և կվոչնչանանք, — պատասխանեց Գիքոր ամին, վորը Փարեմուզի հետ քննիչ Լյուբամուզովին կաշառել եր և բանտից ազատվել:

— Մենք կկուվենք և կհաղթանակենք, — պատասխանեց Պողոսի վորդին:

— Մեզ կազակները կսպանեն այնպես, ինչպես սպանեցին Մոյսին, Խեչոյին, Սհակին և մյուսներին, — պատասխանեց Մաթոս բիձեն:

— Յեվ մնացածներին ել կքշեն հեռու Սիբիր, ինչպես քշեցին Ավագին, Կարապետին, Արզումանին, Առաքելին և մյուսներին, — ավելացրեց Ղարիբ քեռին:

Նորից լռեցին ծերերը և սկսեցին վերստին ծխել:

— Բա ի՛նչ ե լինելու մեր վերջը, — հարցրեց Մակի բիձան և ծխի միջից նայեց ծխող ծերերի դեմքերին:

— Ի՞նչ ե լինելու մեր վերջը, — ակամա կրկնեց ծերունի Պողոսը: — Մենք պիտի ծախենք մեր մնացած լեզները, կովերը, ձիերը, վոչխարները, խալիներն ու կարպետները, փողը տանք փաստաբաններին, նահանգապետին, դատախազին և մյուս զայլերին, վոր մեր հողերը, սարերը, չիմաններն ու անտառները հետ խլենք:

— Քի՛չ տվինք: Ինչնե՞րս մնաց, — պատասխանեցին մի խումբ ծերեր և խոր հառաչեցին:

— Ելի պիտի տանք, — խորհրդավոր կերպով Պողոսին հավանություն տվին մի քանի ծերեր:

Ու սկսեցին նորից ծխել:

— Քանի սենատը չի հաստատել, մենք պիտի գործը քանդենք: — Եսպես ասաց մեր վարձած փաստաբանը:

— Ավելորդ ե: Նորից անտեղի ծախսեր կանենք, — ասաց Պետրոս բիձան, ապա մռայլվեց և սկսեց ծխել:

— Մուքել աղան թագավորի մարդն ա: Նրա իմ խոսքերն ել նահանգապետի հետ ա նստում, վեր կենում: Իր գործը կզգի ու ամեն ինչ կվերջանա:

— Դուզ ա, հավանություն տվին մի քանի հողի և գտան, վոր պաշքարն ավելորդ ե:

— Ծովում խեղդվողն ոձից ել ե բռնում, — պատասխանեց ծերունի Պողոսը և գտավ, վոր պաշքարը պիտի շարունակել:

Վիճեցին ծերերը, տաքացան, լցրեցին իրենց մեծ ծխամորճերը, ծուխ արձակեցին իրենց ոռնագերից և վորոշեցին Վարդաբլուրից Գրիգորին ու Փարեմուզին և Կուրթանից Ջուրաբին ուղարկել Պետրբուրգ՝ կայսրի մոտ:

12

Մուքել աղան ելի անհանգիստ եր, չնայած այն հանգամանքին, վոր հենց եկզեկուցիայի ժամանակ նահանգապետ Դոնդարովը լեկավ, կտրեց լերկու գլուղի և Մուքել աղայի կալվածքի սահմանները և աղայի պահանջով իննը հարյուր քսան դեսյատին արգավանդ հողերը, ծործորները, դարավանդները, բացատները, անտառներն ու ծովակները տվեց Մուքել աղային:

Վարդաբլուրից լուր եր բերել գրագիր Մովսեսը, վոր գլուղացիները ծերունի Պողոսի տանը ինչ վորոգայթներ են լարում Մուքել աղայի դեմ և փաստաբանի խորհրդով Ջուրաբին, Փարեմուզին ու Գրիգորին ուղարկել են Թիֆլիս, վոր այնտեղից գնան Պետրբուրգ՝ կայսրի մոտ: Մուքել աղան ընկավ տաղնապի մեջ: Գնաց կայսրան և իսկույն հեռագիր տվեց Նշմիածնի գավառապետ լեղբորը՝ Յեգոր աղային, վորպեսզի նա կտրուկ միջոցներ ձեռք առնի: Յեգոր աղան իսկույն կայծակ — հեռագիր ուղարկեց իր հետ լեղբայրացած նահանգապետին, վոր ցարի մոտ մեկնող գլուղացիներին արգելի կայսրի մոտ գնալ:

Նահանգապետ Դոնդարովն իմացավ գյուղացիների տեղը, նետել տվեց նրանց Մետեխի բանտը, հեռագրեց Յեգոր աղային և վերջինս ել՝ իր յեղբորը:

Կայսրի մոտ գնացող մարդկանց ձերբակալման գույժը հասավ Վարդաբլուր ու Կուրթան և ցնցեց գյուղացիներին: Նրանք մի գեղեցիկ նժույզ նվեր տարան փաստաբան Արազին, վորը գյուղացիների կողմից մի աղերսագիր գրեց հետևյալ բովանդակութամբ:

Տիեզերասասան Ռուսիայի ամենաոգոստափառ և ամենավողորմած կայսր Ալեքսանդր Յերկրորդին:

Աղերսագիր.

Ամենավողորմած կայսր և հայր, արյունով ու արցունքով ենք գրում նորին կայսերական մեծությանդ մեր բազում տանջանքների և ցավերի մասին:

Աստվածագութ խնամակալ, Յերևանյան նահանգի Ղարաքիլիսա գավառի Վարդաբլուր և Կուրթան գյուղերի միջև ընկած կալվածքի տեր թավադ Դորդանյանը յուր կալվածքը, ընդամենը յերկու հարյուր հիսուն դեսյատին, յերկու հազար ութսու վաճառեց Ջալալ-ողլեցի Մուքել աղա Խան-Աղյանին, վորը կալվածքին տեր դառնալուց հետո, մեր գլխին դարձավ ցավ և յերկնային պատիժ:

Ամենավողորմած կայսր, ինքնակալ ամենայն ուսաց: Մուքել Խան-Աղյանը հողերը գնելիս գնման պայմանագրի մեջ մտցնել է տվել նաև մի կետ, ըստ վորի, իբր թե, յերկու գյուղի և Դորդանյանի միջև յեղել են իննը հարյուր քսան դեսյատին վիճելի հողեր, անտառներ և ինքը կալվածքի հետ գնել է նաև զրանց իրավունքը: Նա այնուհետև ալգեհատցի Ավետիք աղա Շանվերդյանի միջոցով կաշառեց շրջանիս գյուղերի տանուտերներին, Վարդաբլուրի Տեր-Հովհաննես քահանա Զոհրաբյանին, մեծատուններին և շատ սևահոգի մարդկանց: Տեղա քննության լեկած մարգային դատարանի անդամ Նիխազովի և ագենտ

Քիշմիշովի ներկայությամբ յուր սանահայր և շրջանի գյուղապարկցի գործակալ Տեր-Հակոբ քահանա Շահինյանի գլխավորությամբ սուրբ ավետարանի վրա յերգվեցնել տվեց նրանց՝ խաբելով թագավորի մարդկանց և ամենակարող աստծուն:

Ամենաոգոստափառ թագավոր կայսր, մեծ են Մուքել աղա Խան-Աղյանի արած անարդարութուններն ու անիրավութունները: Նա չսպասելով վերևից յեկող կարգադրության, յուր բարեկամ և մտերիմ պրիստավ Սարիբեկյանի գլխավորությամբ կազակներ բերել տվեց և անտեղի արյունահեղության պատճառ դարձավ: Այդ դեպքից վեց ու հետո յեկավ պարոն գավառապետը՝ իր հետ բերելով մի զորամաս, յերկու գյուղից ձերբակալեց վաթսուն հոգու, կազակների մտրակների տակ քշեց Ջալալ-Ողլի ավանը, այնտեղից ել Կալոնկա:

Չհեռացան, աստվածագութ և խնամակալ հայր, կազակների եկղեկուցիոն զորամասերը, վորոնք մեր գյուղերում ստերջ, յերինջ, կով ու յեզ չթողին, վոր չմորթեցին, խալի, կարպետ չթողին, վոր չտարան, հորերում գարի ու ցորեն չթողին, վոր չհանեցին: Մեր աչքերը ցամաքեցին լալուց և վողբալուց: Մենք այժմ մերկ ենք, սոված և անոգնական վիճակում:

Տիեզերասասան Ռուսիայի ամենաոգոստափառ թագավոր կայսր, մեր թշվառութունը գնալով չվերջացավ: Մեր բանտարկյալները յոթ ամիս մնացին Կալոնկայում: Նրանց ամեն ուր դուրս բերելիս և ներս տանելիս ամենաառաքալիկ կերպով ծեծում և կտտանքների ելին յենթարկում կազակները: Շատերն այնտեղ գտան իրենց գերեզմանը: Մենք աղերսեցինք նորին բարձր գերագանցության՝ պայծառափալ փոխարքային, վոր փութացնի մեր գործը և ընթացք տա, սակայն այդ ել չոգնեց: Մեր վարձած փաստաբանները մեր վերջին շապիկը

հանեցին և վոչինչ չկարողացան անել: Մենք մնացինք դարձյալ դժբախտ և վողորմելի վիճակում: Մեզ մնաց միայն մի բան անել: Այն ե՛ տոկոսներով պարտք վերցրած գումարներով ուղարկել մեր յերկու գյուղի համայնքների կողմից ընտրված լիազորներին ձեզ մոտ, վոր գան նորին մեծութունն թագավոր կայսրիդ վոտքն ու քղանցքները համբուրեն և գտնեն կորսված արդարութունը: Նրանք ձեզ պիտի պատմելին մեր բազմապիսի տանջանքների և կրած տառապանքների մասին: Դուք լսելով, աստվածագութ և խնամակալ հայր, պիտի սրբեցիք վըշտացալներն արցունքը և բալասան լինեցիք նրանց անբուժելի վերքերին, սակայն մեր լիազորներին ճանապարհ ընկնելիս ձերբակալեցին և մյուսների նման նետեցին Մետեխի բանտը:

Ամենաոգոստափառ թագավոր կայսր I-ի, սկզբանե անտի մեր հայրերն ու պապերն ասել են, վոր դուք բարի լեք և վողորմած, ուստի ծնրադիր աղերսում ենք աստվածահաճո վեհիդ՝ ազատել տալ մեր վորդիներին, վորոնք բանտում տառապում են կտտանքներից, անլուր տվալտանքներից, և հողերը վերադարձնել մեզ, վորոնք մեր արյունով են պարարտացած ու մեր ճակատների քրտինքով վոռոգված: Մենք յերախտապարտ կլինենք ձեզ: Ամեն որ մեր տեր աստծուն կաղոթենք և կաղաչենք, վոր ձեր զահը հաստատ պահի: Մեր վորդիներն ու թոռները վորդոց վորդի կհիշեն աստվածատիպ վեհիդ յերախտիքը և կլինեն ամենավողորմած ոգոստափառ թագավոր կայսեր ու յուր գահակալ հաջորդների հյուս հպատակներն ու ժառանգները:

Յերևանյան նահանգի Ղարաքիլիսա գավառի Վարդաբլուր և Կուրթան գյուղերի հասարակութուն:

Գյուղացիները մեծ հույս ունեին թագավոր կայսրի վրա: Նրանք հավատացած էին, վոր նա կլինի գյուղացի-

ների բաղձանքների կատարողը: Սակայն նրանց հույսերն դերև լեւան, յերբ ութ ամիս հետո Մետեխի բանտից ազատվեցին Գրիգորը, Փարեմուզը, Կուրթանցի Զուրաբը:

— Ո՛հ, — պատմեց Գրիգորը, — հենց ուզում էինք գնացք նստել, յերբ մեզ ձերբակալեցին ու տարան գցեցին Մետեխի բանտը, ուր նստողը չի կարող ապրել, վորովհետև ամեն առավոտ-յերեկո դուրս ելին բերում բանտի բակը, վար գցում ու տավարի նման բղավեցնելով ծեծում, ապա նետում նախկին տեղը:

Բազմաթիվ գյուղացիներ հառաչեցին և արտասվեցին: Ծերունի Պողոսը գլխի և դիմագծերի շարժումներով հասկացրեց վորդուն, վոր բանտի մասին վոչինչ չպատմի, վորպեսզի գյուղացիները նորից չվշտանան:

— Հա, — խոսքը փոխելով շարունակեց Գրիգորը, — ութ ամիս հետո, մեզ կազակներն առաջ արին և տարան նահանգապետ Դոնդարովի մոտ: Նրա մոտ կային շատ մեծ մարդիկ. — գեներալներ, գնդապետներ և ուրիշներ: Նահանգապետը վեր կացավ, խոսեց: Հենց վոր թագավորի հրամանի մասին խոսք ասաց, բոլորը մի մարդու նման վոտքի լեւան: Նահանգապետը կարգաց այդ հրամանը և մենք հասկացանք, վոր գործներս փչացել ե:

Նդտեղից վեր կացանք գնացինք մեր վարձած փառտաբանի մոտ, խնդրեցինք, վոր թագավորի գրած հրամանը նահանգապետի մոտից վերցնի, թարգմանի մեզ տա: Փառտաբանը կատարեց մեր ցանկութունը:

Այս ասելով՝ Գրիգորը ծոցից հանեց մի կապոց թուղթ, կապերը քանդեց, գրութունը հանեց և պարզեց հասարակությանը:

Հասարակութունը մի պահ քարացած մնաց, և ապա մարդիկ ակնածանքով ու զարմանքով սկսեցին հերթով նայել թղթին, ձեռքով շոշափել, մինչև վոր մեկը դարձավ Գրիգորին:

— Թղթին նայելուց բան չի դուրս գալ: Մի կարգա-

տեսնենք, թե եղ անտերում ինչ գահրումար ա գրած:

Գրիգորը հասարակութունից մի քանի քայլ լետ գնաց և բարձր կարգաց:

— Աստծու վողորմությամբ, մենք Ալեքսանդր Յերկ-
րորդ Կայսր և ինքնակալ համայն ուսաց և ալլն, և ալլն,
և ալլն: Նորին բարձր գերազանցութուն, Ձեր ստորադաս
մարմինների միջոցով հայտնեցեք Յերևանյան նահանգի
Ղարաքիլիսա գավառի Վարդաբլուր և Կուրթան գյուղերի
հասարակությանը, վոր խռովարարները վտանահարել են
տիեզերասասան Ռուսիայի սրբազան որենքները: Նրանք
կդատվեն: Հողերը կմնան կալվածատեր Մուքել Տեր-Թա-
դեվոսի Պան-Աղյանին:

— Ոհ, — հառաչեց ծերունի Կիրակոսը — Ավագի հայ-
րը. — անորենների աշխարհումն ենք ապրում: Մեզ հա-
վատացնում ելին, վոր լեթե ոսի թագավորի հպատակ
Ժողովուրդը դառնանք, լավ կապրենք:

Լավ ենք ապրում չե՞. Ղզլբաշի ժամանակ ել ես ո-
րենքը չկար: Ել ինչո՞ւ ենքան արյուն թափեցինք: Ո՞ւմ
համար: Ինչո՞ւ համար: Վոր Մուքելի նման աղաներին
բերեն մեր գլխին նստեցնեն, հա՛, վոր նրանց դռանը գերի
դառնանք, հացի տեղ քար կրծենք ու մեր զավակներն
ել արյունի մեջ լողան: Սա մարդագելի դրած որենք ե,
սա աստծո՞ւ սահմանած պատիժ ե, վոր տարին տասներկու
ամիս աղի արտասունք թափենք, դժոխքի բոցերումն եր-
վենք ու չհանգստանանք:

Ծերունին հայացքը հառեց լերկնքին, ձեռքերն առաջ
պարզեց և դառնացած շարունակեց.

— Ե՛ս ե քո դրած որենքը, հա՛, ես ե քո արդարու-
թյունը, վոր մենք կյանքներումս մի լավ որ չտեսնենք,
վերջումն ել շան սատակ լինենք: Թե դու աստված ես,
խոսի՛ր, վոր մեր սրտերն ել մի քիչ հովանան: Տեր-Հակոբն
ու Տեր-Վանկոն են քո սպասավորները. քո կողմից սահ-
մանած մեր գլխի դատավորները: Թե աստված ես, ինչո՞ւ

չես նրանց գլխին քարեկարկուտ թափում կամ գունդ ու
կծիկ շինում, վոր մենք ել իմանանք, վոր եղ վերևում
աստված կա ու մեղավորի համար սահմանված պատիժ:
Եղ պատիժները հենց մեզ համար ես ստեղծել, վոր մենք
տանջվենք: Մեր վո՞ր մեղքերի համար:

Ժողովուրդը քարացել եր: Վոչ վոք չեր ուզում
ծերունուն մեղադրել, վորովհետև նրանք տեսնում ելին,
վոր ծերունին ասում ե այն, ինչ իրենք են ցանկանում,
վոր նրա բողոքը դեպի աստված և «նրա ստեղծած» կար-
գերը՝ միանգամայն տեղին են: Սակայն, վերջապես, նրան
մոտեցավ ծերունի Պողոսը, բռնեց թևից և մեղմ ասաց. —
Աստծուն բողոքելով բան չի դուրս դալ:

— Ել ո՞ւմ բողոքեմ, ո՞ւմ մեղադրեմ, վոր արդարու-
թյունը գտնեմ:

— Վոչ վոքի ել մի բողոքի՛ր: Մի որ արդարությունն
ինքն իրեն կգա:

— Յե՛րբ կգա:

— Եղ լես ու դու չենք տեսնի, բայց մի որ կգա:

— Բա մենք լալով ու վողբալով պետք ե գերեզման
իջնենք:

— Այո՛, մենք ել, մեզ նման շատերն ել, մինչև վոր
մեր ծոցից դուրս կելնեն մեր վրեժ առնողներն ու աշ-
խարհիս վրա կիշխի արդարության թագավորությունը:

— Ե՛, լեթե հիմա չի գալու, լեթե մենք մեր աչքով
չենք տեսնելու, թող ել չգա:

— Եղ ինչ ես ասում, — վշտացած ասացին մի քանի
տասնյակ մարդիկ:

Ծերունին լռեց և ալլա չխոսեց:

Մուքել աղայի հաղթանակից հետո, Վարդաբլուրից
և Կուրթանից, անգամ հարևան գյուղերից, գյուղացիները
խումբ-խումբ գնում ելին Կտեվան՝ աղայի կալվածքը և

հող խնդրում: Գնացողներն իրենց հետ տանում ելին գարու, հոնի, չամչի ընտիր ողի, գառներ և այլ նվերներ: Աղան ի հարկե, վերցնում եր բոլորը և հողերը բաշխում: Առաջին կարգի վարելահողերից բաժին եր հանում Վարդաբլուրի և Կուրթանի դավաճաններին, իսկ յերկրորդ կարգի հողերը տալիս եր այն գյուղացիներին, վորոնց այնքան ել իր հակառակորդը չեր համարում: Յերկրորդ կարգի հողերից տալիս եր նրանց, վորոնք մեղանչել ելին աղալի առաջ և այժմ աղերսագին ձայնով ներողամտություն ելին խնդրում: Աղան «հայրաբար» ներում եր նրանց և խրատում, վոր հանգիստ լինեն, աստծու և թագավորի գծած ճանապարհով գնան: Գյուղացիները գլխակոր և ձեռքները կրծքներին լսում ելին աղալի յերկարապատում ճառերն ու խրատները:

Բայց կալին և շատ գյուղացիներ, վորոնք չելին ուզում աղալի առաջ ստորանալ, մուրացիկի նման նրա դռանը կանգնել, հող հայցել: Նրանք գնում ելին հեռավոր գյուղեր, այլ կալվածատերերից կիսովի հողեր վերցնում և կամ նոր կտրված անտառների տեղերը մաքրում և վարելահող դարձնում:

Բայց այդ ել տաժանելի աշխատանք եր: Ի՞նչ անել, մտածում ելին հողագուրկ գյուղացիները:

Ամենից շատ մտածում եր ծերունի մաճկալ Արշակը, վորովհետև մեծ յեղբոր՝ Գրիգորի և հոր՝ Պողոսի մահվանից հետո յերեսուն և վեց հոգուց բաղկացած տան հողսը ծանրացել եր իր վրա:

— Մեծ հարս, դարձավ նա մի որ մեծ յեղբոր կնոջը, — ճար չկա... Գաթա-մաթա պատրաստիր՝ վոր ողու հետ տանեմ աղալին սեցնեմ: Գուցե սիրտը գուժ ընկնի, մեղ ել հող տա:

Մեծ հարսը լռեց:

— Ինձ հետ Համբարը, Խաչատուրը, Ապրոն, Ալեքսանը, Մաճկալանց Ստեփանն ու Մատոն ել են գա-

լիս, — մի քիչ լռելուց և ծխամորճը լցնելուց ու վառելուց հետո, շարունակեց Արշակը:

— Լավ, հարսներին թխել կտամ: Բայց խելքս բան չի կտրում, վոր աղան մեզ հող տա, մանավանդ, վոր իմանա՝ Պողոսի վորդին ես ու Գրիգորի ախպերը:

— Ո՞վ իմանա: Գուցե տվեց, — ծուխը ուռնդերից դուրս փչելով ասաց Արշակը: Ես հինգ վեց տարի կլինի, ինչ հողերը խել ե, բա մոռացած չի՞ լինի:

— Արշակ, — կրկին դարմացավ մեծ հարսը, — ուրիշ ժամանակ դու չես մեր գլխին խրատներ կարդում, իսկ հիմի խոսում ես ութ տարեկան յերեխայի նման: Նա ես պես ո՞՞չ, վոր եդքան շուտ իր թշնամուն մոռանա:

Արշակը լռեց:

Մյուս առավոտ, յերբ գյուղի նախիրները և վոչխարի ճերմակ հոտերը գնացել ելին արոտ և ծածկել զմրուխտապատ լեռների լանջերը և ժպտուն արևն իր վոսկե վարսերը փռել եր չնաշխարհիկ աշխարհի վրա, Վարդաբլուր գյուղից նվերներով ծանրաբեռնված դուրս յեկան Արշակը, Խաչատուրը, Մաճկալանց Ստեփանը, Համբարը, Ապրոն և Մատոն:

Նրանք անցան փոքրիկ ձորակը և յեկան աղալի կալվածքը տանող ճանապարհի վրա:

Նրանք քալում ելին և չելին կարողանում խոսելու բան գտնել: Հեռվում վարում ելին դուժանավորները և հորովել տալիս: Իսկ նրանց ճանապարհի յերկու կողմն ընկած դավաճանների ծփուն արտերը փալ ելին արձակում և ճանապարհորդների նախանձը շարժում: Թռչունները ճովողում ելին ամեն կողմ և դաշտերը զբաղիչ դարձնում: Ամենից շատ յերգում ելին արտուտները, բարձրանում վեր... վեր... յերկնի լազուրի մեջ, ճովողելով իշնում դեպի յերկիրը և ապա կրկին բարձրանում յերկնի կապույտը:

— Ո՛հ, նայե՛ք, ե, — կանգ առնելով և ձեռքը պտտեցնելով չորս կողմը, գոչեց Արշակը: — Բա մարդ ես դեղեցիկ աշխարհում սգվոր լինի ու տարին տասներկու ամիս սոված: Ես բոլորը միթե աստված մի մարդու համար ես ստեղծել:

— Եհ, սիրտս մի կտրտիր, Արշակ, — հառաչեց Մածկալայից Ստեփանը: — Դրա համար չե՛ր, վոր բերդ նստեցինք: Մեր հողերը շան ու գալլերի բաժինն ե դառել: Եդ դեռ բավական չե, հիմի ել պիտի գնամ իմ թշնամու դռանը կանգնեմ, նրա ձեռքը համբուրեմ ու մեղա գամ: Ինչո՞ւ... Ձեզ ել, ամբողջ աշխարհին ել հայտնի լե, վոր Կարմիր Քարի Տակի հողերը լեա հող դարձրի: Ինչքան քար ու քութուկ եմ դուրս տվել եդտեղից...

— Ե՛, Ստեփան, սիրտդ ինչո՞ւ լեա շուռ բերում, — նախատեց Համբարը: — Ո՞վ չի քեզ նման աշխատել: Մե՛նք ենք մենակ ես որին: Թե մենակ մենք ենք, ասա՛ վեր կենանք գնանք քարիցն ընկնենք, պրծնենք աղաներից ել, աշխարհից ել: Տեսնում ես՝ վոր մի բան աշխարհովի ե, պիտի ձենդ կտրես, տեղդ նստես: Հը՞, — հարցրեց նա՝ ձեռքը մեկնելով դեպի լեռների շարքերը: — Են ել աղայի լե, թե՛ չե: Թե՛ մենակ մեր հանդն ե աղային:

— Ճիշտ ե ասում Համբարը, Ստեփան, — հավանութուն տվեց Ապրոն: — Ուր գնում ես, լա աղայի հող ե, լա վանքի, լա ուղեխնի ու Կնյազի: Ես ել իմացիր, վոր ես պես աղաներ կան, վորոնք ենքան հող ունեն, վոր լեռեք որ վտաքով գնաս, ծերը չես հասնի: Ես Մուքել աղան նրանց մոտ լինչ ե վոր: Վոնց վոր մի քոս ընկած ջորի:

— Լավ քոս ընկած ջորի գտար, — հեգնեց Խաչատուրը, վոր լռելայն լսում եր ընկերների խոսակցութունը: — Եդ քոս ընկած ջորին Ղարամամադ, Թողլուղ կոչված տեղում լեռեք հայրուր քսան դեսյատին թագավորից նվեր ստացած հող ունի, թե չե:

— Ունի, համա իրենը չի:

— Բա ո՞ւմն ե:

— Տվել ե փոքր լեղբայրներին:

— Լավ: Դա տվել ե լեղբայրներին: Բա Իզդիրում քանի՞ հարյուր դեսյատին ունի:

— Եդ չգիտեմ: Միայն ասում են, վոր շատ ունի:

— Են ել՝ Մուքելի ամենամեծ լեղբորը, — Գեվորգին ե պատկանում, — ասաց Արշակը:

— Եդ վոթտեղացի լեն եդ Խան-Աղյանները, վոր աշխարհը բռներն են հավաքել ու դեռ չեն կշտանում, — զայրացած հարցրեց Ստեփանը:

— Ձհանդամի վերի ծայրիցն են:

Ասում են վոր դրանց հայրը, Տեր-Թադևոսը, լեղել ե նորքցի: Նա վերցրել ե իր կնոջն ու վեց աղային, լեկել Մարց և գնացել ե Ոձուն: Ջալալողլեցի մի խումբ առևտրականներ նրան հրավիրում են Ջալալ-Ողլի, ետեղ մի ջրաղաց են շինում ու նվիրում Տեր-Թադևոսին, վոր դրանով կարողանա ապրել և իր ընտանիքը պահել, վորովհետեւ են ժամանակ Ջալալ-Ողլու բնակչութունն ենքան քիչ ե լինում, վոր չի կարողանում մի քահանա պահել: Մի տաս տարի հետո Վարանցովը հրավիրում ե ազնվականների ու մեծ մարդկանց ժողով: Այս ժողովում շատ շատերին ազնվականների կոչում են տալիս, հող չունեցող ազնվականներին նվիրում են լեռեք հարյուր քսանական դեսյատին տարածութուն: Եդ ժամանակ Մուքել աղան լինում ե տասնութ տարեկան: Նա մասնակցում ե եդ մեծ ժողովին, ազնվականի կոչում և Ղարամամադում լեռեք հարյուր քսան դեսյատին հող ե ստանում: Հողը նվիրում ե լեղբայրներին, ինքը բանկից լեռելու հազար ռուբլի ե վերցնում ու առնում ե Ղորղանյանի հողերը, վոր մեր հոգին հանի: Հասկացա՞ք:

— Հասկացանք: Բայց եդ փողը վոնց պիտի տա, — հարցրեց Մստոն:

— Տո՛, վողորմելի, — զայրացավ Ստեփանը, — իմ ու
քո ջանիցը կհանի, կտա: Դու մեր ցավը քաշի, մեր, թե
չե հո նրա մասին շատ մտածողներ կան: Նրա մեծ չեղ-
բայրը — Յեգոր աղան — եղբորս մեծն էս լերեսուն տա-
րուց ավելի չե, ինչ գավառապետ ե: Ենտեղի հայերի,
թուրքերի ու լեզգիների փողերը նրա գրպանն են գնում:
Ել չեմ ասում, թե լերը նա եստեղ ու Ղարաքիլիսայում
մոլորով եր, ինչքան փող եր հավաքում: Ինքը զաշաղներ
եր պահում ու նրանց թալանած ապրանքը նրանց հետ
հավասար կիսում: Հենց մենակ գող Յեղիկի բերած թա-
լանը բավական եր: Գիտե՞ս գող Յեղիկն ով եր:

— Չե:

— Գող Յեղիկը շորագլայցի լեր: Նրա անունը մե-
նակ բավական եր: Նա ազատ գնում եր Տաճկաստան,
Սարիզամիշի ք ուրդ բեգերի հետ կապեր ուներ ու նրանց
հետ ինչ թալաններ ասես, վոր չեր անում: Ես գող Յե-
ղիկը մի ժամանակ Ղարաքիլիսայում ծառայում եր
Յեգոր աղայի մոտ: Մի անգամ Յեգոր աղան ասում ե.

— Յեղիկ, լերք քեզ ինձ մոտ ծառայութան չե լի վերց-
րել, ամբողջ աշխարհում անունդ ղզրղում եր: Բայց հիմա,
եսքան ժամանակ շնորհքդ չտեսա:

Լավ, — ասում ե գող Յեղիկը, — քո կազակներից
ջոկիր տասներկու հոգու և թող փայտով ինձ վրա հար-
ձակվեն: Են ժամանակ կտեսնես, թե լես ինչ եմ:

— Շատ լավ, — ասում ե աղան:

Մյուս առավոտ, Յեգոր աղան կանչում ե կազակների
մեծավորին ու ասում.

— Եզ գող Յեղիկին պիտի խրատել: Զոկիր տասներկու
հոգու, լավ փայտեր տուր ձեռքները, ու թող դռանը կազմ
ու պատրաստ սպասեն, վոր հենց գող Յեղիկը գա, փա-
տերով հարձակվեն վրան ու մի լավ ծեծեն:

— Հրաման քեզ, — ասում ե կազակների մեծավորը:

Յերբ Յեգոր աղան պատշգամբում կազակների գլխա-
վորի հետ նստած ե լինում ու կազակներն ել կազմ ու
պատրաստ սպասում են գող Յեղիկին, սարի գագաթից
ղեպի կազակներն ե սլանում մի սալտակ ձիավոր: Մի
քիչ հետո իմանում են, վոր լեկողը գող Յեղիկն ե: Հենց
վոր նա ձին քշած մտնում ե բակը, կազակները բաժանվում
են լերկու մասի, վեց հոգի անցնում են գող Յեղիկի մի
կողմը, վեց հոգի՝ մյուս կողմը:

— Սկսեք, — հրամայում ե Յեգոր աղան: Բայց գող
Յեղիկը ժամանակ չի տալիս, վոր կազակներն իրեն խփեն:
Նա մեկ ձիու փորի տակն ե մտնում, մեկ դուրս գալիս,
կազակներին հարվածում, նորից չարխի նման պտույտ
գալիս, մյուս կողմի կազակներին հարվածում, այնպես
վոր, կազակները չեն կարողանում գոնե մի անգամ խփել:
Յեգոր աղան մնում ե ապշած: Գող Յեղիկը կազակներին
լավ ծեծում ե, գլուխները պատռում, նրանք արյունլվա
են լինում և այստեղ և այնտեղ, մորթված տավարի նման
ընկնում:

— Դադարեցնել, — գոչում ե Յեգոր աղան և գովում
գող Յեղիկի ճարպկությունն ու իզիթությունը:

Մի անգամ ել, գող Յեղիկը Աշտարակով ուզում ե գալ
Ղարաքիլիսա: Ճանապարհին շոգից շատ ե նեղվում: Եզ
ժամանակ խաղող ծախող չարվազարներ են անցնում:
Գող Յեղիկը դրանցից մեկից մի ճութ խաղող ե խնդրում:
Չարվազարը չի տալիս:

— Վայ, — կանչում ե Յեղիկը, — լես գող Յեղիկը
լինեմ, մի ճութ խաղող ուզեմ և չտա:

— Գնա կորիք, — կանչում ե չարվազարը: — Ով դուրս
ե գալիս, ասում ե լես գող Յեղիկն եմ:

— Դե վոր գող Յեղիկը չեմ, — ասում ե գող Յեղիկը,
— հիմա կտեսնես:

Այս ասելով, ուսից ցած ե բերում հրացանը և տալիս
չարվազարին սպանում ե: Վերջապես գող Յեղիկն ենքան

մեծ համբավ ե ունենում, վոր ոռւս տաճկական պատե-
րագմից առաջ Լորիս Մելիքովը փնտռում ե նրան, վոր իր
մոտ վերցնի, բայց այդ ժամանակ արդեն գող Յեղիկը
մեռած ե լինում:

— Ես պատմութիւնը գիտես, Մստո, ինչու արի:

— Ձե, — պատասխանեց Մստոն:

— Ես պատմութիւնը նրա համար արի, վոր իմանաս՝
Մուքել աղայի թիկունքում գալառապետ Յեգոր աղա կա
կանգնած, նրա թիկունքում ել թագավորի նման մարդիկ
և գող Յեղիկի նման ավազակներ: Դու քո վրա լես զար-
մացել: Մի քոռ խանչալ ես վրայիցդ կախ տվել և բար-
կացած ժամանակ հանում, խեղճ յերեխաների լեռնից
ընկնում և լեղապատառ ես անում: Տղամարդ ես Մուքել
աղայի ու գող Յեղիկի նման մարդկանց դեմ դուրս արի:

— Տո, քոռ Ապրո, — զայրացավ Մստոն, — կովի
ժամանակ լես չեյի՞, վոր տալիս ելի՝ կազակներին ու
ասում. — տղերք, ենքան տվեք, վոր կակ սաման դդելիմ:
Տալիս՝ նրանց աչքի մեջ տվեք, հոնքերին չտաք:

— Գետինը մտնես, Մստո, — կատակեցին ընկեր-
ները: — Դու վոր չլինեյիր, մենք դարդից կկոտորվեինք:

Այսպես խոսելով նրանք հասան աղայի այգիներին,
իսկ մի քանի բոլբոլից հետո՝ կալվածքի մեծ դռներին:
Դուռը բաղխեցին և հինգ բոլբոլ շանցած, դռան մոտ հալ-
տնրվեց կավատ Վոսկանը:

Նա մի քիչ յերերաց, յերբ տեսավ, թե դիմացն ով-
քեր են կանգնած:

— Աղան տանն ե, — հարցրեց Արշակը:

— Տանն ե, հիմա դեռ վեր չի կացել, պատասխանեց
կավատը:

— Լավ, մեզ առաջնորդիր, — ասաց Համբարն ու
առաջ անցավ:

Կավատը վոչինչ չասաց և լռելյալն առաջնորդեց

նրանց դեպի աղայի ծառաստանի մեջ բարձրացող հնա-
մենի դղիակը:

Դղիակի մուտքի յերկու կողմում, հաստ շղթաներով
գետին խրած քոթոկներից կապված ելին յերկու մեծ և
հսկա գամփռներ, վորոնք տեսնելով նորեկներին, սկսեցին
անհանգիստ շարժումներ անել և վզների յերկաթյա շղ-
թաները շարժել շառաչուն ձայնով:

Նրանցից բավական հեռավորութան վրա, մի խումբ
վորսի մեծ ու փոքր շներ խաղում ելին իրար հետ, յեր-
կար ականջները վեր ու վար անելով վազվզում: Մուքել
աղայի մեծ յեղբոր՝ Յեգոր աղայի ավագ տղան՝ Արամ
աղան, իր հետ հյուր բերած յերիտասարդ ընկերակիցնե-
րի հետ ինչ վոր բանի մասին տաք-տաք վիճում եր:

Նրանցից մի քիչ հեռու, մի քանի գեռատի հարս-
ներ ու գիմնագիւլի բարձր դասարանների հասուն աղջիկ-
ներ, ընկուզենու մեծ ծառից կապած ճլորթին նստած,
ճոճվում ելին և բարձր-բարձր ծիծաղում: Նրանցից ել
մի քանի տասնյակ քալ հեռավորութան վրա, մի խումբ
մշակներ փորում ելին ավազանների շուրջը, քաղաքի
ծաղկանոցներից բերված նոր, փարթամ և գեղեցիկ ծա-
ղիկներ տնկում: Այգիների պարիսպներից դուրս, մեծ
ճանապարհի վրա լսվում ելին հանդապահ Յախչիբեկի հալ-
հոյանքի և աղաչող տավարածների ձայները: Հանդապահը
դորուղիներից նախիրը բերել և գոմն եր քշում:

— Ով գիտե, մեր տավարն ե, տղերք, — ասաց Արշակը:

— Ենպես ել իմացիր, Արշակ, — պատասխանեց Ալ-
բոն: — Մերն ել ե, ձերն ել, հալա շատերինն ել:

— Եդ ել մի ջավ ու պատիժ, — ասաց Արշակն ու
ընկճված հոգով ընկերների հետ կավատ Վոսկանի լեռնից
քարե սանդուխքի աստիճաններով բարձրացավ պատըշ-
գամբ: Կավատը կարգադրեց, վոր դրսում սպասեն, իսկ
ինքը բացեց միջանցքի դուռը և ներս մտավ:

—Շէ՛լ գիտի, աշխարհ, աշխարհ, — հառաչեց Արշակը: Յերեկվա դռնեդուռ սոված քարշ չեկող Տեր-Թադեվոսի տղերքն ազնվական դառան, մեր հողերը խլեցին և մեզ ել առաջներին ճորտ շինեցին:

— Շէ՛, Արշակ, բավական ե, մի խոսիր, — հուզվեց Ստեփանը: — Շէ՛ր սև ամպերը գլխներիս հավաքեցիր: Հինգ տարի բերդ եմ նստել, հիմի չե՛լ կերթամ Մուքել աղալի տունը կմտնեմ, ես ձեռքերովս կխեղդեմ նրան, արնատեր կդառնամ, ինձ նորից Սիբիր կքշեն ու յերեխեքս անտեր կմնան:

— Ա՛յ տղա, գոնե սուս կացեք, ե, — Ստեփանի վրա զայրացավ Խաչատուրը: — Խոսելացա՞նք եստե՞ղ բռնեց: Կլսի:

Այդ միջոցին միջանցքի դուռը բացվեց, շեմքի վրա հայտնվեց կավատը և հրամայեց գլուղացիներին, վոր իրեն հետևեն: Յուրաքանչյուր վոք իր նվերները ձեռքն առավ: Նրանք մտան միջանցք: Կավատը դուռը բացեց նրանց առջև, նրանք իրար յետևից մտան աղալի առանձնասենյակը և շարվեցին պատի տակ:

Աղան նստել եր մի մեծ բազկաթոռի մեջ և այժմ խորազննին կերպով նայում եր նորեկներին:

— Հը՞, ի՛նչ կա, ի՛նչ խաբար ե, — մի քիչ լռությունից հետո իր բամբ ձայնով ասաց Մուքել աղան կանգնած գլուղացիներին:

— Վոչինչ, աղա, ջանիդ սաղություն: Քեզ համար մի քիչ ա՛յնուին ենք բերել, — ասացին կանգնածները՝ դասը սերտած աշակերտների պես:

— Շնորհակալ եմ, վոր իմ պատիվը պահում եք, բան եք բերում: Բայց ուրիշ աղաների ժողովրդի պես չեք: Բան բերելիս, տնաշեններ, ընդամենը յերկու յեփած հավ, մի քանի գաթա, մի քանի շիշ ողի չեք վերցնում գալիս, անունն ել դնում եք, թե աղալին տեսության ենք գնում:

— Վոչինչ աղա, ես մի անգամը՝ ներիր, մյուս անգամ ավելի մեծ նվերներով կգանք, — ասաց Ապրոն:

— Յես վոչինչ չեմ ասում, վորդիս: Համա լավ կանեք, վոր ուրիշ աղաների ժողովրդի նման շարժվեք: Գուցե ինձ մոտ հյուրեր ելին լինում, ի՛նչ կասեցին: Ձե՛լին ասի, թե քո ժողովուրդն ինչքան քիչ ե քեզ սիրում, վոր քեզ ընդամենը մի տանուտերի նվեր ե բերում:

— Կասեցին, — ասացին Ապրոն ու Համբարը:

— Վոր կասեցին, դրա համար ել ուրիշ անգամ գալիս աշխատեցեք հետներդ աղալավա՛յել բաներ բերել: Շն որն ինձ մոտ մի քանի աղաներ ելին յեկել: Շնպես բաներ ելին պատմում իրենց նվեր բերող գլուղացիների մասին, վոր բերաններդ բաց կմնա: Շէ՛ր տկերով գինի, ողի, սա-րերում լավ չաղացրած ղոչեր, գառներ, ընտիր խալիներ:

— Վոր ունենանք, աղա, մենք ել կբերենք, — ասաց Համբարը:

— Շ՛, — սրտնեղեց Մուքել աղան, — դուք հենց լավ կռիվ կանեք ու մարդ կխայտառակեք, թե չե ուրիշ բանի պետք չեք գա:

— Ներող չեղիր, աղա, — ասաց Խաչատուրը: — Մի փոթորիկ եր, վոր չեկավ գլխներովս անցկացավ:

— Մի մարդ, — խորհրդավոր կերպով սկսեց Մուքել աղան, — մի ոձի հետ պայման ե կապում, վոր ինքն ամեն առավոտ ոձի համար մի բաժակ կաթ տանի և դրա փոխարեն ոձը մի-մի վոսկի տա:

Այդպես ել անում են: Գլուղացին ամեն որ ոձի համար կաթ ե տանում վոսկի ստանում և շատ հարստանում ե:

Մի որ գլուղացին տեղ ե գնում և իր աղալին պատվիրում ե, վոր մինչև իր վերադարձը, կաթ տանի ոձին և վոսկին ստանա:

Տղան այդպես ել անում ե: Բայց մի որ աղալի քիթը ինչ քամի չե մտնում՝ չգիտեմ, վորոշում ե ոձին սպանել

և ամբողջ վոսկիներին միանգամից տիրանալ: Դրա համար ել, մի որ վերցնում ե հոր խանչալը, չուխալի տակ թագուն կապում, կաթը վերցնում և տանում ոձի բնի առջևը վար ե գնում:

Հենց վոր ոձը դուրս ե գալիս կաթն ուտելու, տղան հանում ե խանչալը և ոձին խփում: Բայց ոձի միայն պոչն ե կտրվում: Կատաղած ոձը հարձակվում ե տղայի վրա, փաթաթվում բկին և խեղդում:

Մյուս որը տղային թաղում են:

Անցնում ե վորոշ ժամանակ, գլուղացին վերադառնում ե, վողբում ե տղայի մահը, ապա մի չերկու որ անցնելուց հետո գալիս ե ոձի մոտ և ասում.

— Արի, ոձ ախպեր, մեր հին բարեկամութունը շարունակենք:

— Վոչ, — բնից ասում ե ոձը, — չերը լես տեսնում եմ պոչս կտրած, իմ հոգիս թուլնով ե լցվում, իսկ չերը դու լես տեսնում վորդուդ գերեզմանը, վրեժդ նորից ե զարթնում: Գնա, վոր իրար չտեսնենք: Մեր մեջ ալլես բարեկամութուն չի կարող լինել:

— Կով, եդ թողնենք, — ձայնի լեղանակը փոխելով շարունակեց Մուքել աղան, — ինձ անհրաժեշտ ե իմանալ, թե դուք մինչև հիմա ինչո՞ւ չե՞լիք գալիս:

— Վորովհետև, աղա, — մեջ ընկավ կավատը, — մինչև հիմա բռնված ելին:

— Բռնված ելին... — ծանր և խորհրդավոր կերպով հարցրեց Մուքել աղան:

— Հրաման քեզ, աղա, — ասացին բոլորը միասին:

— Բա ինչո՞ւ չե՞լիք խելոք կենում, վոր ձեզ չբռնելին, — հեզնական և խրատական լեղանակով շարունակեց Մուքել աղան:

Գլուղացիները լռեցին:

— Հորթը ցուլ գոմեշի հետ չի քաշիլ, — ծանր և

խրատական լեղանակով ասաց Մուքել աղան և դարձավ կավատին. — ապա, Վոսկան, մի ծանոթացրու տեսնեմ ովքեր են սրանք և կովի ժամանակ ինչեր են արել:

Կավատը մեկ-մեկ մոտեցավ կանգնածներին:

— Սա, աղա, Պողոսի վորդին ե — Գրիգորի լեղբայրը: Սա կովի ժամանակ հինգ կազակի գլուխ ե պատռել և չերեք ձիու մեջք կոտրել: Սա չիլ քու Ապրոն ե, — հողաչափ Սարգսյանի գլուխը ծակողը: Ես ել, աղա, Մաճկալանց Ստեփանն ե: Ինքն ել, հալոն ել, լեղբայրներն ել Ղորդանյանի ճորտերն են լեղել: Սրա բոլոր ազգականները, Կտեփանի մյուս ճորտերի նման, Շամշադին, Շուլավեր ու Փամփակի Պարնիգեղ են գնացել, իսկ ինքն ու լեղբայրը մնացել են այստեղ և բնակութուն հաստատել Վարդաբլուրում:

— Մնացել են եստեղ, վոր իմ հողերը խլեն, — հեզնեց Մուքել աղան:

— Հրաման քեզ, աղա, — շարունակեց կավատը: — Դա են մարդն ե, վոր մի ձեռքով պրիստավի ձիու սանձը բռնել եր, մյուսով պրիստավի գլխին և ուսերին վալրենու նման հարվածում եր:

— Ես մինն ել, աղա, փահլեվան Համբարն ե: Սրա մասին լսած կլինես: Սա կովի ժամանակ մի գերանաչափ դրը ձեռքն առած, վոր ձիավորին վոր վրա չեր բերում, ձին ու ձիավորն իրար հետ գետին ելին ընկնում: Բայց ինքը շատ եժան պրծավ: Կովից հետո, մյուս որը, Վարթմի հետ գնացել եր մորուքը վեր անիլ ավել, վոր ձեծվող կազակները չճանաչեյին: Յեվ իրոք չեյին ճանաչել:

— Ես մեկն ել, աղա, Յեզանյան Ալեքն ե, — Կաշտոն, — ձիու հայտնի գող:

— Սուտ ե ասում, աղա, լես գող չեմ, — բողոքեց Ալեքսանը:

— Խաչիր աղայի ձին դու չեյի՞ր գողացել, վոր հետո ել քեզնից Ալի քլոխվան գողացավ, — զայրացավ կավատը:

— Եղպես չի, ինչպես դու չես ասում: Հիմա, աղա ջան, մի քիչ նեղութուն քաշեք, չես պատմեմ, տեսեք չես մեղավոր եմ:

— Լավ, պատմիր, — հետաքրքրվեց Մուքել աղան:

— Յես, աղա ջան, — սկսեց Ալեքսանը, — իմ ու վոդորմածիկ հորս արծաթե գոտիները ծախեցի ու մի լավ ձիու քուռակ առա: Եդ քուռակն ենպես գեղեցիկ եր, վոնց վոր պատկեր, կարծես չերկնքի ամպերի մեջ լողացած լինեք: Վոր չելի նստում, ենպես եր գնում, վոնց վոր հրեղեն: Գնդակ արձակելիս լետեվից չեր հասնի:

Թավադ Իսպիր աղան շատ խնդրեց, վոր ես քուռակս ծախեմ իրեն, բայց չես չհամաձայնվեցի: Վերջը մի որ ուրիշների միջոցով գողացավ: Յես տեղն իմացա, բայց արդեն ուշ եր, վորովհետև իմ քուռակս տարել ելին Բորչալու մի աղալարի ձիու հետ փոխել: Յես ել մի գիշեր գնացի նրանց բնից եդ նոր ձին գողացա, բերեցի գյուղ: Մի որ ել, չերբ չես հունձ ելի գնացել, մեր տանեցիք լուր բերեցին, թե թուրք սարվորների քոչն անցնելիս, մի թուրք մեր ճալաններից ձին որուգած տեղից կտրել ե ու քշել տարել: Շատ դես ու դեն ընկա, վերջըն իմացա, վոր իմ ձին Ալի քյոխվան ե գողացել: Աշնանը, քոչն իջնելու ժամանակ, գնացի քոչի ճանապարհին թագնվեցի: Հենց մութն ընկավ, քոչվորները Յիսուս աղբյուրի մոտ կանգ առան: Իմացա, թե Ալի քյոխվի քոչը վորտեղ ե իջել, կամաց մոտեցա: Այդ ժամանակ մի փոքր ամպ լեկավ ու թե ինձ և թե քոչվորներին ծածկեց: Յես իսկույն վազեցի Ալի քյոխվի վրանի մոտ արածող չորս լեզն առաջ արի ու արագ քշեցի դեպի Շուլավեր: Մի լեզը ճանապարհից փախավ: Մյուսները Շուլավերում ծախեցի ու լեկա մեր գյուղը: Մեկ ել իմացա վոր Ալի քյոխվան Սադիրբագդեցոնց վրա գանգատ ե տվել, վոր դատարանի միջոցով նրանցից չ'զների վնասն

առնի: Մի որ իմացա, վոր Ալի քյոխվան մեր գյուղն ե լեկել: Գնացի մոտը և ասացի. — Ալի քյոխվա, քո լեզներն այսինչ որն այսինչ տեղից գողացան, թե՛ հա: Դո լեզներն ես նշաններն ունելին: Թե՛ հա: Ասի՛ լեզներդ չես եմ գողացել և վոչ թե Սադիրբագդեցիք:

— Շատ լավ ես արել, վոր գողացել ես, — ասաց նա: — Դե արի գնանք գյուղամեջ:

— Շատ լավ, — ասեցի չես:

Գնացինք: Յես ել շատ լավ գիտեմ, վոր Ալի քյոխվան ինձ ուղում ե խաբել: Հենց մոտեցանք գյուղամիջին, չես աննկատելիորեն լետ ընկա, մի ուրիշ ճամբով ծովեցի ու գնացի մեր տուն: Մյուս որը մեր գյուղի խանութպանը պատմեց, թե Ալի քյոխվան գժվել եր: Ասում եր, թե՛ մի մարդ ինձ ասաց, վոր քո լեզները չես եմ գողացել ու հիմա չկա:

— Լավ, եդ եղպես, — ասաց կավատը. — Սամադ աղայի ձին դու չեյիր գողացել:

— Եդ մեկը, ձեզանից ինչ թագցնեմ, գողացել եմ: Համ ել ասենք՝ աղայից ձի գողանալը գողութուն չե:

— Լռիր, — գայրացավ Մուքել աղան: — Յերես տըվինք, աստառ ել ես ուղում: Մյուսների մասին ինչ կասես, Վոսկան, — դարձավ նա կավատին:

— Սա չել, աղա, — ձեռքով ցուցց տվեց Մատուի կողմը, — մի կորած մոլորածի մեկն ե: Սրան եսպես խանչալ կապած չտեսնես: Վոտդ վոր թափ տաս, հարյուր վերստ դենը կփախչի: Բայց կովի ժամանակ առուծ եր դարձել: Խանչալը փալեցնելով, մեկ կոխում եր ես կազակի ձիու փորը, մեկ եմ կազակի ձիու փորը և գոռում. — աղերք, ենպես տվեք, վոր կակ սաման գդելիմ:

Ներս մտավ աղայի հանգապահ Յախշիբեկը և խորը գլուխ տվեց:

— Հը, ի՞նչ կա, Յախշիբեկ, — դարձավ աղան հանդապահին:

— Զանիդ սաղություն, աղա: Ղորուղներից տավար եմ բերել:

— Ո՞ւմ տավարն է:

Մի մասը կուրթանցիներինն է, մյուս մասը վարդաբուրցիներինը:

— Դե, աղա, — դարձավ Ապրոն Մուքել աղային, — մենք ինչ հանգ ունեցինք՝ խլեցիք: Սոված տավար է, ի հարկե պիտի գա ու ղորուղներն ընկնի:

— Ի՞նչպես թե, — գայրացավ Մուքել աղան: — Իմ հանդում եք ուզում արածացնե՞լ: Տավարի մի գլխին լերկու ուռբլի տվեք, նոր բերեք արածացրեք: Ի՞նչ է, ձեզ համար եմ ղեղին վոսկիները համրել ու Ղորղանյանի գրպանը լցրել:

— Աղա, — դարձավ Յախշիբեկն աղային, — տավարի մի մասը սրանցն է:

— Դրա համար ե եղպես գլխիս փաստաբան դարձել:

— Աղա, դե ես մի անգամը ներիր, — խնդրեց Համբարը:

— Ի՞նչ ներել, — բորբոքվեց աղան: — Յուրաքանչյուր տավարի համար լերեք ուռբլի կրեք, նոր բաց կթողնենք:

Տիրեց լուռթյուն:

— Բա աղա, չասիր, թե եսպես հավաքվել, ինչու լեք լեկել, — ասաց քիչ հետո Ապրոն:

— Ինչո՞ւ լեք լեկել:

— Յեկել ենք խնդրենք, վոր մեզ ել բահրայով հող տաս:

— Ձեր վոտքի կոխած տեղը նավթ պիտի լցնել և կրակ տալ: Դուք ի՞նչպես եք լեկել ինձ մոտ և հող պահանջում:

Ապրոն սկսեց տրեխները հանել: Աղան դարձացած նայեց նրան:

— Ե՞դ ինչ ես անում, Ապրոն:

— Վոչինչ, աղա, — տրեխները հանելով շարունակեց Ապրոն, — տրեխներա հանում եմ, վոր մտնեմ ջուրը, գետըն ի վեր գնամ գյուղ, վոր քու հողը չտրորեմ:

Գնա, կորիր, անամոթ, — գայրացավ աղան: — Յեկել եք ինձ իմ բնակարանում ամոթանք եք տալիս: Դուք գնացեք:

Բոլորն իրար լեռնից դուրս լեկան պատշգամբ:

— Անամոթներ... — լեռներից ատամները կրճատցնելով շարունակեց Մուքել աղան: — Մեկն ասում է՝ աղայից ձի գողանալը գողություն չէ, մյուսն իմ սեփական բնակարանում վոտքերն է հանում... փո՛ւ, անամոթներ... Դեռ շատ կգաք ու կերթաք: Յես ձեզ բոլորիդ ել առաջիս մեկ-մեկ մոզի կդարձնեմ: Դեռ փորներումդ հին հացից կա: Սպասեցեք, եդ ել կհատնի, են ժամանակ կըտեսնենք:

14

Մեծ եր աղայի հրճվանքը:

Մեծ եր դավաճանների բերկրանքը:

Նրանք նստում ելին աղայի այն հին դղյակում և խնջուլքներ սարքում:

Գինին հոսում եր գիշեր ու ցերեկ:

Մորթվում ելին ճերմակ ու չաղ ամուլկները և նրանց սեղանը գառան մսով զարդարում:

Նրա՛նք խմում ելին...

Ու նորից հորդում եր նրանց բերկրանքը և նրանց կյանքը հեղեղում:

Նրանք խմում ելին...

Ու նրանց սեղանը զարդարում ելին վոսկե քաղաք-

ներից լեկած փափկասուն և չնաշխարհիկ տիկիներն ու լեզնիկի նման զարնանագեղ որիորդները, յերգում քաղցրավազ ձայնով և կաքավում:

Նրանք խմում ելին...

Գլուղացիներն անդադար բերում ելին միշտ գառներ՝ ականջները կտրած, տկերով գինի, հանձնում Մուքել աղալի ծառաներին վորպես նվեր աղալին, վորպես նշան իրենց տածած «անսահման սիրո» և «անխախտ» բարեկամության:

Նրանք խմում ելին...

Իսկ նրա արտերում, ամռան կիզիչ արևի տակ, աշխատում ելին բազմաթիվ գեղջկուհիները և ապխտվում:

Գեղջուկ լերիտասարդները վարում ելին աղալի աշնանացանի համար հնձած խոտհալքները, արտերը հընձում և շեղջերը Մուքել աղալի նորակառուցց մարագներին և կալերի շուրջը կուտակում:

Հասակավոր գլուղացիները պտտեցնում ելին աղալի կամը, կալսում, թեզ քամում ու նռան-հատ ցորենն աղալի ամբարները լցնում:

Գլուղացիները փթերով բերում ելին յուղ, պանիր, մեղր, գեղեցիկ խալիներ, նվիրում աղալին, նրա փառքը մեծացնում և նրան հարստացնում:

Անսահման եր աղալի բերկրանքը, անսահման եր նրա հարստությունը:

Վոչխարի ձերմակ հոտերն արածում ելին գլուղացիներից խլած մանիշակագուլն լեռների լանջերին, և նրա հովիվները փչում ելին իրենց սրինգները, վողբում իրենց դառն ու չարքաշ վիճակը:

Նախիրներն ամեն լեռեկո և առավոտ գալիս ելին նրա բինան, և գեղջկուհիները փշիշալով կթում ելին կաթը, տաշտերով փռում, արաժանը հավաքում և աղալի համար հարցուրավոր փթերով յուղ ու պանիր պատրաստում:

Ահռելի ցուլերը, կուշտ ու կուռ կերած, գոռում ելին ամպի նման, ծմակները թնդացնում և գետինը լեղջուրներով փորում:

Նրա ձիերի ջուկերն արածում ելին կանաչագարգ մարգագետիններում, սևաբաշ և ձերմակնժուլգները վազում ելին արագ, խրխնջում, մեծ ու սպիտակ ատամները բացած և հուժկու աքացիները պատրաստած՝ ախոյաններին մարտի հրավիրում:

Մուքել աղալի հյուր լեկած լեղբոր վորդիները նըստում ելին ալդ արագավազ նժուլգները և դաշտի խոտհարքներում մորի քաղող ջահել հարսների ու գեղջուկ պատանիների վրա արշավում:

Քաղվորները փախչում ելին նրանց ձիերի առջևից և արշավողների մտրակների հարվածներին արժանանում:

Մեծ եր աղալի փառքը, անսահման ելին նրա հարստությունները:

Նա քանդեց հին դղյակը և նոր հոյակապ պալատներ շինեց:

Նա գցեց խնձորի, տանձի, դեղձի ալգիներ, իր պալատների շուրջն ակացիներով, սոճու և լեղեմու ծառերով զարդարեց:

Աղան հարստացավ, շատ հարստացավ:

Նրա տնունը թնդում եր ամբողջ գավառում և հեռու ու բարձր սարերի ալն կողմն անցնում:

Այսպես մեծ եր նրա տնունը, մեծ եր նրա փառքը:

15

Աքսորված աղաները փախան Սիրիից և սարերում թագնվեցին:

Իմացան ալս գլուղացիները և շատ ու շատ ուրախացան:

Նրանք իրենց դռները բացում ելին լեկվորների առաջ,

կարոտած ճակատները համբուրում և պատիվներ տալիս:
Բոլորը սիրում էին նրանց:

Ամբողջ գավառը նշանց անուշով էր լերդվում:

Մարդիկ իրենց նորելուկ մանուկներին նրանց անուշով էին կոչում:

Նրանք փախել էին հեռու Սիրիւրից, վոր թշնամիներից վրեժները լուծեն:

Մի գիշեր էր, զիվական մի մութ գիշեր:

Տղերքն իջան սարերից և գիմեցին գեպի աղալի կալվածքը:

Արշակն արգեն կաշառել էր աղալի ծառաներին և շները կապել տվել:

Աղան պատրաստվում էր քնելու, լերբ տղաները մըտան ներս:

Զարմացավ աղան սաստիկ և ցանկացավ լեկողներին շողոքորթել:

— Բարև ձեզ, Ավագ, Առաքել, Կարո, — ժպտաց նա, — եզ լերբ եք լեկել: Յեվ ի հարկե շատ լավ եք արել, վոր լեկել եք ինձ մոտ: Ասենք՝ լես ինքս պիտի գալի, վոր ձեզ հետ հաշտվեմ: Զեմ ուզում խռով գերեզման իջնել:

Միևնույն ժամանակ, նա ձեռքը տարավ բարձի տակ, արագ հանեց աչնտեղից իր ատրճանակը, ուզեց խփել առջևում կանգնածին, բայց Ավագն անմիջապես թափով խփեց նրա գլխին: Աղան ուշադնաց ընկավ գետին:

Ավագը նրան մեկ էլ հասցրեց.

— Թողեք ինձ, վոր դրան ալյուր ու աղցան շինեմ, — բղավեց Կարապետը:

— Բա լես ինչ անեմ, — ասաց Արզումանը: — Դրա համար չէր, վոր Սիրիւր հասանք: Յերգվել եմ, վոր դրա սերունդը չնջեմ, ապա նոր իջնեմ գերեզման:

Իսկ Առաքելը խփում էր, հա խփում: Սողոն, Հակո-

բը, մյուսները, հարվածներ էր, վոր տեղում էին: Աղալին քաշեցին, քաշքշեցին, ապա հեգնությամբ ու ծաղրով դիմեցին նրան.

— Ե՛յ, Մուքել աղա, ահա լեկել մտել ենք տունդ: Դե ցույց տուր վոսկուդ սնդուկի տեղը, թե չե բոլորովին կսպանենք:

— Աման, ձեզ մատաղ, լես վոչ վոսկի ունեմ, վոչ արծաթ, — սկսեց աղերսել Մուքել աղան: — Թողեք ինձ: Հերիք է:

— Շատ լավ, — ասացին տղերքը խմբով և շարունակեցին նորից իրենց տուրուղմփոցը:

— Հիսի ունեմ:

— Աման, ձեզ լինի, — սարսափեց Մուքել աղան՝ տեսնելով մահն իր աչքի առաջ: — Սարերն ու ձորերն ել ձեզ, անտառն ել, դաշտերն ել, միայն թե մի սպանեք...

Բայց տղերքն ալյուս չեցին լսում նրան, տալիս էին, խփում ջախջախում:

Աղան ալյուս ցավից չեր գոռում, ալյ միայն հազիվ հազ շնչում էր և նվում:

— Գնացեք տարեք, — հազիվ շշնջաց Մուքել աղան մի քիչ հետո: — Ներքնատան դռան մոտ գետինը փորեք, ետեղ եմ թաղել կճուճով վոսկին: Ել ինչո՞ւ եք սպանում, ախպեր, ձեզ ինչ եմ արել:

— Մեզ ինչ ես արել, — գոռաց Ավագը: — Ել ինչ մնաց... Քանիսն են զրկված չոր քարին նստել, քանիսն են անդի արցունք թափել, քանիսն են դռը վողբացել, վիզները ծռած խեղճ մնացել, քանիսն են ձեռքները կրծքներին խաչել, լեկել քո վոտքը համբուրել, բայց դու քշել ես նրանց քո դռնից և մարել նրանց ոջախները: Շատերն ել թողեցին գլուղը, ցիր ու ցան լեղան, հեռացան, իսկ դու փառքով մեծացած, փորդ տուուգ, կողքիդ

գլուղերը դարձրել ես քո գերին և դեռ ասում ես, թե՛
ինչ եմ արել...

Յեվ Ավագը մեկին աղալի մոտ թողնելով, մյուս-
ների հետ իջավ ներքնատուն՝ վոսկին հանելու:

Տղերքը փորեցին, շատ խոր փորեցին, և իրոք, վոս-
կին գտան: Լցրին խուրճիկները և ապա բարձրացան Մու-
քելի մոտ:

Մուքելը հասկացավ նրանց վորոշումը:

— Խնայեցեք, — ասաց նա, — ի սեր աստծու, թողեք
կենդանի, վաղը հեռանամ եստեղից, ես լերկրից, ել լեռ
չգառնամ:

— Լավ ես խոսում, աղա, — ասաց Ավագը, — աստծուն
հիմա հիշեցիր:

Նույն րոպեյին Սողոն մտրակը քաշեց և ուժգին
հարվածեց:

Վռնաց աղան, ընկավ և անշարժ մնաց:

Տղերքը տեսան նրան անշարժ, թողին, իջան բակ
և նստելով ձիերն շտապ հեռացան:

16

Գնում են տղերքը լայն ու ընդարձակ դաշտով:

Նրանց շուրջը խավար ե ու մութ:

Նրանք գնում են և մտածում Տեր-Հակոբ քահանայի
մասին:

Նրանք առաջ են ընթանում և նրանց հոգին մա-
շում ե մի անորոշ լերկյուղ:

Նրանք գիտեն, վոր արդարութունն իրենց կողմն ե,
լեթե կատարեն այդ վոճիրը, բայց չե՞ վոր լերկյուղած
գլուղացիները կարող են մեղադրել իրենց... ախր նա
իրավունք չուներ սուտ լերդում տալու և գլուղացիներին
դահճի ձեռքը մատնելու: Ո՛ր, նա հանցավոր ե, Մուքել
աղալից ել ավելի հանցավոր:

Մտածում ելին տղաները, և ատելությամբ, զայրույ-

թով, վրեժխնդրության ծարավով եր լցվում նրանց հո-
գին:

Այ՛ն, նա պիտի մեռնի: Նա իրավունք չունի ապրե-
լու:

Չե՞ վոր ինքն ունի բազում հարստություն և ամեն
կողմից հարստությունը աղբյուրի նման հոսում ե նրա
տունը: Քանի՜-քանի՜ հոգի լեն նրան տոկոսներով փող
պարտք, վորոնք տարին տասներկու ամիս աշխատում
են նրա դռանը և նրա հարստությունը շատացնում:

Այ՛ն, նա պիտի մեռնի:

Այսպես մտածում ելին տղաները, մինչև հասան
այն գլուղը, ուր ապրում եր Մուքել աղալի սանահայր
Տեր-Հակոբ քահանան:

Նա քնած եր իր մեծ, նահապետական տան մեջ՝
վորդիներով, հարսներով և բազմաթիվ մեծ ու պստիկ թու-
ներով շրջապատված:

Տղաները մի քիչ խորհրդակցեցին և իրենց հետ վեր-
ցրին գլուղի ծայրին ապրող մի գլուղացու:

Նրանք մոտեցան դռանը և բաղխեցին քահանայի դուռը:

— Ո՛վ ե, — ձայնեցին ներսից:

— Ասա՛ հիվանդ ունենք, մեռնում ե, — թելադրեց
տղաներից մեկը:

— Յես եմ, տերտեր, Թորոսանց Ղուկասը: Կնիկս
մեռնում ա, հաղորդ ա ուզում, — ասաց գլուղացին:

Տղաները շնչացին:

— Մենք կբարձրանանք վերև: Բեր այն կողմը:

Նրանց ձայնը լսեց տերտերի փոքր հարսը, մոռա-
ցավ ամոթը և ասաց.

— Բեվախտ ե, տերտեր: Անձանոթ ձայներ են լըս-
վում:

Տերտերը սաստիկ զայրացավ նրա հանդգնության
վրա և գոռաց.

— Սե շունը քեզ բերանբացե՞ք տվի, վոր խոսում ես:
 Ամաչեց հարսը և լռեց:
 Ամաչեցին խոսել նաև մյուս հարսները, վորոնք
 նույնպես վատ բան էին գուշակում:
 Յելավ տերտերը և գնաց բախ:
 Կանչող գյուղացին դողում էր, նրա ատամները
 կափկափում էին, կարծես տնդելիս լիներ:
 Նկատեց այդ բանը քահանան և հարցրեց.
 — Դու լե՞լ ես հիվանդ, վորդիս:
 — Յե-ե-ե, — կմկմաց գյուղացին և շարունակեց. —
 Ձե-չե-չե... Կնիկա ա մեռնում:
 — Դե վոր այդպես ե, գնանք, — շտապեցրեց տեր-
 տերը:
 Նրանք գնացին:
 Անկյունի լեռնից դուրս լեկան տղաները և քահա-
 նային բարեկցին:
 Չճանաչեց քահանան լեկողներին, բայց ահաբեկվեց
 և ասաց.
 — Դ՞նք ով եք, վորդիք: Ձեզ չեմ ճանաչում:
 Շուտով կճանաչես, — պատասխանեցին տղերքը:
 Գյուղացին սարսեց, և նրա ատամները սկսեցին ա-
 վելի ուժգին կափկափել:
 Նկատեցին տղերքն այս և նրան ուղարկեցին իր
 տունը:
 Մնացին տղերքը և քահանան:
 Տիրեց խորը լուռություն:
 Քահանան հասկացավ ամեն ինչ և զարհուրեց:
 Տղաները նկատեցին այս և մի քիչ վարանեցին:
 Առաջինը խոսեց Սողոմ:
 — Հաղորդը բերե՞լ ես, տեր հայր:
 — Այո, վորդակս, — շշնջաց քահանան:
 — Դե հաղորդվիր:

Քահանան լռեց:
 — Հաղորդվիր, — կրկնեցին տղերքը:
 — Ինչո՞ւ, — մրմռաց վախից քահանան:
 — Վորպեսզի այն աշխարհը մեղքերով չգնաս:
 — Յես մեղքեր չունեմ, — կերկերուն ձայնով ասաց
 քահանան:
 — Ունես, ավելի շատ ունես, քան վորեւ մեկը:
 — Յես հայր եմ լեղել բոլորիդ համար, — շարունա-
 կեց քահանան:
 — Այդ բոլորը գիտեն:
 — Իմ հոգին մաքուր ե ժողովրդի և ասածու ա-
 ռաջ, — ասաց քահանան:
 Տղաները ծիծաղեցին:
 — Այո, լես քրիստոսի ծառան եմ և իմ հոտի հովի-
 վը, — շարունակեց քահանան:
 — Դրա համար ել վոչխարներիդ խուզում ես և գայ-
 լերի բերանը տալիս, — ասացին տղերքը:
 — Յես արդար եմ:
 — Վոր դու արդար ես, բա ո՞վ ե մեղավոր, Հակոբ
 քահանա, — բղավեց Արզումանը և հրացանը լցրեց:
 — Վորովհետև դու արդար ես, լեղել ես բարի և ազ-
 նիվ հովիվ քո հոտի համար, դրա համար ել մենք քեզ
 Մուքել աղայի պես չենք չարչարի, — Արզումանի խոսքը
 շարունակեց Ավագը:
 — Նա մեռած ե, — ակամա ինքնաբերաբար ասաց
 քահանան:
 — Վոչ: Ժամ ու կես առաջ գնաց ի վերին Յերու-
 սաղեմ և բազմեց հայր Աբրահամի ձախ կողքին, իսկ
 դու ել, վորպես հոգեվոր հայր, պիտի բազմես նրա աջ
 կողքին:
 — Հեռացրեք այդ բաժակն ինձանից, վորդիքս, —
 աղերսազին ձայնով խնդրեց քահանան:

— Ձենք կարող, պիտի խմես, հալը Հակոբ, տերն ինքն
ե վորոշել այսպես:

— Հեռացրեք այդ բաժ....

Հրացանը վորոտաց, և քահանան ընկավ:

Տղաները հեծան իրենց նժուզները և բարձրացան
միմյան սարերը:

17

Վաղ առավոտյան, Մուքել աղալի և տեր-Հակոբի
սպանության լուրը կայծակի արագութեամբ տարածվեց
շրջակա գյուղերում և հասավ դաշտի քաղաքը:

Հավաքվեցին մարդիկ և գնացին սպանվածներին
տեսնելու:

Շատերը հրճվում էին իրենց հոգու խորքում, բայց
աշխատում էին տխուր լերևալ:

Յեկան աղալի բարեկամները, վորոնք իրենց հետ
կազակներ և բժիշկներ բերին:

Բժիշկներն անդամահատեցին սպանվածների զիակ-
ները և հեռացան:

Աղալին տարան իր հայրենի ավանը և լեկեղեցու
բակում, իր հոր կողքին, թաղեցին:

Շրջակա գյուղերից հավաքվեցին բազմաթիվ քահա-
նաներ, վորոնք մեծ ծեսով և լեկեղեցական արարո-
շութեամբ իրենց գյուղի լեկեղեցու բակում թաղեցին Տեր-
Հակոբին:

Սարսափն ընկավ կալվածատերերի և սուտ լերդում
ուսողների մեջ:

Տղաները ճանապարհներին բռնում էին վաշխառունե-
րի և թավաղների վորդիներին, տանում սարերը և ծնող-
ներից մեծ փրկանքներ վերցնելուց հետո միայն բաց թող-
նում:

Նրանք իրենց մոտ լեղած դրամներն իսկույն բաժա-
նում էին չքավորներին և հարստահարվածներին:

Մեծանում եր հարստահարողների սարսափը:

Նրանք ահազանգում էին կենտրոնին, վոր կառա-
վարութունն շտապ միջոցներ ձեռք առնի:

Կառավարութունն ուղարկում եր վոստիկաններ և
կազակներ, վոր աղաներին ձերբակալեն:

Բայց գնացողները վախենում էին նրանցից, գյու-
ղերի շուրջն էին պտույտ գալիս և շտապ վերադառնում:

Տղաները սարերից զարկում էին թավաղների որա-
ները, ավերում, շները և խոյերը կոտորում, ապա իջնում
դաշտ, խոտերը, լեզրները հրդեհում, մեղունների փե-
թակները քարերի գլխից ձորերը նետում և աղաներին
սարսափի մատնում:

Մեծ եր աղաների սարսափը, մեծ եր և նրանց լեր-
կուղը:

Նրանք մարդիկ ուղարկեցին մեծ Քաղաքը և խնդրեցին
աղերսագին, վոր «ղաչաղներից» իրենց ազատեն:

Լսեցին նրանց մեծ մարդիկ և կազակներ ու զորքեր
ուղարկեցին:

Յեկան զորքերը, ամենուրեք բանակ դրին, բայց
աղաներին չգտան:

Նրանք թագնավել էին ծմակների միմյան ալերում:

Մոլորվել էին աղաները և չգիտեցին, թե ինչ ա-
նեն:

Գյուղացիները լուր էին տանում աղաներին և հաց
հասցնում:

Այս բանը թավաղները և լերկու գյուղի զավաճանները
հայտնեցին կառավարութան և դրա համար գյուղերը
զորքերով լցրին:

Չորքերը քանդում էին գյուղերը, «ղաչաղների»
բարեկամներին և հաց տանողներին ձերբակալում:

Ահաբեկվում եր ժողովուրդը:

Մի ուր կրկին բերեցին նոր զորքեր և կազակներ,
վոր սարերը բարձրանան:

Նրանք հայտնի նշան խփողներ ելին:

Մատնեցին դավաճանները տղաների տեղը և կազակները, զորքերն ու լեզգի վորսկանները սարերը լեւան:

Նրանք պաշարեցին ամբողջ սարերը և պատրաստվեցին հարձակման դիմել:

Իմացան տղաները, մտան ծմակի մթին ալրերից մեկը և այնտեղ ապավինեցին:

Նրանց ալրի առջևում մի կիրճ կար՝ դարավոր ծառերով պատած, անանցանելի:

Վորսորդական շները հոտոտում ելին գետինը, դուռնշները վեր ցցում, կլանչում, լերկար ականջները վեր ու վար անելով ցատկում առաջ և վորսորդներին հրավիրում մթին ծմակների խորքերը:

Չորքերը բռնել ելին բոլոր արահետները և վորսորդական շների նման հսկում ելին:

Կլանչում ելին բարակները և անտառները զնդզնդացնում:

Խրխնջում ելին լերիվարները և վոտքերով գետին դոփում:

Կազակներն ու վորսորդները գնացին դեպի շների հաջոցի կողմը:

Տղերքն իմացան շների և խոսակցող մարդկանց ձայներ:

Նրանք համբուրվեցին իրար հետ և պատրաստվեցին մարտի:

Նրանց ալրում փանփուշտ շատ կար:

Նրանց ալրը նմանվում եր զինանոցի:

Շների ձայնը մոտենում եր:

— Պիտի գտնեն անպիտանները, — շնչաց Սողոն:

— Այն համաձայնվեցին տղերքը և տեղներն ամրացրին:

Մոտենում ելին և վորսորդների ձայները:

Շները հոտոտելով հասան ալրի դռանը:

— Անպիտանները գտան, — շնչաց Ավագը և ուղեց կրակել:

— Մ'ս'ս', — շուռկով ասաց Սողոն՝ բռնելով նրա թեփոց:

— Սպասիր տեսնենք, թե ինչ ե լինելու:

— Գուցե չգտնեն, — ավելացրեց Արզումանը:

Շները բարձրացան ալրի վերևի քարաժայռերը և սկսեցին կլանչել:

Կիրճից մի քանի քալ հեռավորութան վրա, լեզգի վորսկանները և կազակները դիրք մտան:

— Կորանք, — շնչաց Հակոբը:

— Գուցե չեն գտնում, — փսփսուելով ասաց Առաքելը:

— Չորս կողմից պաշարված ենք, — ասաց Արզումանը և նրա աչքերը փալատակեցին:

— Մահ, տղաների պաշտպաններին, — ատամները կրճրտացնելով վորոտաց Ավագը և հրացանն ուղղեց ալրի դռանը մոտեցող կազակի կողմը:

Կազակը լերերաց և ընկավ:

— Այդ մեկ, — կանչեցին տղերքը: — Թող գան:

Մոտեցող վոտնաձայներն ու շրջուները հեռացան:

Շներն սկսեցին քառաժայռերի գլխից աղիողորմ կլանչել ու վոռնալ:

— Այ, ալը շները, — ասաց Հակոբը:

— Դե բոլոր լեկուղները շներ են, ելի, — պատառխանեց Ավագը:

— Եստեղից ել վոր պրծանք, ալլես մեզ մահ չի լինիլ, — ասաց լուակաց Կարապետը և նկատելով ծառերից մեկի լեռնում դարան մտած ամենաքաջ վորսորդ լեզգուն, տղաներին ցույց տվեց:

Լեզգին ծառի լեռնից հանեց գլուխը և ուզեց նայել մթին այրի խորքը:

Բոլոր հրացանները վորոտացին միասին, և լեզգի վորսորդն ընկավ:

— Այդ ել լերկո՛ւ — կանչեցին աղերքը և հրացանները կրկին լցրին:

Դրսում ձայները սաստկացան, և շները կրկին սկըսեցին վռնալ և կլանչել:

Պաշարողները բարձր համարեցին այլևս չհարձակվել և աղաներին քաղցով նեղել:

Անցավ մի քանի ժամ և վոչ վոր այլևս հրացան չեր արձակում:

Տղաները սպասում էին հարձար վարկյանի, վոր լերեկոյան ճեղքեն թշնամու շղթան և անցնեն մյուս ա-րերը:

Լեզգի վորսորդներն ու կաղակները հսկում էին մի քանի հարյուր քայլ հեռավորութան վրա և խուզարկու հայացքով նայում իրենց շուրջը:

Տղաները մտածում էին, և նրանց մտքերը թռչում էին դեպի իրենց տները:

Մտածում եր Ավագը: Ահա իրենց հնամենի տունը, ուր ապրում ե իր ընտանիքը: Ի՞նչ անի խեղճ ծերունի հայրը: Ուրիշների վորդիները գնում են քառասուն վերստ դենը, բարձր ու կապույտ սարերի այն կողմը և կիսովի ուրիշ կալվածատերերի հոգեր են վարում և ընտանիքը պահում, իսկ նա այդ ել չի կարող անել:

— Ո՛հ, ծանր ե, ծանր, — ակամա շշնջաց Ավագը և կրկին մտքերը պաշարեցին նրան:

Այս անգամ լերեաց ծերունի Պողոսի վորդին՝ Արշա-կը, վորի հետ նստել էին լերկու գլուղի ծերունիները, իր հայրը և միասին ծխում էին:

Նրանց ծխամորճներից և ուռնգներից ծուխը պալան-պալան բարձրանում ե վեր և բռնում հնամենի օդան:

Նրանք խոսում են, հիշում իրենց սիրելի զավակ-ներին և իրենց չարքաշ վիճակը:

Ավագը հիշեց իր պառավ աղիին, վորն իր զավակին ամեն անգամ հիշելիս արտասվում ե, թաշկինակը դնում ե աչքերին և դառնորեն հեկեկում:

Հարևանի հարսները ընկնում են նրա թևերի տակ, բարձրացնում և տանում թախտի վրա պառկեցնում:

Խեղճ պառավ աղի: Դժբախտ կին:

Ապա Ավագին լերեաց իր ջահել կինը՝ գարունքի նման գեղեցիկ և փարթամ: Կարծես կարկուտը տվել եր նրան, նրա կյանքի ծաղիկները թափել, կանաչ տերե-ները և ճուղերը ջարգել, փչացրել:

— Խեղճ աղջիկ, կյանքը կապեց ինձ հետ, դժբախ-տացավ:

Ահա լերեաց իր մանկիկը, մատղաշ, ձեռքերը ճրագի և արևի լուսին պարզող, արև ժպիտը դեմքին նայում ե սիրող մորը, փամփրկել թաթիկները շալպեցնում մայրիկի այտերին, կարկաչահոս աղբյուրի նման զվարթ ձայնում և գիշերվան աստղերի պես ժպտում:

Խեղճ, անմեղ մանկիկ... Կմեծանաս վորպես վորք և կերթաս չար աղաներին նոքար կդառնաս, կանիժես քո հորը, աղայի համար կաշխատես տարին տասներկու ա-միս և դրա փոխարեն վոչինչ չես ստանա:

Դժբախտ մանկիկ...

Ճմվեց նրա սիրտը ցավից և մի կատաղի զայրույթ իջավ նրա վրա:

Մտածում եր նաև Արզումանը:

Նրա աչքի առաջ պատկերացավ մեռնող հայրն իր սարսափելի մահով և անասելի տանջանքներով:

Նա ևս տանջվում եր և մտածում իր դուռը փակ ֆացած տան մասին:

Մտածում էին Հակոբը, Սողոն ու մյուսները:

— Այս գիշերը գենքով ճանապարհ պիտի բացենք, թե չե սրաք մեզ այստեղ սովամահ կանեն,—ասաց Ավագը:

— Սովը վոչինչ: Սովին կղիմանանք, բայց ծառավին զիմանալ չի լինի,—պատասխանեց Սողոն:

— Այս գիշերը պիտի վորոշվի մեր բախտը,—ասաց Արզումանը:

Տղաները վորոշեցին սպասել, մինչև մթնի:

Սաղափն ժամերը սահում ելին դանդաղ և կապարի նման ճնշում նրանց սրտերը...

Յերեկոն մոտեցավ:

Նախիրները բառաչելով գնացին դեպի բինաները:

Յեղնիկի նման շահել աղջիկները գնացին շուր բերելու:

Սարվորուհիները լեռոտանի մահիկաձև փոքրիկ աթոռները, կովկիթները դուրս բերին դադաներից, հորթերն ու գոմշաձագերը կապեցին փայտյա բրեքից, սկսեցին մեկը մյուսի լետևից հորթերը մեր տալ, փշփշալով կթել և կաթով լի դուլերը տանել դադաները:

Այդ յերեկո բոլորի հոգին տանջում էր մի ցավ, մի անասելի վիշտ:

Նրանք կթում ելին և յերբեմն մոռանում կիթը, հորթերի կամ գոմշաձագերի թուկերն արձակում, ծծեցնում:

Այդ որն անծանոթ մարդիկ ելին գալիս և ձիեր հեծած սարալանջերով հեռանում:

Սարվորների վիշտը կրկնապատկվում էր:

Նրանք վոչինչ ասել կամ անել չեղին կարող:

Սարվորուհիները միայն չանչ ելին անում նրանց լետևից, իսկ տղամարդիկ ատամների արանքից գնացողների հասցեյին միայն հայհույանք ելին շարտում:

Հեռվից լսվում ելին ձիերի խրխինջներ, շների հաշոց և յերբեմն ել՝ արահետներով գնացող-դարձող մարդկանց խոսակցության ձայներ:

Յերեկոն վառեց իր յերկնային շահերը:

Նորածին լուսինը, վորպես հսկայական պղնձե արնագույն սկավառակ դուրս լեկավ լեռների թիկունքից, հետգնետե փոքրացավ, բարձրացավ վեր, յուր խորհրդավոր և հմայիչ հայացքով նայեց արար-աշխարհին:

Սարերը, քարերը, ձորերը խորհրդավոր տեսք ստացան:

Հեռվից մի սև ամպ դանդաղ լեկավ և ծածկեց լուսնի ղեմքը:

Լուսինը խորհրդավոր ժպտաց, յուր արծաթե շողերը հավաքեց լեռնաշխարհի յերեսից և թագնվեց ամպերի լետև:

Տղաները վորոշեցին մեկ-մեկ և յերկու յերկու դուրս գալ իրար լետևից և մանել անտառի խորքը:

Սկզբում դուրս լեկան Սողոն, Հակոբը և ապա Կարապետը:

Շներն աղմկեցին և հրացանների վորոտները թընդացրին սար ու ձոր:

Ծմակները և քարանձաղները զնգզնգում ելին շների ձայնից:

Տիրում էր անասելի աղմուկ և ժխոր:

— Մերոնց կոտորեցին,—կանչեց Ավագը և հրամայեց կրակել թշնամիներն կողմը:

Փախչող տղաներն անցան անտառի ծառերի միջով, վերավոր, հեվասպառ:

Նրանք դուրս լեկան զիմացի բացատն ու աշխատեցին կրկին մանել անտառը:

Բայց դարան մտած վորսորդները նկատեցին նրանց սև կերպարանքները և նշան բռնեցին:

Հրացանները կրկին ու կրկին վորոտացին, և փախչողներն ընկան արնաշաղախ, վոմանք միայն վերավոր:

Կազակները վրա հասան և սվիններով նրանց շամփրեցին:

— Կոտորեցին, անպատճառ կոտորեցին, — շնչաց
Ավագը և բղավեց:

— Տղերք, վերջին կռիվն ենք տալիս, պատրաստ լե-
ղեք: — Լավ ե ազատ մեռնել այս սարերում, քան նա-
մարդ թշնամու ձեռքը ընկնել, վորը թեմներս մեջքներիս
կապած, ձիերի առաջն արած, կըշի ստրուկների պես և
ծաղր ու ծանակի կենթարկի:

Այլի գլխից լավեց մի ձայն:

— Անձնատուր լեղեք, վոչինչ չենք անի:

Տրվում ե ձեզ տաս րոպե ժամանակ, վորից հետո
այլևս ձեզ փրկութուն չի լինի:

Տղաները նստեցին խորհրդի:

— Մեզ փրկութուն չկա, — կրկին հնչեց Ավագի ձայնը:

— Մեզ կձերբակալեն և մենք նորից բանտից
կփախչենք, — ասաց Արզումանը:

— Մեզ կենդանի տեղ չեն հասցնի, — կրկին առար-
կեց Ավագը:

— Մի գուցե չեն սպանում, — ասաց սակավախոս
Առաքելը:

— Մի գուցեից բան չի գուրս գա, — նկատեց Ավա-
գը:

Նույն րոպեյին քարաժայռերի վերեւից մի ուռմը
նետեցին այլի առջևի խիտ ծառերի մեջ:

Ռումբը պայթեց, ձորերը կրկին զղրդացին, ծառե-
րից շատերը ճղակտոր լինելով, շառաչով ընկան վար:

Դեռ լավ եր, վոր քարայրը ծառերի խորքումն եր:

Մի խումբ սովերներ մոտեցան:

Տղաները կրակեցին:

Մի քանի հոգի հառաչանքով ընկան վար:

Մնացածներն արագ հեռացան:

Այլի ամենաբարձր ժայռերը նորից գղրդացին և
նոր վորտաղնդոստ ձայներով լցրին անտառները:

Հակառակորդներն ուզում ելին քարաժայռերը պայ-
թեցնելով հասնել այրին:

Տղաներն ամեն ինչ հասկացան:

Հապաղումը կկործաներ ամեն ինչ:

— Տղաներ, առաջ, — կանչեց Ավագը և խոչացավ
դեպի լեկող կազակներն ու վորտաղ լեզգիները:

Յերկու կողմից ել հրացանները վորտաղին, թշնամի-
ներից մի քանիսը, ապա սղաններից Արզումանն ու
Առաքելն ընկան:

Ավագը նայեց ընկնող ընկերներին, իսկույն վրա
հասավ, գրկեց մեկ-մեկ, ուզեց ոգնել, բայց տեսնելով
նրանց մահը, համբուրեց նրանց սառչող շուրթերը, ապա
արագութամբ հանեց դաշույնը և խրեց առաջ լեկող կա-
զակի կուրծքը:

Սակայն այդ միջոցին հասան մի քանի կազակներ և
նրա կողը շամփրեցին:

Ավագն ընկավ:

Հաղթողները իսկույն վերցրին նրանց դիակներն և
տարան դաշտի քաղաքը:

Վոճրադործները ստացան մեծամեծ նվերներ:

Լսեցին այս՝ սարվորները, և բոլոր կայծույնը ողա-
գութամբ տարածվեց ամենուրեք:

Վողբացին նրանք ընկած հերոսների վախճանը:

Կապույտ սարերի հովիվները հանեցին սրինգներն
իրենց գոտիների տակից և սկսեցին սարերի լանջերին
քամել իրենց սրտի ցավերն ու կսկիծները:

Նրանք նվագում ելին:

Վոչխարի ձերմակ հոտերը կանգ ելին առնում, մո-
ռանում արածելը և լսում սրինգների մեղամաղձոտ հըն-
չուհները:

Հովիվները նվագում ելին:

Սարերից անցնող ճամբորդները կանգ ելին առնում

իրենց կես ճանապարհին և լսում սրինգների դառը հնչյունները, ցավոտ թրթռումները:

Սարվորները վողբում ելին դադաներում, հեկեկում, լերգեր հյուսում, գովում ընկած հերոսներին և լալիս նրանց լեզերական վախճանը:

Վողբում ելին գլուղերի չարքաչ գլուղացիները, անիծում ցարին, կազակներին, լեզզի վորսորդներին, վորոնք խլեցին նրանց ջահել-ջիվան կյանքերը և սև հողի գիրկը տարան:

Աշուղները վերցնում ելին իրենց տխրանվագ սազերն ու քամանչաները, շրջում գլուղից գլուղ, տնից տուն, լերգում սարի արծիվ հերոսներին, նրանց արշավները թավաղների բինաների, կալվածքների վրա և նրանց արդար ցասումը:

Յերգում ելին աշուղները, զարկում սիմերին և քամանչաների լարերից խորն ու ցավատանջ հառաչանքներ հանում:

Լսում ելին բոլոր գլուղերը, ունկնդրում նրանց ձայնին, ուրախանում հերոսների հաղթանակով և նրանց լեզերական մահը վողբում:

Նրանք լսում ելին աշուղներին, վորոնց ձայնի հառաչանքները տարածվում ելին ամեն տեղ, արցունքի հեղեղներ հոսեցնում նրանց աչքերից և նրանց սրտի լարերը թրթռացնում:

18

Յեկավ Մուքել աղալի լեզբալը՝ Յեգոր աղան և մշտապես հաստատվեց կալվածքում:

Նա ևս խորամանկ եր ու հեռատես:

Նա ևս աշխատում եր հին ու նոր բարեկամներով շրջապատել իրեն և իր թիկունքն ամրացնել:

Գլուղացիներն ալլևս հուլա չունեին, վոր հողերը կրկին կարող են գրավել:

Նրանք տեսան, վոր թավաղների թիկունքում կանգնած ե ամենակարող թագավորն իր մեծ ու փոքր աստիճանավորներով ու զորքերով:

Նրանք հասկացան, վոր իրենց համար կբացվի մի դուռ այն ժամանակ, լերբ կջախջախվեն բռնակալության շղթաները և ժողովուրդներն ազատ շունչ կքաշեն:

Նոր աղան ևս շատ լավ գիտեր, թե ով ե կանգնած իրենց թիկունքում:

Նա բազմել եր կալվածքում, վալլում եր խաղաղ ու անդորր կյանք և ցանկանում եր իր կյանքի վերջին լերջանիկ տարիներն այնտեղ անցկացնել:

Նա ևս ավելացնում եր նորանոր ալլիներ և նրանց շուրջը սոճու, լեզեփու, կաղնու և լորենու ծառերով զարդարում:

Նա շինել եր տալիս գեղեցիկ ծառուղիներ, մոռի, կոկոռչի, մոշու և վարդենու թփերով զարդարում տներին մոտ գտնվող ծառերի շուրջը, ապա շինում շատրվաններով ավազաններ և նրանց մեջ վոսկե ձկներ լցնում:

Գարունը բացվելուն պես, Յեգոր աղալի ալլիներում, անտառներում, ծործորներում և ամենուրեք, ձյան տակից լեւնում ելին սպիտակ ձնծաղիկները, ապա կապուտաչա մանուշակները, վորոնք գաղտապողի ժպտում ելին թփերի տակից և բուրում:

Մալր հողի կրճքից լեւնում ելին նաև մլուս գարմանագեղ ծաղիկները, որորում իրենց գլխիկները, լուսընկա գիշերներին ժպտում աստղերին, մարգարտե ցողով զարդարում իրենց գուլնգգուլն թերթիկները, որորվում, կրկին ժպտում լեռների թիկունքից առավոտյան լեւնող զվարթուն արևին:

Աղալի ալլիների շատրվանները ցայտում ելին դեպի վեր, դեպի լուրթ լերկինքը, ադամանդներ թափում վերևից և անվերջ աղմկում:

Վոսկե ձկները վտառներով լողում ելին հեքիաթական ավազաններում, արևի վոսկե ճառագայթներով փալլ արձակում ջրերի մեջ, սուզվում և բարձրանում ջրերի կապույտում:

Ճերմակ հոտերը շարան-շարան բարձրանում ելին սարերը և ծածկում մանիշակագույն լանջերը:

Հովիվները կրկին հանում ելին իրենց սրինգները և կրկին նվագում:

Նրանց ունկնդրում ելին սարերի և ձորերի ծերպերին բուռն դրած կաքավները, կվկվում և ձայնակցում:

Սարերը զարթնում և կենդանանում ելին:

Իրար լեռնից զարթնում և կենդանանում ելին ձյան լանջերի քնից հորանջող գլուղները:

Միմյանց լեռնից գլուխներն աղմկելով դուրս ելին գալիս դաշտ և սկսում աշխատել:

Հնչում եր գլուխանավորների լերզը: Նրանք լերզում ելին և նրանց ձայնի լելկելները տարածվում ելին հեռու, մինչև աղալի գեղեցիկ այգիները, մինչև ճերմակ և վարդագույն ապարանքները:

Մեծ աղան և նրա վորդիները և պերճափալլ, փափկասուն խանութները լսում ելին նրանց ձայնը, լերբեմն ունկնդրում և լերբեմն ել արհամարհանքի խոսքեր շրջվրտում լերգողների հասցեին:

Գլուխանավորները վարում ելին և լերզում:

Նրանց լերզը լերբեմն ընդհատում ելին փոքրիկ հոտաղները, իրար հետ ընդհարվում՝ դժգոհելով միմյանցից, թե ինչու լե հակառակորդը ծեծում իրենց լեզներին, կամ մշտապես ալոոս, սածիլ և սածկեփ լծում:

Վրդովվում ելին մաճկալները և ամեն ինչ կարգի բերում:

Նորից հնչում եր լերզը:

Յերզում ելին հոտաղները լծներին նստած, և ծերու-

նի մաճկալ Արշակը մի ձեռքը դնելով ականջին, մյուս ձեռքով բռնելով մաճը՝ իր հաստ ձայնով ձայնակցում եր նրանց, պատմում իր վիշտը, իր խոկումներն ու իր բազում տանջանքները:

Ջահնները նույնպես, լերզում ելին:

Գալիս եր առավոտյան հացի ժամանակը: Նրանք արձակում ելին գլուխներ, լծկանին խոտ տալիս, իրենք նստում հացի, ուտում, կատակներ անում, լծկանը տանում գետը, ջրում, բերում, լծում և նորից վերսկսում աշխատանքն ու լերզը:

Գալիս եր ճաշի ժամանակը, կրկին արձակում ելին լծկանը, կրկին կերակրում, իրենք ել ճաշում, և փոքրիկ հոտաղներն աղմկելով, լծկանը տանում ջուրը, իսկ մաճկալները և հասակավորները պառկում ելին և մի ժամ հանգիստ քուն մտնում, իսկ հետո, նորից վերսկսվում եր աշխատանքը:

Գիշերներն անգամ, նրանք վարում ելին: Իսկ լերը վարը պրծնում ելին, սկսում ելին ցանել, մի ամիս հետո քաղհանել, կարտոֆիլի բուկը տալ:

Հետո սկսվում եր հունձը, ապա կալը, աշնան վարն ու ցանքը, անտառից փայտ կտրել, կրել...

Իսկ աղաները նստում ելին իրենց կալվածքում, վալելում բնության և մարդկանց ձեռքով ստեղծած սքանչելիքները, հարստանում, ճարպակալում և կրկին խնջուկներ սարքում:

Նրանք խմում ելին: Բաժակները շրխկում և զրնգում ելին աղաների և խանութների ձեռներում:

Գյուղացիները կրկին բերում ելին ականջները կրած գառներ, տկերով ողի ու գինի և փեշքաշ անում աղաներին՝ վորպես նշան իրենց «անխախտ սիրո» և «անսահման լերախտադիտության»:

Կալվածքի հողերի կառավարիչ Ավարյանը հավաքում

եր հողերի բահրան, նուան-հատ ցորենն ամբարները
լցնում, իսկ դեղին վոսկիները հնամյա սնդուկները:

Աղալի հողերի պահապանները, սև նժուլգներ հե-
ծած, թռչում ելին աղալի դաշտերով, արտերով, բլուր-
ներով ու լեռներով, տավարն ու վոչխարն աղալի սահմանն
անցկացնողների և փայտ գողացող գլուղացիների կաշին
մտրակներով վառում, կապտացնում, խորխահան անում
և բերում բանտարկում:

Յեվ իրար լեռից, գլուղացիներից գանձվող վոսկին,
ծլծլան աղբյուրի նման հոսում եր աղաների սնդուկները
և նրանց փառքն ու հարստությունը մեծացնում:

Ջահել աղաները գինովցած, նստում ելին իրենց
արագասուլը նժուլգները, կտրում դաշտի լայն տարա-
ծությունները, արշավում դաշտում մորի քաղող հարս-
ների, աղջիկների ու աղաների վրա, մտրակներով ծե-
ծում, լեղապատառ անում, բռնում գեղեցիկ հարսներին,
աղջիկներին և քարշ տալիս այդիները:

Աղաները հրհռում ելին և բերկրանքից խնդում:

Նրանք հրճվում ելին իրենց սխրագործություննե-
րով:

Նրանք լերբեմն իրենց ծառաների միջոցով խաբում
ելին քաղվորուհիներին, հրավիրում կալվածքի հեռավոր
այգիների մոռուտներն, իրենք թագնվում և հանկարծ,
դարան մտած վագրի նման, հարձակվում նրանց վրա և
հագուրդ տալիս իրենց անասնական ցանկություններին:

Ահա այսպես ելին ապրում աղաներն այն ժամանակ:

ՍՈՒՍՁԻՆ ՄՈՍԻ ՂԵՐՋԸ



Վ Բ Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Եջ	Տող	Տպված է	Պեսf Ե լիցի
3	7 ն.	հովիտն ծործորներով	հովիտն իր ծործորներով
4	8 ն.	հորտերին և	հորտերին և
5	8 վ.	թնդացրել են	թնդացրել
13	16 վ.	դուս	դուս
22	15 վ.	յելան	յելավ
22	16 վ.	գլխարկները վերցրեցին	գլխարկ վերցրեց
23	8 վ.	սկսեց նա	սկսեց նա և ապա շարունակեց:
24	10 ն.	Տեր-Վանկոյի	Տեր-Վանկոյին
26	11 վ.	բնակություն հաստատել	բնակություն և հաստատել
27	9 ն.	ստախոս մարդիկ	վոր ստախոս մարդիկ
28	7 վ.	գլուղից վկաները	գլուղացի վկաները
30	6 վ.	հշմարիտ եմ ասում	հշմարիտն եմ ասում
42	5 վ.	հողորդեց	հաղորդեց
54	5-6 վ.	Լյուբամուղով	Լյուբամուղով
55	1 վ.	իմ	մի
58	15 վ.	կայսր Լ-ի, սկզբանե	կայսր, ի սկզբանե
58	5-6 ն.	ժառանգները	ժառանգերը
59	1-2 վ.	հույսերն դերև	հույսերն ի դերև
62	7 վ.	յերկրորդ	յերրորդ
72	1 ն.	Հորթը ցուլ դեմեշի հետ	Հորթը ցուլ դեմեշի հետ լուծ
		չի քաշել	չի քաշել
73	2 ն.	Խայիլը	Խայիլը

Հրատ. 3898. Դրավիտի լիպոյր՝ Խ—9229 Պատվեր 933. Տիրած 3000.

Հանձնված է արտատրության 5/VII-37 թ.

Ստորագրված է տպագրելու 2/VIII-37 թ.

Թուղթ 62×94. Տպագրական մամուլ 6 1/4 մեկ մամուլ 30720 նիշ.

Հեղինակային 4 3/4 մամուլ.

[ՊԵՏԼՐԱՅԻ ՅԵՐԵՎԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65]



ՀՀ Ազգային գրադարան



NL0339358

26450